ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (102). 2019

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստում.

ձախից աջ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ *Տիգրան Սարգսյան,* Ղազախստանի Հանրապետության Վարչապետ *Ասկար Մամին,* Հայաստանի Հանրապետության Վարչապետ *Նիկոլ Փաշինյան,* Ռուսաստանի Դաշնության Կառավարության նախագահ *Դմիտրի Մեդվեդև,* Բելառուսի Հանրապետության Վարչապետ *Սերգեյ Ռումաս,* Ղրղզստանի Հանրապետության Վարչապետ *Մուհամեդկալիյ Աբիլգազիև*

Մոսկվա, 2019 թ. հոկտեմբերի 25

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Իտալիայի Նախարարների խորհրդի Նախագահ Ջուզեպե Կոնտեի հանդիպումը ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ բանակցությունների արդյունքների ամփոփմամբ

Հռոմ, 2019 թ. նոյեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (102). **2019**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Օհանյան Ս. Ռ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Ք. Գ. Ալմասյան, Տանկաշինության հեռանկարային զարգացման որոշ հարցեր 7

ՀԱԿԱՄԱՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Բ. Եգիկոլոպովա, Անհամաչափությունը որպես ռազմավարություն. անհամաչափ հակամարտությունների էությունն ու առանձնահատկությունները 20

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ն. Հ. Գրիգորյան, Խորհրդարանականության քաղաքական մշակույթը՝ որպես պետական կառավարման համակարգի արդյունավետության ապահովման կարևոր գործոն 28

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դ. Մ. Մանասյան, Նոր եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգի շրջանակներում Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացման հնարավորությունների ռազմավարական գնահատում 35

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ս. Ռ. Պապիկյան, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման հարցերը էներգետիկ անվտանգության տեսակետից 48

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թ. Ն. Մանասերյան, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական անվտանգության որոշ պրոբլեմներ 57

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ս. Օ. Աբրահամյան, Հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցության իրավական հիմքի որոշ առումներ 68

ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ա. Ն. Խաչիկյան, Բանակը որպես սոցիալական ինստիտուտ. ՀՀ ԶՈՒ-ի և զինծառայության նկատմամբ վերաբերմունքի և դրանց հեղինակության ապահովման պրոբլեմները 76

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Վ. Հ. Մարգարյան, Բնակչության բարոյահոգեբանական ապահովումը՝ որպես պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր բաղադրիչ 90

Ս. Մ. Բաղդասարյան, Ղեկավարի, հրամանատարի հուզական բանականությունը՝ որպես արդյունավետ կառավարման կարևոր գործոն 101

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ. Ա. Հարությունյան, Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին 111

Տանկերի մարտավարատեխնիկական բնութագրեր 121

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 123

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, *Հ. Ս. Քոթանջյան,* գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող), քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Վ. Տավարածյան, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Վ. Հ. Մարգարյան,* հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան,* ռազմական գիտությունների թեկնածու, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (102)**. 2019**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В.,
Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М.,
Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А.,
Оганян С. Р., Симонян С. В., Смбатян Н. В., Тер-Григорьянц Н. Г.,
Хачатрян Т. В., Шахназарян Т. Н.

СОДЕРЖАНИЕ

ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

К. Г. Алмасян. Некоторые вопросы перспективного развития танкостроения . . . . . 7 (18)*

КОНФЛИКТОЛОГИЯ

Н. Б. Ениколопова. Асимметрия как стратегия. Сущность и особенности асимметричных конфликтов 20 (25)

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

Н. Г. Григорян. Политическая культура парламентаризма как важный фактор обеспечения эффективной деятельности системы государственного управления 28 (33)

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

Д. М. Манасян. Стратегическая оценка возможности развития отношений между Турцией и Россией в рамках геополитической концепции нового евразийства 35 (46)

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

С. Р. Папикян. Вопросы развития энергетики Республики Армения в аспекте энергетической безопасности 48 (55)

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

Т. Н. Манасерян. Некоторые проблемы внешнеэкономической безопасности Республики Армения 57 (67)

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

С. О. Абрамян. Некоторые аспекты правовой основы армяно-российского военно-технического сотрудничества 68 (74)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ

А. Н. Хачикян. Армия как социальный институт: проблемы отношения общества к ВС РА и военной службе и обеспечения их престижа 76 (87)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

В. Г. Маргарян. Морально-психологическое обеспечение населения как важный компонент подготовки государства к обороне 90 (107)

С. М. Багдасарян. Эмоциональный интеллект руководителя, командира как важный фактор эффективного управления 101 (108)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

М. А. Арутюнян. О некоторых спорных вопросах в историографическом освещении важных операций в Арцахской войне . 111 (119)

Тактико-технические характеристики танков 121

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 123 (126)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор, *Н. У. Аракелян,* академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук; *Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян,* академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА; *С. А. Галстян,* доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян,* генерал-лейтенант (в отставке), доктор политических наук, профессор; *А. А. Манташян,* академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор; *М. В. Маркосян,* доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор; *Р. А. Сафрастян,* академик НАН РА, *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор, *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА, *А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор, *Ю. М. Суварян,* академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА;

В. Г. Маргарян, доктор психологических наук, доцент, полковник, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке-начальник ИНСИ;

С. А. Суджян, кандидат географических наук, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА;

Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований, *Г. О. Оганисян,* кандидат военных наук, полковник, старший преподаватель Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (102)**. 2019**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Altunyan G. R., Aperyan V. V., Ayvazyan L. G., Balayan G. K., Davtyan A. M., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Idinyan R. A., Khachatryan T. V., Makaryan A. A., Margaryan R. P., Margaryan V. H., Martikyan A. M., Martirossov L. A., Ohanyan S. R., Shahnazaryan T. N., Simonyan S. V., Smbatyan N. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G.*

CONTENTS

ARMS AND MILITARY EQUIPMENTS

Ch. G. Almasyan. Some issues of perspective development of tank construction . . . . . 7 (19)*

CONFLICTOLOGY

N. B. Yenikolopova. Asymmetry as a strategy. The essence and features of asymmetric conflicts 20 (26)

PUBLIC ADMINISTRATION

N. H. Grigoryan. The political culture of parliamentarism as a critical factor in providing for the effective functioning of the public administration system 28 (34)

REGIONAL SECURITY

D. M. Manasyan. Strategic assessment of the possibility of developing relations between Turkey and Russia within the geopolitical concept of new Eurasianism 35 (46)

ENERGY SECURITY

S. R. Papikyan. Energy development issues of the Republic of Armenia in the aspect of energy security 48 (56)

ECONOMIC SECURITY

T. N. Manaseryan. Some issues of foreign economic security of the Republic of Armenia 57 (67)

INTERNATIONAL LAW

S. O. Abrahamyan. Some aspects of the legal basis for the Armenian-Russian military-technical cooperation 68 (75)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY SOCIOLOGY

A. N. Khachikyan. Army as a social institution: problems of society's attitude towards the RA Armed Forces and military service, and enhancing their prestige 76 (88)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

V. H. Margaryan. Moral and psychological support of the population as an important component of preparing the state for defense 90 (109)

S. M. Baghdasaryan. Emotional intelligence of a leader, commander as an important factor for effective management 101 (109)

MILITARY HISTORY

M. A. Harutyunyan. On some disputable issues in the historiographical coverage of important operations in the Artsakh war . . . 111 (119)

Perfomance of tanks 121

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 123 (128)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *G. Y. Baghdassarian,* Full Member, NAS, RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Haroutyounian,* Full Member, NAS, RA; *H. S. Kotanjian,* Lieutenant General (retired), Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian,* Full Member, NAS, RA; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG, Head, NDRU, MOD, RA; *V. H. Margaryan,* Doctor of Psychology, Associate Professor, Col, Deputy Head in Education and Research — Head, INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan,* PhD in Geography, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; *D. M. Manasyan,* PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyan,* PhD in Military Science, Col, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

ՏԱՆԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ք. Գ. ԱԼՄԱՍՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

Վերջին շրջանի տեղային պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից զենիթահրթիռային համալիրների, մարտական ուղղաթիռների և ինքնաթիռների, անօդաչու թռչող ապարատների հետ մեկտեղ լայնորեն կիրառվում է զրահատանկային տեխնիկան, որն այսօր էլ պահպանում է մարտում իր դերն ու նշանակությունը: Ավելին. առաջատար պետությունները շարունակում են ոչ միայն բարելավել արդեն սպառազինության մեջ ընդգրկված նմուշների մարտավարատեխնիկական բնութագրերը, այլև ստեղծել նոր սերունդների զրահատանկային տեխնիկա, որում կիրառվեն գիտության ու տեխնիկայի ամենաթարմ նվաճումները, ամենաառաջավոր տեխնոլոգիաները[1]:

Տանկերը մարտում առաջին անգամ կիրառվել են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Վիլյե-Բրետոնեի, Կամբրեի ճակատամարտեր և այլն[2]):

Տանկերի կիրառումն ավելի զանգվածային բնույթ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմում: Այսպես. Ֆաշիստական Գերմանիայի հաղթանակները Լեհաստանի և Ֆրանսիայի նկատմամբ, ինչպես նաև ԽՍՀՄ-ի դեմ ձեռնարկած ռազմական գործողությունների սկզբնական փուլում նրա հաջողություններն զգալի չափով պայմանավորված էին զրահատանկային դիվիզիաներից կազմված ուժեղ հարվածային տանկային «բռունցքի» կիրառմամբ[3]:

---

[1] Տես, օրինակ, *А. Моисеев*. Как изменятся основные боевые танки в ближайшем будущем. «Русское оружие», 07.12.2017 (https://rg.ru/2017/12/07/kak-izmeniatsia-osnovnye-boevye-tanki-v-blizhajshem-budushchem.html); “The Future for armoured vehicle technology”. “Army Technology”, 15.10.2013 (https://www.army-technology.com/features/feature-the-future-armoured-vehicle-technology/):

[2] Տես *С. Юферев*. Первый танковый бой в истории и его последствия. «Военное обозрение», 25 января 2016 (https://topwar.ru/89730-pervyy-tankovyy-boy-v-istorii-i-ego-posledstviya.html):

[3] Տես, օրինակ, *С. Иванов*. Блицкриг как технология войны: эффективный военный менеджмент. «Популярная механика», 2005, № 8:

Այդ շրջանի ամենամեծ տանկային մարտերից է Կուրսկի ճակատամարտը (1943 թ.), որին երկու կողմից մասնակցել են 3444 տանկ և ինքնագնաց հրանոթ: Այդ ճակատամարտի ընթացքում առավել մասշտաբային տանկային մարտ տեղի է ունեցել Պրոխորովկա գյուղի մերձակայքում, որտեղ միմյանց դեմ կռվել են շուրջ 1500 տանկ և ինքնագնաց հրանոթ: Տանկերի զանգվածային կիրառման օրինակներ են նաև էլ-Ալամեյնի ճակատամարտը (1942 թ.)[4], Արդենների հակահարձակողական օպերացիան (1944–1945 թթ.)[5], Բեռլինի համար ճակատամարտը (1945 թ.)[6]:

Տանկերի կիրառությամբ ճակատամարտերը շարունակվել են նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մասնավորապես՝ «Վեցօրյա» (1967 թ., Աբու Ագեյլ), «Ահեղ դատաստանի» օրվա (1973 թ., «Ճակատամարտ «Չինական ագարակի համար»», Սինայյան ճակատամարտ արաբա-իսրայելական պատերազմներում), ինչպես նաև Իրանա-իրաքյան պատերազմում, «Փոթորիկ անապատում» օպերացիայում և այլն:

Այսօր էլ տանկաշինությունը զարգանում է բուռն տեմպերով: Տանկը բոլոր տեսակների վրագետնյա ռազմական տեխնիկայից առավել պաշտպանվածն է: Այդուհանդերձ, մասնագետների կարծիքով, ժամանակակից մարտում նրա կյանքի տևողությունը մեծ չէ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ տանկի խոցման միջոցները մշտապես կատարելագործվում են[7], ինչն էլ իր հերթին այդ տեսակի տեխնիկայի ստեղծմամբ և արտադրությամբ զբաղվող կազմակերպություններին ստիպում է մշտապես կատարելագործել դրա պաշտպանության միջոցներն ու մեծացնել կյանքի տևողությունը:

Մասնագիտական գրականության և տեղեկատվական աղբյուրների հաղորդած տեղեկույթի վերլուծության հիման վրա կարող ենք առանձնացնել հիմնական մարտական տանկերի զարգացման հետևյալ միտումները.

1. տանկերի զանգվածն այլևս չի աճում՝ մնալով 60 տ սահմաններում,
2. դանդաղել է կրակային հզորության աճումը,
3. բոլոր հեռանկարային տանկերը կօժտվեն լիցքավորման ավտոմատով,
4. մարտական կարողությունների մեծացումը պայմանավորված կլինի կրակի կառավարման, կապի ու նշանացուցման համակարգերի, ինչպես նաև ակտիվ պաշտպանության համալիրների, մարտում այլ տեսակների տեխնիկայի հետ գործակցելիություն ապահովող սարքավո-

[4] Տես «Эль-Аламейн. Генерал-лейтенант Фриц Байерлейн». «Роковые решения». М., 1958 (http://militera.lib.ru/h/fatalerror/06.html):

[5] Տես «Арденны. Генерал Хассо фон Мантейфель». «Роковые решения» (http://militera.lib.ru/h/ fatalerror/12.html):

[6] Տես «Великая Отечественная война Советского Союза. 1941−1945. Краткая история», М., 1967, сс. 483–497:

[7] Տես, օրինակ, *Daniel Gouré.* Winning Future Wars: Modernization and a 21st Century Defense Industrial Base. “Military Strenght Topically Essays”, 4 October 2018 (https://www.heritage.org/military-strength-topical-essays/2019-essays/winning-future-wars-modernization-and-21st-century):

ռանքի կատարելագործմամբ, քաղաքային մարտերում ավելի մեծ տարաշարժունության և նվազ խոցելիության ապահովմամբ[8]:

Ըստ այդմ կարող ենք որպես տանկաշինության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններ առանձնացնել կոնստրուկտորատեխնիկական ու գնահատողահետազոտական համալիր ուղղությունները, որոնք ներառում են մեծ թվով ենթաուղղություններ:

Կոնստրուկտորատեխնիկական ուղղությունը բնորոշվում է սպառազինության համակարգերի որակի մշտական բարելավմամբ՝ հայտնի լուծումների ավելի ամբողջական ու նպատակային կիրառման և նոր լուծումների մշակման շնորհիվ: Օրինակ՝ ավելի խիտ դասավորվածքների կիրառում, կրակի ճշգրտության, զինամթերքի հզորության, սպառազինության արագագործության բարելավում, զրահանյութերի կատարելագործում, շարժիչի եզրաչափքային հզորության մեծացում, ընդհանուր առմամբ համալիրի հուսալիության և երկարակեցության մակարդակների բարձրացում: Դրա հետ մեկտեղ ձեռնարկվում են մեքենաների սկզբունքորեն նոր դասավորվածքային սխեմաների և նոր տեսակների շարժիչների մշակումներ, տանկային սպառազինության նոր տարատեսակների ստեղծում, թիրախների ավտոմատացված հայտնաբերման ու նշանացուցման համակարգերի ստեղծում և այլն:

Գնահատողահետազոտական ուղղությունը հնարավորություն է տալիս մարտական գործողությունների մաթեմատիկական վերլուծության հիման վրա կանխատեսելու դրանց ընթացքը, գնահատելու հնարավոր ելքը և ռեսուրսների կորուստները: Այդ եղանակով կարելի է ոչ միայն հիմնավորել սպառազինման համակարգի օպտիմալացման եղանակները և որոշել կոնկրետ նմուշների փոխարինման նպատակահարմար ժամկետները, այլև որոշարկել տեխնիկայի զարգացման առավել հեռանկարային ուղիները:

Տանկի կառուցվածքի առանձնահատկություններից մեկն այն է, որ զրահապատ իրանը և զրահաաշտարակը հիմնականում կազմում են ամբողջ զանգվածի 50 %-ը: Մասնագետները համարում են, որ զրահապատման նոր նյութեր և դրանց ռացիոնալ համակցություններ կիրառելու դեպքում հնարավոր է այս ցուցանիշը նվազեցնել և ստեղծել հնարավորինս փոքր տեսակարար կշիռ ունեցող կայուն պաշտպանություն[9]:

Մյուս ուղին տանկի պաշտպանվող ներքին ծավալների կրճատումն է՝ դրա բաղադրամասերի եզրաչափքերի նվազեցմամբ և դասավորվածքի խտացմամբ: Սակայն տվյալ եղանակի կիրառումը հակասում է հարմարավետության և սպասարկման ու նորոգման համար հանգույցների դյուրամատչելիության պահանջներին:

[8] Տես «Перспективы танкостроения». «Военное обозрение», 26.03.2011 (https://topwar.ru/3872-perspektivy-tankostroeniya.html); *В. Заблоцкий*. Новые разработки бронетехники в США. Важные тенденции. Часть I. «Оборонно-промисловий курьер», 07.08.2018 (http://opk.com.ua/новые-разработки-бронетехники-в-сша-в/):

[9] Տես, օրինակ, *Н. Журавлев.* Развитие бронетанкового вооружения (анализ тенденций) (http://www.tinlib.ru/transport_i_aviacija/tehnika_i_vooruzhenie_1993_02/p14.php):

Տանկի եզրաչափքերի սահմանափակումները պայմանավորված են երկաթուղով և օդով տանկերի տեղափոխման անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ բնահողի վրա թույլատրելի տեսակակար ճնշումը հնարավոր է ապահովել թրթուրների լայնության մեծացմամբ: Դրա հետ մեկտեղ անձնակազմի և սարքավորանքի օպտիմալ տեղաբաշխման համար ևս անհրաժեշտ է իրանի որոշակի լայնություն: Այդ իսկ պատճառով կոնստրուկտորները ձգտում են ամբողջությամբ օգտագործելու տանկի թույլատրելի կողային եզրաչափքերը: Ուստի ստացվում է, որ տեսակարար ճնշման հետագա նվազեցումը հնարավոր է միայն հենման մակերեսի երկայնական բաղադրիչի մեծացմամբ, սակայն այս դեպքում էլ կվատթարանան մեքենայի դյուրադարձությունը, կտրտված ու դժվարանցանելի տեղանքով շարժման արագությունը և անցունակությունը:

Կոնստրուկտորները նոր սերնդի տանկեր ստեղծելիս առաջին հերթին ձգտում են արդիականացնելու ավտոմատ կառավարման համակարգերը, պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու համար կիրառելու նոր նյութեր ու միջոցներ, հզորացնելու սպառազինությունը, անձնակազմին ապահովելու դիտման ու նշանառման ժամանակակից սարքավորանքով՝ միևնույն ժամանակ պահպանելով արդեն ձեռք բերվածը: Արևմուտքում ընդունված է անձնակազմի չորս անդամներով սխեման, ընդսմին նրանցից երեքը մարտական բաժանմունքում են (բացի ՄԻՔՍ-56 «Լեկլերկ» տանկից), ռուսաստանյան տանկերում լիցքավորող չկա (S-72, S-64, S-80 և S-90), քանի որ լիցքավորումը կատարվում է ավտոմատ եղանակով, ինչը հնարավորություն է տալիս էապես կրճատելու մարտական բաժանմունքի զրահապատ ծավալը, մեքենայի եզրաչափքերը և նվազեցնելու ընդհանուր զանգվածը (եթե ռուսաստանյան տանկերի զանգվածը չի գերազանցում 50 տ-ն, ապա գերմանական «Լեոպարդ– 2Ա6Մ-ի» զանգվածը 63 տ է, ամերկյան «Աբրամս» Մ1Ա2-ինը՝ 62,1 տ, բրիտանական «Չելենջեր» 2-ինը՝ 62 տ): Լիցքավորման ավտոմատի տեղակայման հետևանքով կիրառվում է (125 մմ հարթափող թնդանոթի համար) տարանջատ լիցքավորման զինամթերք՝ պոչաթևավոր ենթատրամաչափային զրահահար արկ, որն օժտված է մեծ սկզբնական արագությամբ (1600-1800 մ/վրկ): Նման զինամթերքը ապահովում է ավելի մեծ հեռահարություն և ծակատունակություն, իսկ պոչաթևերի շնորհիվ ապահովվում է խոցման ավելի մեծ ճշգրտություն:

Զանգվածի նվազեցման շնորհիվ հնարավոր է դարձել կիրառել վեցագլդոն ընթացամաս, շարժիչի տեսակարար հզորության պահպանմամբ և ապահովելով 25 ձիաուժ/տ՝ սահմանափակել նրա չափերը՝ կրճատելով շարժիչային-փոխհաղորդիչ բաժանմունքի և ընդհանրապես մեքենայի երկարությունը, շարժունակության անհրաժեշտ մակարդակը:

Ժամանակակից ռուսաստանյան արտադրության տանկերի ճակատային և կողային առաջածգությունների մակերեսը արևմտյանների համեմատությամբ փոքրացել է 25–30 %-ով, ինչը նվազեցնում է դրանց խոցման հավանականությունը, բարձրացնում մարտադաշտում գոյունակության մակարդակը:

Ռուսաստանյան տանկերի կարևոր առավելությունը հրթիռային սպառազինությունն է, որով ապահովվում են հակառակորդի զրահապատ մեքենաների խոցման ավելի մեծ հնարավորություններ: Սա հատկապես էական է կրակային աջակցության ուղղաթիռների խոցման ժամանակ, քանի որ այդ դեպքում զգալիորեն գերազանցվում է հրետանային արկերի արդյունավետ հեռահարությունը (ավելի քան 3 կմ): Որոշ արտասահմանյան մասնագետների կարծիքով պետք է ստեղծել տանկերին ուղեկցող հատուկ զրահապատ մեքենաներ, որոնք սպառազինված լինեն հակատանկային հրթիռներով: Օրինակ՝ ԱՄՆ-ում մշակվում է միջին քաշային կարգի ամրաշրջանակի վրա հավաքված այդպիսի մեքենա՝ «Լոսատ»-ը *(LOSAT)*[10]: Ինչ վերաբերում է կրակի կառավարման համակարգի համալրման սկզբունքներին ու բնութագրերին, ապա արևմտյան ու ռուսաստանյան տանկերի դեպքում դրանք հիմնականում համանման են:

Առաջատար պետությունները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բարձրացնում են նաև տանկերի պաշտպանվածության մակարդակը: Օրինակ՝ իսրայելական տանկերում օգտագործվում են կողային ռադիոէլեկտրոնային համակարգեր, որոնք նախատեսված են տանկին ուղղված ռադիոէլեկտրոնային ճառագայթումը ավտոմատ կերպով հայտնաբերելու և անձնակազմին զգուշացնելու համար: Դրանք օգտագործվում են «Մերկավա» ՄԿ1, ՄԿ2 տանկերում: Լազերային ճառագայթման հայտնաբերման ԼԿՍ-2 համակարգով կահավորված են «Մերկավա» ՄԿ3 և ՄԿ4 տանկերը:

Տանկի պաշտպանվածությունը մեծացվել է նաև մոդելային կոչված եղանակի՝ լրացուցիչ զրահաթիթեղիկների օգտագործման շնորհիվ: Դրանք ամրացվում են հիմնական զրահի վրա: Այսպես. «Մերկավա» ՄԿ4-ի վրա տեղադրվում է ակտիվ պաշտպանության «Տրոֆի» տիպի համակարգ, որը նախատեսված է հակատանկային կառավարվող հրթիռներ և արկեր ոչնչացնելու համար: Այդ համակարգը կօժտվի արհեստական «բանականությամբ». համակարգիչը տվյալներ կստանա զրահի վրա տեղադրված տվիչներից, կամփոփի տվյալները և կհաղորդի հրամանատարին՝ առաջնահերթություն տալով ավելի վտանգավոր ու կարևոր օբյեկտներին: Նախատեսվում է տեղադրել նոր նշանոցներ և՛ հրամանատարի, և՛ նշանառու օպերատորի համար: Զգայարաններով օժտված սաղավարտների շնորհիվ նրանք «կտեսնեն զրահի միջով»: Տանկը համալրվելու է նաև մեխանիկ վարորդին վտանգի մասին զգուշացնող համակարգով:

Ռուսաստանյան և արևմտյան տանկերում կրակի կառավարման համակարգերի համալրման սկզբունքներն ու բնութագրերը գրեթե միևնույնն են. կիրառվում են լազերային հեռաչափներ, ըստ նշանառման անկյունների ու կողային առաջանցիկությամբ հրաձգության նախադրումների ավտոմատացված որոշման և ըստ այդմ թնդանոթի ու աշտարակի ուղղորդման կայունացված հաղորդակների գործարկման սարքեր: Նշանառուի հիմնական նշա-

[10] Տես նույն տեղում:

նոցն ունի տեսադաշտի անկախ կայունացում (սխալանքը՝ 0,15 մռադ), ինչը որոնման ժամանակ մեծացնում է նշանակետի հայտնաբերման և հրաձգության ժամանակ դրա խոցման հավանականությունները:

Որոշակի տարբերություններ կան դիտման և նշանառման սարքերով հրամանատարի աշխատատեղի սարքավորման տեսանկյունից: Եթե «Լեոպարդ-2», «Լեկլերկ», «Չելենջեր» տանկերում հրամանատարն ունի կայունացված համայնապատկերային սարքեր, ապա ռուսաստանյան տանկերում նշանակետերի հայտնաբերման գործում առաջնություն տրվում է նշանառուին: Ռուսաստանյան տանկերում որպես դիտման և նշանառման գիշերային միջոցներ կիրառվում են հիմնականում առանց լուսավորման գիշերային դիտման ինֆրակարմիր սարքեր, իսկ արևմտյաններում՝ ջերմացուցային սարքեր, սակայն վերջիններս, նշանակետի հայտնաբերման առումով որոշ առավելությունների հետ մեկտեղ չափազանց թանկ են:

Ռուսաստանյան և արևմտյան տանկերի պաշտպանության ապահովման եղանակները նույնպես շատ առումներով միանման են: Մասնավորապես՝ կիրառվում են բազմաշերտ համակցված դինամիկ զրահներ, զրահապատող կոնստրուկտիվ մետաղաթերթերի թեքության մեծ անկյուններ: Ընդհանուր կառուցվածքը համապատասխանեցված է պաշտպանության հիմնական սկզբունքին. առավել խոցելի սարքավորանքը հակատանկային միջոցներից պաշտպանել իրական մարտական հեռավորություններում: Վերջին տարիներին արևմտյան տանկերի պաշտպանվածության մակարդակը բարձրանում է հիմնականում զրահի ֆիզիկական հաստության մեծացման և հարվածամեղմիչ շերտերի թվի ավելացման հաշվին:

3-րդ սերնդի նոր տեխնիկայի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ դրանք («Աբրամս» Մ1Ա1, «Լեոպարդ-2», «Չելենջեր») ունեն ներքին մեծ ծավալներ (17-18 մ^3), իսկ զանգվածը գերազանցում է 62,5 տ: Ռուսաստանցի մասնագետները հիմնականում ուշադրություն են դարձնում հորինվածքի խտության բարձրացմանը և ներքին հանգույցների մանրաչափացմանը: Նրանց հաջողվել է պահպանել պաշտպանվածության մակարդակը, որը մոտ է արևմտյանին, սակայն մեքենայի զանգվածը նվազեցնել մինչև 40–46 տ[11]:

Փորձագետները նաև նշում են, որ տանկերում անհրաժեշտ է տեղադրել կառավարման և վերահսկման ժամանակակից ավտոմատացված համակարգեր, որոնք կկարողանան ժամանակին ընդունել և վերամշակել մարտադաշտի վերաբերյալ ստացվող տեղեկությունը, կատարել տեղեկության փոխանակում և նշանացուցում: Միևնույն ժամանակ, նրանք փաստում են, որ տանկերը ժամանակակից ավտոմատացման և այլ էլեկտրոնային համակարգերով (հրթիռներով ավտոմատ լիցքավորման համակարգեր, նշանոցներ, կայունարարներ և այլն) օժտելու դեպքում արտաքին ու ներքին բեռնվածքների աճման հետ մեկտեղ բարդանում է տեխնիկայի կառուցվածքը, մեծանում է սարքավորանքի խափանումների հավանականությունը,

[11] Տես նույն տեղում:

աճում են նորոգման ծավալներն ու բարդությունը: Ակներև է նաև, որ այդպիսի բարդ տեխնիկայի շահագործման ու սպասարկման համար անհարժեշտ է պատրաստել բարձրակարգ մասնագետներ:

Այսպիսով՝ կոնստրուկտորները և ռազմական գործի մասնագետները զրահատեխնիկայի զարգացման հիմնական ուղղություններ են համարում կրակային հզորության մեծացումը, պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, շարժունակության ավելացումը, ներսի տարածքի հորինվածքի կատարելագործումը, շարժիչի հզորության մեծացումը, կառավարման ավտոմատացված հրամանատվական համակարգի ներդրումը, գոյունակության մեծացումը, հուսալիության աստիճանի բարձրացումը:

Վերը բերված ընդհանուր դիտարկումները լրացնենք դրանցից մի քանիսի (մեր կարծիքով՝ առավել կարևորների) ավելի մանրամասն քննարկմամբ:

Կրակային հզորության ավելացում: Կրակային հզորության ավելացման նպատակը առավելագույն հեռահարության, եղանակային տարբեր պայմաններում նշանակետերի խոցման ցուցանիշների բարելավումն է, ինչին կարելի է հասնել որոնման համակարգի հնարավորությունների մեծացմամբ, ըստ նշանակետերի կարևորության դրանց խոցման հերթականության որոշմամբ:

Կրակային հզորացման ամենախնայողական տարբերակը խելամտորեն միօրինակացված մարտական մոդուլի կիրառումն է: Օրինակ՝ ռուսաստանյան ԲՏՌ-90-ը, ԴՄՄ-4-ը, ֆիննաշվեդական ԱՄՎ զրահափոխադրիչը բազմաֆունկցիոնալ տարբերակներ են: Դասական տարբերակ է նաև Տ-90Ս տանկի սպառազինությունը: Տ-90-ը, ի տարբերություն Տ-72-ից, հակատանկային կառավարվող հրթիռներով կրակ է վարում հընթացս, իսկ Տ-72Բ-ն՝ կարճատև դադարների ժամանակ: Թնդանոթը կահավորված է ճշտորոշման ավտոմատ սարքով: Կրակի կառավարման 1Ա45Տ «Իրտիշ» համալիրն ընդգրկված է կրակի կառավարման ընդհանուր համակարգում՝ հրթիռային սպառազինության կառավարման «Ռեֆլեքս» 9Կ119 համալիրներում:

Կրակի կառավարման համակարգն ավտոմատ կերպով ապահովում է կրակի բնութագրերի ճշգրտումները՝ հաշվի առնելով տանկի արագությունը, թիրախի հեռավորությունը, օդի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, լիցքի ջերմաստիճանը, թնդանոթի անկյան թեքությունը և թնդանոթի մաշվածության աստիճանը: Աշտարակի վրա տեղադրված են օպերատորի ակտիվ-պասիվ ՏՊՆ-4-49 «Բուրան-ՊԱ» կամ ջերմային Տ -01-ՊՕ2Տ «Ագավա–2» նշանոցները, ինչպես նաև «Ագաթ-Ս» մշտապես աշխատող նշանոցը: Ակտիվ-պասիվ նշանոցի փոխարինումը ջերմացուցայինով հնարավորություն է տալիս նշանակետը հայտնաբերելու ոչ թե 1500 մ, այլ 2500 մ հեռավորության վրա, բայց շատ մեծ ինքնարժեքի պատճառով այն տեղադրվում է ոչ բոլոր տանկերում:

ՌԴ-ում աշխատանքներ են տարվում նաև 3ՎԲԿ25 արկը նոր՝ 3ԲՄ42, արկով փոխարինելու ուղղությամբ: Նորի ծակատունակությունը 20 %-ով ավելի է, և նա ծակում է անգամ ժամանակակից տանկերի դինամիկական պաշտպանությամբ ուժեղացված բազմաշերտ զրահը:

Մարտական լրակազմում ներառվող էլեկտրահեռակառավարվող պայթուցիչով բեկորակոտորակառումբային արկն ապահովում է փոքր չափերի հակատանկային միջոցների դեմ պայքարի ավելի մեծ արդյունավետություն, հպումային տեսակի պայթուցիչի տեղադրման դեպքում ձեռք է բերում տարբեր տիպի խոչընդոտներ հաղթահարելու կարողություն:

Պաշտպանվածության մեծացում: Պաշտպանվածության մակարդակի բարձրացման հիմնական միջոցներն են, ինչպես արդեն նշել ենք, նոր զրահապատիչ նյութերի օգտագործումը, կողազրահի հաստության մեծացումը, պաշտպանաշերտերի թվի ավելացումը, կողին նոր թեքությունների հաղորդումը, նոր ռադիոկլանիչ և այլ քողարկիչ նյութերի, ցանցերի և ներկերի կիրառումը: Թափքի և աշտարակի համար մոդուլային հորինվածքների օգտագործումը հնարավորություն է տալիս պաշտպանվածության աստիճանը մեծացնելու՝ առանց զրահի հաստության ավելացման: Հնարավոր է այս մոդուլը շատ արագ փոխարինել անգամ դաշտային պայմաններում:

Զրահատեխնիկայի դինամիկական պաշտպանության տարատեսակներից են ռուսաստանյան «Կոնտակտ-5», «Ռելիկտ», «Մալախիտ»[12], ուկրաինական «Նոժ», իսրայելական «Սուպեր–Պլազեր» համակարգերը: Այսօր ԱՄՆ-ում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում աշխատանքներ են կատարվում էլեկտրոնային տանկի ստեղծման ուղղությամբ: Դրանում կօգտագործվեն էլեկտրամագնիսական և էլեկտրաջերմային պաշտպանության համակարգեր: Դրա աշխատանքի սկզբունքն այն է, որ հակատանկային միջոցի ոչնչացման համար կիրառվելու է հզոր էլեկտրական իմպուլսը: Էլեկտրաջերմային պաշտպանությունը հիմնվում է այն գաղափարի վրա, որ հզոր էլեկտրական իմպուլսով առաջացված գազային մարմինը դեպի հակատանկային միջոց է շպրտում մետաղյա թիթեղներ, որոնք էլ շեղում են տանկի վրա արձակված միջոցի թռիչքամոտեցման ուղղությունը[13]:

Օգտագործվում են նաև օպտիկաէլեկտրոնային հակազդող համակարգեր («Շտորա», «Ստրաժա», «Կոլոս»), որոնք անձնակազմին զգուշացնում են, որ տանկի վրա ուղղված է նշանացուցիչ լազերային ճառագայթ, ինչից հետո կիրառվում է ակտիվ աերոզոլ, որն էլ կլանում է լազերային ճառագայթը:

Կիրառվում են նաև նկատելիությունը նվազեցնող միջոցներ: Օրինակ՝ ռուսաստանյան «Կոնտրաստ» համակարգը 30 %-ով նվազեցնում է տեսողական հայտնաբերման հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, մասնագետները նշում են, որ տեխնիկայի պաշտպանվածության աստիճանը բարձրացնելիս չի կարելի մեծացնել նրա չափերը և քաշը, տեխնիկան զրկել տարաշարժունությունից և լողունակությունից:

Այսպիսով՝ տանկերի մեծ գոյունակություն ապահովելու համար կիրառվում են զրահ, դինամիկ պաշտպանություն (ԴՊ), ավտոմատացված արագագործ կրակմարիչ համակարգեր, արդիական հակաատոմային պաշտպա-

[12] Տես *Андрей Станавов*. Взрывная реакция: как работает динамическая защита танка. «РИА Новости», 04.05.2019 (https://ria.ru/20190504/1553002730.html):

[13] Տես նույն տեղում:

նության (ՀԱՊ) համակարգեր: Դրա շնորհիվ մարտում տանկի կյանքի տևողությունն էապես մեծացել է: Որպես առավել հեռանկարային միջոցներից մեկը առանձնացնենք օպտիկաէլեկտրոնային ճնշման ՏՇՈՒ-17 «Շտորա» համակարգը, որը պաշտպանում է «Միլան», «Դրակոն» և «ՀՏԿՀ» լազերային ինքնակառավարվող ԱԳՄ-65 «Մայվերիկ», «Հելֆայր» և այլ տեսակների հրթիռներից: Ձեռնարկվել են մի շարք տեխնիկական միջոցառումներ, մասնավորապես՝ կիրառվում են էլեկտրամագնիսական ալիքները կլանող պատվածքներ և ինֆրակարմիր դիտման պասիվ միջոցներ, հայտնաբերման հնարավորությունների նվազեցման համար տեխնիկայի ներկում հատուկ տեխնոլոգիայով, որը ինֆրակարմիր հաճախականությունում աղավաղում է տանկի եզրագծերը:

Շարժունակության ավելացում: Տանկերի շարժունակության ավելացման առնչությամբ մասնագետները նշում են, որ անհրաժեշտ է կիրառել ավելի հզոր ու վառելիքի տարբեր տեսակներով աշխատող ներմղումով դիզելային շարժիչներ, ավելի կատարելագործված հիդրոմեխանիկական փոխհաղորդիչներ, կատարելագործել ընթացամասը: Շարժիչները պետք է լինեն կոմպակտ, ունենան տարբեր բնակլիմայական պայմաններում անխափան կերպով աշխատելու կարողություն, բարձր էներգետիկ ցուցանիշներ ու տարբեր տիպերի վառելիքով աշխատելու հնարավորություն[14]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ համատարած գործածվել են դիզելային շարժիչներով տանկեր: Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ում փորձեր են կատարվել տանկերում օգտագործել ատոմային ուժային կայանքներ: Օգտագործվել են նաև ավիացիոն աստղատիպ, կարբյուրատորային մեքենաների համար նախատեսված շարժիչներ: Վերջին 20–30 տարվա ընթացքում օգտագործվել են նաև գազատուրբինային շարժիչներ (օրինակ՝ ԳՏ-1000Դ 1000 ձիաուժանոց շարժիչներ, որոնք առաջին անգամ տեղադրվել են Տ-80 տանկերում):

Մասնագետները նշում են, որ լավ ընթացային բնութագրերի հասնելու համար նվազագույն տեսակարար ցուցանիշը պետք է 1 տ հաշվով լինի 18-20 ձիաուժ[15]:

Փորձարկումներով փաստվել է, որ գազատուրբինային շարժիչները, որոնց անվանական հզորությունը մեծ է դիզելային շարժիչներից, ապահովում են ավելի մեծ արագություն, սակայն մեկժամյա վառելիքի ծախսն ավելի մեծ է, ուստի և մի օրվա ռազմերթի ժամանակ գազատուրբինային շարժիչով աշխատող տանկը պետք է լրացուցիչ լիցքավորվի: Ծովի մակարդակից 3000 մ և ավելի բարձրություններում շահագործման դեպքում դիզելային շարժիչն իր հզորությունը կորցնում է 9 %-ով, իսկ գազատուրբինային

[14] Տես *К. Н. Чугай, В. В. Бондаренко, Ю. И. Семак.* Основные направления развития боевых бронированных машин. «Наука и военная безопасность», 2007, № 3:

[15] Տես «Бронетанковая техника». «Энциклопедия Кругосвет» (https://www.krugosvet.ru/enc/nauka_i_tehnika/voennaya_tehnika/BRONETANKOVAYA_TEHNIKA.html):

շարժիչը՝ 15,5 %-ով[16]: Դիզելային շարժիչները հիմնականում օժտվում են տուրբոփչովի համակարգով, իսկ վերջին ժամանակներս՝ ինտերկուլերային տիպի ռադիատորներով:

Ներկայումս ՌԴ-ում ձեռնամուխ են եղել նոր՝ (իքսաձև) տեղադրված մխոցներով, 1400 ձիաուժ հզորությամբ շարժիչի ստեղծմանը: Այն պետք է մեծացնի թափառքային արագության ցուցանիշը՝ ապահովելով արևմտյան տանկերի նկատմամբ S-90-ի առավելությունը:

Դեռ 1930 – 50 թթ. բանավեճեր են եղել տանկերի ուժակայանքի երկու տեսակի՝ ներքին այրման (կարբյուրատորային) ու դիզելային շարժիչների կիրառման արդյունավետության հարցով: Ներկայումս բանավեճի հիմնական առարկան տանկերում դիզելային և գազատուրբինային շարժիչների կիրառման արդյունավետության հարցն է: Այս երկու տիպի շարժիչներն էլ, ինչպես վերը նշվել էր, ունեն թե՛ առավելություններ, թե՛ թերություններ:

Գազատուրբինային շարժիչների առավելություններն են՝ քսուքների սակավ ծախսը, -5^0 C-ի դեպքում գործարկման համար նվազ ժամանակի անհրաժեշտությունը, շրջակա միջավայրին արտանետվող գազերից հասցվող սակավ վնասը, պտտող մոմենտի ավելի արդյունավետ օգտագործումը, փոխհաղորդակի ավելի պարզ կառուցվածքը, խոչընդոտի հանդիպելու դեպքում շարժիչի անխափանությունը, շարժիչի աշխատանքի ցածր ձայնը (1,75-2 անգամ ցածր), ինչը նվազեցնում է ապաքողարկիչ հատկանիշների մակարդակը, 2-3 անգամ մեծ ռեսուրսը, կոմպակտությունն ու հզորությունը:

Դիզելային շարժիչի առավելությունները՝ փոշու պայմաններում աշխատանքի ավելի մեծ հուսալիությունը, բարձր ջերմաստիճաններում հզորության աննշան անկումը, վառելիքի և շահագործման նվազ ծախսերը (1,8–2 անգամ), ավելի մեծ ընթացապաշարը, շարժիչի ավելի ցածր ինքնարժեքը, հրդեհաանվտանգությունը, դաշտային պայմաններում նորոգման ավելի մեծ հնարավորությունները, շարժիչը քարշակմամբ գործարկելու հնարավորությունը, ջերմադիտման սարքերի համար պակաս նկատելիությունը, ջրային արգելքների ավելի հեշտ հաղթահարումը (գազատուրբինային շարժիչին անհրաժեշտ է լրացուցիչ խողովակ):

Հորինվածքի բարելավում: Հորինվածքի բարելավումը ենթադրում է առանձին հանգույցների և ագրեգատների տեղադրում, որպեսզի առաջին հերթին ապահովվեն անձնակազմի անվտանգությունը, շարժիչի տեղադրումն առաջնամասում, հետնադռնից հետևակի իջեցման հնարավորությունը:

Կառավարման համակարգի կատարելագործում: Կառավարման համակարգը գործում է ժամանակի իրական մասշտաբում աշխատող՝ տեղեկույթի փոխանակման ապահովմամբ ու ուղեվարության ժամանակակից համակարգերի օգտագործմամբ: Շտաբի, ստորաբաժանումների, մարտական խմբերի, մարտական մեքենաների անձնակազմերի և այլ փոխգործող ստորաբաժանումների կառավարման ապահովման համար անհրաժեշտ է ունենալ ժա-

[16] Տես «Танки являются основной ударной силой сухопутных войск. История их развития» (http://tankinform.blogspot.com/p/blog-page_227.html):

մանակակից կայուն ռադիոկապ, որն ունակ լինի աշխատելու խանգարումների առկայությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդի ռադիոէլեկտրոնային պայքարի բնույթի հաշվառմամբ անհրաժեշտ է ունենալ հաճախականությունների տարբեր տիրույթներում և տարբեր բանելակարգերով աշխատող ռադիոկապի միջոցներ: Արևմտյան արտադրության տանկերում արդեն գործում են տեղեկատվական-կառավարման համակարգեր, որոնցում ինտեգրված են կապի, կառավարման, արատորոշման, տեղեկույթի համակարգչային մշակման և հետախուզության միջոցներ: Դրանով իսկ ձևավորվում է միասնական «տեղեկութային տարածություն», որն ապահովում է մարտական մեքենաների, ինչպես նաև աջակցման միջոցների (համազարկային կրակի համակարգեր, հետախուզահարվածային հրթիռային համալիրներ և այլն) միջև տեղեկույթի արդյունավետ փոխանակում:

Շատ կարևոր են նաև տանկում տեղադրված կապի միջոցները՝ ԳԿԱ Ռ-163-50ՈՒ և Ռ-163ՈՒ ընդունիչներ, որոնք ապահովում են կապը մինչև 50–250 կմ հեռավորություններով: Պլանավորվում է Տ-90Ս տանկում տեղադրել նաև ԳԼՕՆԱՍՍ արբանյակային ուղեվարական համակարգ:

ԱՄՆ-ում մշակվում և ներդրվում են (2002 թվականից) մարտավարական մակարդակով (մինչև ջոկ, տանկ) մարտի կառավարման ավտոմատացված համակարգեր, որոնք ապահովում են մարտական և տեխնիկական պարամետրների վերաբերյալ տեղեկույթի ստացում, ներառյալ՝ հիմնական հանգույցներից և ագրեգատներից: Տվյալ համակարգերը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր զինակիր մարտակայանքից ստացվող տեղեկույթի ինտեգրմամբ ստեղծելու մարտի միասնական պատկերը[17]:

Այսպիսով՝ տանկը տասնյակ տարիներ համարվել է ցամաքային զորքերի գլխավոր հարվածային զինատեսակներից մեկը և օպերատիվ ու մարտավարական խնդիրների կատարման ժամանակ մշտապես ապահովել հաջողությունը: Ուստի այն կարծիքը, թե ժամանակակից աշխարհում հակատանկային միջոցների զարգացման հետևանքով մարտի դաշտում տանկերի «գերիշխանությունը» կնվազի, հիմնավոր չէ: Այդ են վկայում ժամանակակից զինված բախումներում տանկերի լայն կիրառումը և առաջատար պետություններում տանկաշինության հեռանկարային զարգացման միտումները: Ուստի տանկերը դեռ երկար ժամանակ կպահպանեն իրենց ռազմական դերն ու նշանակությունը:

[17] Տես, օրինակ, «Американская автоматизированная система управления войсками тактического уровня FBCB2 (часть 1)». «Военное обозрение», 26.08.2013 (https://topwar.ru/32374-amerikanskaya-avtomatizirovannaya-sistema-upravleniya-voyskami-takticheskogo-urovnya-fbcb2-chast-1.html):

ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПЕРСПЕКТИВНОГО РАЗВИТИЯ ТАНКОСТРОЕНИЯ

К. Г. АЛМАСЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Десятилетиями танк считался одним из главных видов ударного оружия сухопутных войск, неизменно обеспечивающий успех при выполнении оперативных и тактических задач. Применение в боях и сражениях бронетанковой техники и сегодня не утратило своего значения. В связи с этим, в ведущих странах не только осуществляется совершенствование имеющейся на вооружении бронетехники, но и разрабатываются новые виды машин.

На основе анализа специальной литературы и информационных сообщений можно выделить следующие основные тенденции в развитии танкостроения: их масса не растет и ограничивается 60-ю т; замедлился рост огневой мощи; все перспективные танки будут оснащены автоматами заряжения; повышение боевых возможностей танков будет обеспечиваться в основном за счет совершенствования систем управления огнем, связи и целеуказания, комплексов активной защиты, оборудования, обеспечивающего в бою взаимодействие с другими видами техники, обеспечением более высокой мобильности и меньшей уязвимости в боях в городе.

Основными направлениями развития танкостроения являются: увеличение огневой мощи, в первую очередь, за счет усовершенствования системы управления огнем и разработки новых боеприпасов; увеличение живучести в бою за счет повышения уровня защищенности путем установки новых систем динамической защиты, создания новых материалов для брони и ее утолщения, использования для покрытий новых радиопоглощающих материалов с большими показателями поглощения радиоволн в более широком диапазоне, установки систем, предупреждающих о взятии танка на прицел и поглощающих лазерные лучи наведения; повышение мобильности танков.

ARMS AND MILITARY EQUIPMENTS

SOME ISSUES OF PERSPECTIVE DEVELOPMENT OF TANK CONSTRUCTION

Ch. G. ALMASYAN, Colonel (Ret.), Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

Over the decades tanks have been considered one of the main types of offensive weapons of ground forces, unfailingly ensuring success in operational and tactical tasks. The engagement of armored vehicles in combats and battles has preserved its essence up to this day. In this respect, leading countries not only modernize the armored vehicles in service, but also develop new types of vehicles.

Upon the analysis of professional literature and informational reports, the following development tendencies in tank construction can be highlighted: their mass doesn't increase and is limited to 60 tons; the increase in firepower has been slowed down; all the perspective tanks will be equipped with auto-loaders; enhancement of combat capabilities of tanks will be ensured mainly by improving the systems of fire control, communication and target designation, active defense systems, and through the equipment supporting interaction with other types of equipment in combat, as well as by providing higher mobility and less vulnerability in urban combats.

The main directions in the development of tank construction are: increasing the firepower, primarily through the improvement of the fire control system and the development of new ammunition; enhancing combat survivability through increasing the level of robustness by installing new systems of dynamic protection, creating new materials for armor and its thickening, using new radio-absorbing materials with bigger coefficients of radio waves absorption in a wider range, installing systems, warning of aiming at the tank and absorbing laser guidance beams; increasing the mobility of tanks.

ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ԱՆՀԱՄԱՉԱՓ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Բ. ԵՆԻԿՈԼՈՊՈՎԱ, պահեստազորի մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Պատերազմի ժամանակակից բնութագրերից ամենատարածվածն այսօր «անհամաչափությունն» է: Գիտական գրականության, ինչպես նաև պաշտոնական փաստաթղթերում գոյություն չունի անհամաչափ պատերազմի հստակ սահմանում:

Անհամաչափություն տերմինը փոխառվել է բնական գիտություններից: Անհամաչափ է կոչվում այն պատերազմը, որի «կողմերի ռազմական ուժերի միջև կա շատ մեծ անհամապատասխանություն, ինչի հետևանքով թույլ կողմը դիմում է անհամաչափ միջոցների, ինչպիսիք են՝ պարտիզանական պատերազմը, պասիվ դիմադրությունը, ահաբեկչական գործողությունները, հոգեբանական պատերազմը, աջակցումը հակակառավարական շարժումներին ու խմբերին և այլն»[1]: Բրիտանացի միջազգայնագետ Էնդրյու Մակը 1975 թվականին հրապարակել է «Ինչու՞ են մեծ տերությունները պարտվում փոքր պատերազմներում. անհամաչափ հակամարտության քաղաքականությունը» աշխատությունը, որով գիտական շրջանառության մեջ է դրել «անհամաչափ հակամարտություն» տերմինը: Ըստ էության նա փորձել է, մինչ այդ տարանջատված փաստերը միաբերելով, ներկայացնել «անհամաչափ հակամարտության» միասնական հայեցակարգային մոդելի տեսքով:

Ըստ Մակի՝ մեծ տերությունների պարտությունը պայմանավորված է.

- պատերազմը շարունակելու քաղաքական կամքը կորցնելու հանգամանքով,
- հակառակորդների միջև հարաբերություններում անհամաչափության բարդույթի առկայությամբ,
- պայքարի անհամաչափ ռազմավարությունների կիրառմամբ (պարտիզանական և այլ եղանակներ),
- ոչ ռազմական գործոնների էական ազդեցությամբ[2]:

---

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն, մեծ բառարան, Ե. 2015, էջ 484:

[2] Տես *A. Mack.* Why Big Nations Lose Small Wars: The Politics of Asymmetric Conflict. “World Politics”, 1975, Vol. 27, N 2:

2003 թ. լույս է տեսել Գիլ Մերոմի «Ինչպես են ժողովրդավարությունները պարտվում փոքր պատերազմներում» աշխատությունը, որտեղ օգտագործվում է Մակի այն վարկածը, թե հզոր պետության պարտության պատճառներից մեկը այդպիսի պատերազմներ վարելուն ժողովրդավարական հասարակության անպատրաստությունն է և շատ հաճախ պայմանավորված է պատերազմը շարունակելու քաղաքական ու բարոյական բնույթի ներքին սահմանափակումներով[3]:

Իսրայելի Բեգինի և Սադդատի անվան ռազմավարական հետազոտությունների կենտրոնի աշխատողների հրատարակած «Ժողովրդավարությունը և փոքր պատերազմները» աշխատության մեջ կանխատեսվում է «փոքր պատերազմների» թվի աճում, ինչը պետությունների տեխնիկական և տնտեսական զարգացման մակարդակների միջև աճող ճեղքվածքի հետևանք է: Չլուծված հակամարտությունների դեպքում փոքր պատերազմները հաճախ վերածվում են դասական «աղքատների պատերազմի»: Թեև աշխարհի տարբեր ծայրերում միշտ էլ տեղի են ունենում փոքր պատերազմներ, որոնք հաճախ կոչվում են ցածր լարվածությամբ հակամարտություններ, զարգացած պետությունները պատրաստ են վարելու սովորական մեծամասշտաբ պատերազմներ, ինչը պայմանավորված է նրանց կառուցվածքով, ավելի մեծ տեխնիկական ապահովվածությամբ և պատրաստությամբ[4]: Այս աշխատության մեջ քննարկվում են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի, Հնդկաստանի, Թուրքիայի և Հունաստանի վարած հակաապստամբական պատերազմների օրինակները:

2005 թ. քաղաքագետ Այվան Արեգին-Թոֆտն իր «Ինչպես են թույլերը հաղթում պատերազմում. անհամաչափ հակամարտությունների տեսություն» մենագրությունում անհամաչափ հակամարտությունների տեսությունը մշակում է անհամաչափ ռազմավարությունների հասկացության հիմքի վրա: Անհամաչափ ռազմավարությունները հիմնականում բնորոշ են այն հակամարտություններին, որոնց կողմերի մակարդակները խիստ տարբեր են, և կանխորոշում են համեմատաբար թույլ հակառակորդի հաղթանակը[5]: Բազմաթիվ զինված հակամարտությունների և պատերազմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղթանակի հասնելու համար ուժային գերազանցության և հաղթելու ունակության պարզեցված ընկալումը սխալ է: Ու թեև շատ դեպքերում նման հակամարտություններում հզոր պետությունները չեն կրել ռազմական պարտություն, սակայն կրել են քաղաքական պարտություն՝ չկարողանալով հակառակորդին պարտադրել իրենց կամքը:

Ժամանակակից զինված հակամարտություններում հիմնականում կիրառվում են երկու տեսակի անհամաչափ պատերազմներ՝ պարտիզանական

[3] Տես *Gil Merom.* How Democracies Lose Small Wars: State, Society, and the Failure of France in Algeria, Israel in Lebanon and the United States in Vietnam. Cambridge, New York, 2003:

[4] Տես “Democracies and small wars”. Ed. by Efraim Inbar. London, 2003:

[5] Տես *Ivan Arreguin-Toft.* How the weak win wars: A theory of asymmetric conflict. Cambridge, 2005:

և ահաբեկչական[6]: Ավանդական պարտիզանական շարժումների դեպքում ձգտում են հասնելու ուժերի համաչափության և հակառակորդին հաղթելու զինված պայքարի միջոցով, մինչդեռ ահաբեկչական խմբավորումները հակված են թուլացնելու թշնամու բարոյահոգեբանական ներուժը՝ խուսափելով նրա ռազմական մեքենայի հետ շփումներից[7]: Այս երկու մարտավարությունները հաճախ օգտագործվում են համակցված՝ լրացնելով միմյանց:

Հ. Քիսինջերը, վերլուծելով Վիետնամական պատերազմի փորձը, արտածել է պարտիզանների հաղթանակի հետևյալ բանաձևը. «... պարտիզանները հաղթում են այնքան ժամանակ, քանի դեռ տանուլ չեն տվել, իսկ կանոնավոր բանակը պարտվում է, եթե նրան չի հաջողվում հասնել վճռորոշ հաղթանակի»[8]:

Անհամաչափությունը զուգորդվում է ինչպես ապստամբական շարժումների, այնպես էլ ոչ կանոնավոր ռազմական կազմավորումների դեմ պատերազմի հետ: Այժմ արդեն միայն ուժը բավարար չէ, որպեսզի հաջողությամբ պայքար մղվի այնպիսի հակառակորդների դեմ, որոնք նպատակադրված են ստեղծելու ոչ ավանդական անհամաչափություն: Ոչ ավանդական անհամաչափություն ասելով հասկանում ենք պարտիզանական պատերազմը, որը պայմանավորված է այն վարող կողմի ռազմական թուլությամբ և իր ուժերը խնայելու ձգտմամբ, ինչը պայքարը շարունակելու անհրաժեշտ պահանջն է:

Ֆրանսիական բանակի սպա Դավիդ Գալուլան, որն Ալժիրում պայքարում էր ապստամբների դեմ, 1959 թ. առաջ է քաշել մի տեսություն, որի էությունն այն է, որ ապստամբների դեմ պայքարում նպատակահարմար է հենվել չեզոք դիրքորոշում ունեցող բնակչության վրա: Նրա կարծիքով՝ «Հակաապստամբական ուժերի խնդիրն այն չէ, թե ինչպես ոսոխազերծել տվյալ տարածքը: ...Խնդիրն այն է, թե ինչպես այդ տարածքը զերծ պահել հետագայում...: Դրան կարելի է հասնել միայն բնակչության աջակցության շնորհիվ: Եթե համեմատաբար հեշտ է միայն ռազմական գործողություններով ցրել և տվյալ տարածքից քշել ապստամբական ուժերին, եթե հնարավոր է ինտենսիվ քաղաքականության գործարկմամբ ոչնչացնել ապստամբական քաղաքական կազմակերպությունները, ապա անհնար է կանխել պարտիզանական խմբերի վերադարձը և քաղաքական բջիջների վերականգնումը, եթե չհամագործակցի բնակչությունը: Հետևաբար բնակչությունը դառնում է հակաապստամբական գործողությունների նպատակ այնպես, ինչպես եղել է հակառակորդի համար: Բնակչության լռելյայն աջակցությունը, նրա ենթարկվելը օրենքին և կարգուկանոնին, նրա համաձայնությունը, այն, ինչ նորմալ պայմաններում ինքնին բնական է, խարխլվել է ապստամբների գործունեության պատճառով: Ճշմարտությունն այն է, որ ապստամբները,

[6] Տես «Асимметрия в вооруженном противоборстве (часть 2)». «Военно-политическое обозрение», 29.08 2012 (http://www.belvpo.com/ru/15441.html):

[7] Տես *Лариса Дериглазова.* Парадокс асимметрии в международном конфликте (http://intertrends.ru/system/Doc/ArticlePdf/807/Deriglazova-09.pdf):

[8] Տես *H. Kissinger.* Diplomacy, New York, 1995, chap. 25, P. 629:

որոնց կազմակերպությունը ձևավորվում է բնակչությունից, մարտավարական տեսանկյունից բնակչության մակարդակում ամենահզոր մրցակիցն են»:

Վերջին տասնամյակում պարտիզանական պայքարը՝ որպես «ուժեղի» դեմ «թույլի» ընդդիմամարտության ձև, իր տեղը զիջել է ահաբեկչությանը՝ դառնալով նման պայքարի ամենատարածված ռազմավարությունը: Գերմանացի Հ. Մյունկլերը պնդում է, որ ահաբեկչությունը պարտիզանական պատերազմներից տարբերվում է բնակչության վերաբերմունքից պակաս կախվածությամբ, հարձակողական բնույթով և պետությունների ենթակառուցվածքներն իր նպատակներին ակտիվորեն ծառայացնելու ունակությամբ: Նա նաև նշում է, որ ժամանակակից ահաբեկչությունը, նպատակ ունենալով հակառակորդին իր կամքի պարտադրումը, «կողմնորոշված է դեպի անհամաչափություն, որի միջոցով տեխնոլոգիապես և կազմակերպական առումով չափազանց զիջող խաղացողները ունակ են պատերազմելու բազմակի ավելի հզոր հակառակորդի դեմ»[9]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ներկայիս աշխարհում, որտեղ առաջատար պետությունների և միջազգային հարաբերությունների ու ներպետական քաղաքական դաշտի այլ սուբյեկտների միջև ներուժային խզվածքը անանախադեպ կերպով աճել է, «թույլը» ձգտում է այդ տարբերությունը կրճատել պայքարի ոչ ավանդական ռազմավարությունների կիրառմամբ, ինչն արտահայտվում է «անհամաչափություն» տերմինով: Այդ անհամաչափ պայքարի առավել տարածված եղանակներն են պարտիզանական (ապստամբական) շարժումներն ու ահաբեկչական գործունեությունը: Ընդսմին հարկ ենք համարում նշել մի հանգամանք, որը մեր կարծիքով, ևս շատ կարևոր է, սակայն քիչ արծածվող, ահաբեկչությունը նույնպես փոխել է իր բնույթը: Եթե 19-րդ դարում և մինչև 20-րդ դարի 70-80-ական թվականներն ահաբեկչությունը կրում էր անձնային բնույթ՝ ուղղված լինելով կոնկրետ անհատի դեմ՝ որպես նրա «չարագործությունների» համար պատժիչ ձեռնարկում, ապա հիմա այն իրագործվում է հասարակության դեմ՝ վախի միջոցով քաղաքական, տնտեսական և այլ բնույթի նպատակների հասնելու համար:

Հակամարտությունների պրոբլեմներ ուսումնասիրող հեղինակավոր հետազոտական կենտրոններն ու առանձին հետազոտողներ այն կարծիքին են, որ ապագա զինված (ռազմական) հակամարտությունները կշարունակեն մնալ որպես պետական քաղաքականության հանգուցային կետեր, ընդսմին դրանց մեջ անհամաչափ զինված հակամարտությունների տեսակարար կշիռն անընդհատ կաճի[10]:

---

[9] *Х. Мюнклер.* Терроризм сегодня. Война становится асимметричной. «International Politik», 2004, № 1:

[10] Տես, օրինակ, *А. С. Тетерюк, Я. А. Чижевский.* Асимметричные конфликты в теории международных отношений: Современные аспекты изучения. «Сравнительная политика», 2015, № 4 (http://lawinfo.ru/assets/images/statiyi/SP-2015-4-4.pdf):

Պետության համար կարևոր խնդիրներից է ընմբռնել ժամանակակից բարդ հակամարտությունների էությունը, ընդդիմամարտող կողմերի ներուժը և ռազմական գործողությունների վարման նրանց մարտավարությունը, քանի որ դրանից են կախված ոչ միայն իր տարաբնույթ ծախքերը (ֆինանսական, նյութական, տեխնիկական և այլն), այլև իր՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի գոյությունը[11]: Սակայն զինված և, հատկապես, անհամաչափ հակամարտությունները էապես փոխել են իրենց բնույթը, իսկ դրանց ուսումնասիրության մեթոդները հնացած են, ուստի և չեն ապահովում անհրաժեշտ արդյունավետություն:

Այս առումով որոշ մասնագետներ որպես ուսումնասիրության հեռանկարային մեթոդներ առաջարկում են իրադարձային և ռեգրեսիոն վերլուծությունները: Իրադարձային վերլուծությունը *(event analysis)* փորձագիտական (էմպիրիկ) քաղաքագիտական ոլորտում ձևավորված մեթոդ է, որով ուսումնասիրվում են միջազգային հարաբերությունները: Դրա էությունն է որոշակի սանդղակի շրջանակում (սովորաբար՝ հակամարտայնության/խաղաղ զարգացումների վիճակներն արտացոլող) քաղաքականության սուբյեկտների միջև փոխգործությունների կանոնավոր ձևարկված ներկայացումը[12]: Տվյալ մեթոդը կարող է հատկապես արդյունավետ լինել ռազմական հակամարտությունների ուսումնասիրության գործում, երբ անհրաժեշտ է լինում համեմատել բազմաթիվ տարբեր իրադաձություններ, որոնք հետագայում խմբակցվում, հաշվարկվում և նկարագրվում են, օրինակ, մասնակիցների թվի և դրանց թվակազմի տերմիններով: Ռեգրեսիոն վերլուծությունը հնարավորություն է տալիս մոդելավորելու միջազգային ասպարեզում տեղի ունեցող ընթացիկ զարգացումները: Դա «թվային տվյալներով աշխատանքի խստորեն ձևարկված ընթացակարգերի համախումբ է, որը հնարավորություն է տալիս որոշելու, թե կա արդյոք ժամանակի ընթացքում վիճակագրորեն որոշարկելի փոփոխություն (զարգացման հետագիծ)»[13]: Անհամաչափ հակամարտությունների հետազոտության համար միջազգային հարաբերությունների վերլուծության քանակական մեթոդների ու մեթոդիկաների կիրառումը հնարավորություն կտա որոշելու կոնկրետ հակամարտությունը բնութագրող տարբեր փոփոխականների միջև պատճառահետևանքային կապերը, ուստի և ավելի համակարգայնորեն նկարագրելու այդ հակամարտության օջախում տիրող ռազմական իրավիճակը, գնահատելու դրա կողմերի ձեռնարկած ռազմարշավների արդյունավետությունը, որոշելու, թե ռազմական գործողությունների որոշակի մարտավարության ընտրության վրա որ գործոններն են ազդում կամ չեն ազդում և գնահատելու ռազմարշավի արդյունավետության աստիճանը:

[11] Տես նույն տեղում:

[12] Տես *Edward E. Azar, Richard A. Brody, Charles A. McClelland.* International Events Interaction Analysis: Some Research Considerations. Beverly Hills, 1972:

[13] Տես «Некоторые аспекты анализа военно-политической обстановкис». Коллективная монография. Под ред. А. И. Подберезкина, К. П. Боришполец. М., с. 512 (http://www.eurasian-defence.ru/sites/default/files/doc/aspectsanalyse.pdf):

Ուսումնասիրելով որոշ անհամաչափ պատերազմների փորձը՝ կարող ենք նկատել դրանց մասնակցող կողմերի նպատակների, ընտրած մարտավարությունների և ռազմական հնարների որոշակի ընդհանրություններ, ինչը հզոր «խաղացողներին» ստիպում է համապատասխանաբար վերանայել իրենց ռազմական դոկտրինները, զինվորական կադրերի պատրաստման համակարգը և ավելի մեծ ուշադրություն դարձնել հնարավոր վտանգների վաղ հայտնաբերմանն ու կանխմանը:

Մասնավորապես՝ վերջին տասնամյակների ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և այլ առաջատար պետությունների ռազմական դոկտրիններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում անհամաչափ զինված հակամարտություններում պետության պաշտպանությանն ու հաղթանակի կերտմանը[14]:

Ռեսուրսների և ուժերի առումով միջազգային հարաբերությունների ավելի թույլ մասնակիցների համար անհամաչափ ռազմավարությունները ավելի հաճախ դառնում են հաջող ավարտ ունեցող պայքարի միակ ձևը: Հարկ է նշել, որ ժամանակակից զինված հակամարտություններում անհամաչափությունը դարձել է գրեթե բնութագրական երևույթ:

[14] Տես, օրինակ, “Doctrine for the Armed Forces of the United States”. Joint Publication 1. 25 March 2013. Incorporating Change 1, 12 July 2017, P. I-6 (https://www.jcs.mil/Portals/36/Documents/Doctrine/pubs/jp1_ch1.pdf); “UK Defence Doctrine”. Joint Doctrine Publication 0-01 (JDP 0-01). Ed. 5. Ministry of Defence, November 2014, PP. 26-27 (https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/389755/20141208-JDP_0_01_Ed_5_UK_Defence_Doctrine.pdf); «Военная доктрина Российской Федерации». Утверждена Президентом РФ 25.12.2014, с. 8 (http://static.kremlin.ru/media/events/files/41d527556bec8deb3530.pdf):

КОНФЛИКТОЛОГИЯ

АСИММЕТРИЯ КАК СТРАТЕГИЯ. СУЩНОСТЬ И ОСОБЕННОСТИ АСИММЕТРИЧНЫХ КОНФЛИКТОВ

Н. Б. ЕНИКОЛОПОВА, майор запаса, ученый-аналитик Центра исследований истории военного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Многие государства, подвергшиеся агрессии, для ослабления атакующей мощи противника или выигрыша времени для организации более эффективной обороны использовали методы партизанской войны, несущие в себе элементы сетецентричности. Подобную тактику в особенности часто использовала сторона, явно уступающая в военной мощи. Такой тип войны получил название «асимметричной войны», когда вооруженным силам одного государства противостоят иррегулярные формирования или повстанческие силы другой стороны.

В последние десятилетия терроризм заменил партизанскую борьбу, став весьма распространенной стратегией борьбы «слабых» против «сильных». Современный терроризм стал средством насильственного навязывания противнику своей воли и «ориентирован на асимметрию, посредством которой игроки, технологически более слабые, … оказываются способными воевать против него».

Таким образом, в современном мире разрыв между ведущими государствами, с одной стороны, и другими субъектами международных отношений и внутригосударственного политического пространства, с другой, постоянно растет, и слабый противник стремится компенсировать эту разницу посредством применения нетрадиционных стратегий, т. е. асимметричностью противостояния.

Многие авторитетные исследовательские центры, изучающие проблемы конфликтов, сходятся в том, что в будущем вооруженные (военные) конфликты будут оставаться ключевым аспектом международной политики государств. Вместе с тем, конфликты продолжают развиваться и усложняться, приобретая все более нелинейный характер. В связи с этим и методы их изучения в настоящее время уже устарели и недостаточно эффективны. Следовательно ряд специалистов в качестве современных и перспективных методов исследования асимметричных конфликтов предлагают применять ивент-анализ и регрессионный анализ.

CONFLICTOLOGY

ASYMMETRY AS A STRATEGY. THE ESSENCE AND FEATURES OF ASYMMETRIC CONFLICTS

N. B. YENIKOLOPOVA, Major (Ret.), Research Fellow, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA

SUMMARY

Many states undergoing aggression used guerrilla warfare methods that carried elements of network-centricity in order to weaken the attacking power of the enemy or gain time to organize more effective defense. Such tactics was particularly often used by a party, clearly inferior in military power. This type of war is called “asymmetric war” with the armed forces of a state being opposed by irregular units or insurgent forces of the other side.

In the last decades, terrorism has replaced the guerrilla warfare, becoming a very common struggle strategy of the “weak” against the “strong”. Modern terrorism has become a means of forcibly imposing one’s will on an enemy and is “oriented towards asymmetry, through which

technologically weaker actors ... turn out to be able to fight against the adversary".

Thus, in the modern world, the gap between the leading nations, on the one hand, and other subjects of international law and domestic political space, on the other, is constantly growing, and a weaker adversary seeks to compensate for this difference by applying unconventional strategies, i.e., asymmetric opposition.

Many established think tanks studying conflict issues agree that in the future, armed (military) conflicts will remain a key aspect of the foreign policy of states. At the same time, conflicts continue to grow and become more complex, acquiring increasingly non-linear character. In this regard, the methods of conflict research are now obsolete and not sufficiently effective. Consequently, a number of specialists suggest using event analysis and regression analysis as modern and promising methods to study asymmetric conflicts.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Ն. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ գիտնական-վերլուծաբան

Քաղաքագիտական ուսումնասիրությունների կարևոր պրոբլեմներից է քաղաքական մշակույթի և պետական կառավարման համակարգի փոխհարաբերությունների հարցը: «Քաղաքական մշակույթ» ասելով մենք հասկանում ենք «այն քաղաքական երևույթներից մեկը, որը գոյություն ունի բուն քաղաքականությունից անբաժանելիորեն և միևնույն ժամանակ քաղաքական կեցության կազմում ձևավորում է հարաբերականորեն ինքնուրույն բաղադրիչ: Նրա նշանակությունն այն է, որ նա բնութագրում է տվյալ կեցության իրագործման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, թե ինչպես է իրականացվում քաղաքական իշխանությունը, և ներկայացնում են, թե ինչպես են ընդունվում ղեկավար որոշումները»[1], ինչը հատկապես կարևոր է պաշտպանական ոլորտում:

Սույն հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրել 18-րդ դարի գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը[2]: Սակայն քաղաքական մշակույթի՝ որպես հետազոտության ինքնուրույն օբյեկտի ուսումնասիրությունը 20-րդ դարի 50-ական թվականներին սկսել են ամերիկացի քաղաքագետներ Գ. Ալմոնդը և Ս. Վերբան[3]: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քաղաքական մշակույթը մարդկանց այն հոգեբանական կողմնորոշումներն են, որոնք պայմանավորում են նրանց վերաբերմունքն այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են կուսակցությունը, կառավարությունը, սահմանադրությունը և այլն:

---

[1] Տես *А. А. Борисенков.* О понятии политической культуры. «Социум и власть», 2012, № 5:

[2] Տես *D. Denby.* Herder: Culture, anthropology and the Enlightenment. “History of Human Sciences”, 2005, Vol. 18, Issue 1:

[3] Տես *G. Almond, S. Verba.* The civic culture: political attitudes and democracy in five nations. London, 1989, PP. 337–342:

Ըստ էության, քաղաքական մշակույթն արտացոլում է հասարակության և քաղաքական համակարգի՝ որոշումներ ընդունող կենտրոնների միջև հաղորդակցությունը, ընդսմին «դրա շրջանակներում քաղաքական ծրագրերի ու լոզունգների են վերածվում հասարակության պահանջները (կուսակցությունների, շահերի խմբերի, ընտրությունների և այլ հաստատությունների միջոցով): Եվ, միևնույն ժամանակ, նա հանդես է գալիս որպես հասարակության վերահսկման եղանակ»[4]:

Ըստ վերը բերված սահմանման՝ քաղաքական մշակույթը ներառում է խորհրդարանական և խորհրդարանականության մշակույթները: Հարկ է նաև նշել, որ մասնագիտական գրականության մեջ խորհրդարանական և խորհրդարանականության մշակույթները տարբերակված են[5]: Ըստ որում, խորհրդարանական մշակույթը արտացոլում է պետություններում կիրառվող տարբեր պետական կառավարման տարաբնույթ սկզբունքներով կազմակերպված համակարգերում խորհրդարանի գործարկման պրակտիկան (որոշումների ընդունման ընթացակարգեր, պատգամավորական վարքականոններ, մյուս ղեկավար մարմինների հետ հարաբերություններ և այլն): Մինչդեռ խորհրդարանականության քաղաքական մշակույթ ասելով մենք հասկանում ենք քաղաքական մշակույթի այն հատվածը, որը բնորոշ է խորհրդարանական համակարգ ունեցող պետություններին[6]:

Ընդհանուր առմամբ քաղաքական մշակույթը բավական ընդգրկուն հասկացություն է: Դա պայմանավորված է հասարակության շերտավորումներով և բազմաթիվ սոցիալական, էթնիկական, կրոնական կամ ժողովրդագրական խմբերի զանազան ենթամշակույթների առկայությամբ: Ենթամշակույթները քաղաքական մշակույթներին ուղեկցող երևույթներ են, ուստի կարևոր է, որ դրանք միմյանց հավասարակշռեն և սկզբունքորեն չհակասեն տիրապետող քաղաքական մշակույթին:

Պատահական չէ, որ հաճախ քաղաքական գործընթացներում հաստատութենական գործառույթները պայմանավորվում են քաղաքական մշակույթով: Այսպես. խորհրդարանական կառավարմամբ Ճապոնիայի ու Մեծ Բրիտանիայի քաղաքական մշակույթների միջև եղած տարբերությունները արտացոլվել են դրանց սահմանադրություններում: Օրինակ՝ Ճապոնիայում կայսրը պարտավոր է ընդունել կառավարության բոլոր որոշումները[7]: Մինչ-

[4] Տես *А. А. Ширинянц.* Политическая культура: смысл и методологическое значение категории (https://portal-slovo.ru/history/35094.php?ELEMENT_ID=35094&SHOWALL_1=1):

[5] Տես, օրինակ, *Գ. Ալմոնդ, Ս. Վերբա,* Նշ. աշխ.:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես “The Constitution of Japan”, Article 3. “Prime Minister of Japan and His Cabinet” (https://japan.kantei.go.jp/constitution_and_government_of_japan/constitution_e.html):

դեռ Մեծ Բրիտանիայում միապետն իրավունք ունի հաստատելու կամ մերժելու Խորհրդարանի ու Կառավարության որոշումները[8]:

Ըստ էության, քաղաքական մշակույթը, պայմանավորելով ներքին և արտաքին քաղաքականության ուղեգծերը, այն դիրքորոշումների, համոզմունքների, արժեքների և դրանք արտահայտող խորհրդանիշների համախումբն է, որոնք «ծառայում են հասարակության բոլոր անդամների քաղաքական փորձի կանոնավորմանը և քաղաքական վարքի կարգավորմանը»[9]:

Խորհրդարանականության քաղաքական մշակույթում առանձնակի դեր ունի քաղաքացիական հասարակությունը: Այն կարելի է սահմանել որպես «համախումբ պետությունից համեմատաբար մեկուսի կամավոր ընկերակցությունների, որոնք գործում են ինքնագործունեության հիմունքներով: Ներառում է՝ անդամակցություն միություններին և շարժումներին, պատրաստակամություն հանդուրժողաբար վերաբերվելու տարբեր քաղաքական հայացքների, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությանը տարբեր միությունների, մարդու քաղաքացիական պատասխանատվությունը հասարակության առջև: Առաջին հերթին պաշտպանում է անձի շահերը, իրավունքներն ու ազատությունները պետության ոտնձգություններից»[10]:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ներկայումս հասարակագիտության մեջ քաղաքացիական հասարակության հասկացությունը դիտարկվում է ըստ երկու միանգամայն տարբեր մոտեցումների: Առաջին դեպքում այն բնութագրվում է որպես հասարակական համակարգ, հանրութային (սոցիետալ) ընկերակցություն, որը հասել է որոշակի աստիճանի քաղաքակրթական զարգացման: Երկրորդ մոտեցմամբ քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես պետությանը հակադրվող մի առանձնահատուկ հանրույթ, անհատի և պետության հաղորդակցումն ապահովող միջանկյալ օղակ[11]: Վերջին մոտեցումը ներկայումս ունի ավելի մեծ տարածում:

Ինչպես նշում է գերմանացի փիլիսոփա Յ. Հաբերմասը, որը մեծ ներդրում ունի քաղաքացիական հասարակության փիլիսոփայական տեսության զարգացման գործում, այն մի հասարակական ոլորտ է, որը գտնվում է անհատի և պետության միջև, և որում տեղի է ունենում նրանց հաղորդակցումը: Հաբերմասը նաև առաջ է քաշել հասարակայնության (հանրայնության) հասկացությունը, որը առանցքային է դարձել քաղաքացիական հասա-

[8] Տես “Royal Assent”. “UK Parliament” (https://www.parliament.uk/about/how/laws/passage-bill/commons/coms-royal-assent/):

[9] Տես *В. В. Рябев*. Политическая культура как качественная характеристика политической системы. «Научно-техническая конференция МГГУ» (http://www.mstu.edu.ru/science/conferences/11ntk/materials/section1/section1_7.html):

[10] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: Հավելված. «Հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀԲ», 2006, հմ. 2, էջ 57:

[11] Այս մասին ավելի հանգամանորեն տես *И. В. Налетова*. Политическая культура и гражданское общество: особенности взаимодействия. «Социально-экономические явления и процессы», 2015, т. 10, № 6:

ռակության ձևավորումը բացատրող մոդելների համար: Նրա կարծիքով՝ քաղաքացիական հասարակության դերն այն խնդիրների կարգավորումն է, որոնք չի լուծում պետությունը[12]:

Որոշ ռուս քաղաքագետ հետազոտողներ (Տ. Լեբեդևա, Օ. Օռլովա և ուրիշներ) նշում են, որ քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարական արժեքների, այդ թվում՝ խորհրդարանականության քաղաքական մշակույթի, կարևոր բաղկացուցիչ մասերից է: Ընդսմին քաղաքացիական հասարակության հետ խորհրդարանի հարաբերությունները պետք է ձևավորվեն խստագույնս սահմանադրական նորմերի պահպանմամբ և իրագործվեն խելամտորեն մշակված քայլերով՝ քաղաքական մշակույթի շրջանակներում:

Ինչ վերաբերում է որոշումների ընդունման քաղաքական մշակույթին, ապա կան տարաբնույթ տեսություններ, որոնք փորձում են առավել սպառիչ կերպով բացատրել քաղաքական-կառավարային որոշումների ընդունման ընթացքը, ընդսմին դրանց մեթոդաբանական մոտեցումների համար որպես տարանջատիչ ծառայում է պետական կազմակերպվածքի երկակի բնույթի գաղափարը, ըստ որի՝ այն հանդես է գալիս և՛ որպես համակարգային ամբողջություն, և՛ որպես առանձին մարդկանց ու նրանց խմբերի ագրեգատային բազմություն[13]: Այդ տեսություններից հիշատակենք «սահմանափակ ռացիոնալության» (Հ. Սայմոն և ուրիշներ) հայեցակարգը, «ցանցային հայեցակարգը» (Դ. Նոուկ, Ֆ. Ռիչարդսոն և ուրիշներ), «դինամիկական փուլաշրջանի» (Ձ. Անդերսոն, Բ. Ձենկինս և ուրիշներ), «կազմակերպական հաստատութենականության» (Ձ. Մարչ, Ձ. Օլսեն և ուրիշներ) հայեցակարգերը, որոնք կարելի է միավորել «ճանաչողական հայեցակարգի» խմբում, և «մոդելների խումբը», որը միավորում է «վարքաբանական մոդելը» (Հ. Լասուել, Դ. Լեոներ և ուրիշներ), «համընդհանուր ռացիոնալության» հայեցակարգը (Ք. Էռոու, Է. Դաունս և ուրիշներ), «ինկրեմենտալիստական մոդելը» (Չ. Լինդբլոմ, Է. Վուդհաուզ և ուրիշներ), «խմբային ներկայացուցչության հայեցակարգը» (Ռ. Դալ, Տ. Շմիտեր և ուրիշներ)[14]: Միևնույն ժամանակ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Բ. Նելսոնը հոռետեսորեն է գնահատում ամբողջական քաղաքական-կառավարային տեսության ստեղծման հնարավորությունը՝ նշելով, որ «եթե նկատի առնենք մասնագետների առջև ծառացող խնդիրների ծավալը, ապա թվում է, թե ամբողջի մոդելավորումը գիտաճյուղի հնարավորությունների սահմաններից դուրս է»[15]:

---

[12] Տես *А. С. Туманова.* Концепции гражданского общества западных обществоведов XX века. «Гражданское общество в России и за рубежом», 2013, № 1:

[13] Տես, օրինակ, *В. А. Косс*. Анализ структурной модели государства с позиции новой кибернетики (http://www.immsp.kiev.ua/perspages/koss_va/publ/14_upr_gos.pdf):

[14] Այս տեսությունների ու մոտեցումների հանգամանալից վերլուծությունը տես *А. А. Дегтярев*. Принятие политических решений. М., 2004, сс. 85–86:

[15] *Б. Нельсон*. Социальная политика и управление: общие проблемы. «Политическая наука: новые направления». Под ред. Р. Гудина, Х. Д. Клингеманна. М., 1999, с. 552:

Վերը թվարկված հայեցակարգերում ու մոդելներում ներակայորեն հաշվի է առնվել տիրապետող քաղաքական մշակույթի ազդեցությունը: Օրինակ՝ Հարոլդ Լասուելն իր վարքաբանական մոդելում, որը մշակել է 1930–1950 թթ., որոշումների ընդունումը դիտարկում է երեք՝ մակրո-, միկրո և մեզո- մակարդակներում: Ընդսմին մակրոքաղաքական մակարդակում այդ գործընթացը ներկայանում է որպես մարդկանց միջև առանցքային արժեքների (արժեքավոր ռեսուրսների) բաշխում, որը կատարվում է պետական հաստատությունների գործունեության միջոցով: Միկրոմակարդակում որոշումների ընդունումը մեծապես պայմանավորված է տարբեր մարդկանց անհատական վարքով, այսինքն՝ կախված է նրանց շարժառիթներից, հույզերից ու զգացմունքներից, դիրքորոշումներից, ուստի որոշումների ընդունման մեխանիզմում պետք է հաշվի առնվեն քաղաքական առաջավարի անձնային հատկությունները[16]:

Մեր կարծիքով՝ ղեկավար քաղաքական որոշումների ընդունման քաղաքական մշակույթում առավել կարևոր է այն պահանջի կատարումը, որ որոշումն ընդունողը և կատարողը լինեն տարբեր սուբյեկտներ, հակառակ դեպքում և՛ որոշումը կլինի աղճատված, որպեսզի հնարավոր լինի հեշտությամբ կատարել, և՛ կատարումը թերի[17]: Ըստ էության այդ ամենը կազմում է քաղաքական մշակույթի ձևավորման հիմքը:

Անդրադառնալով որոշումների ընդունման վրա խորհրդարանականության քաղաքական մշակույթի ազդեցության հարցին՝ նշենք, որ առավել կարևոր հարցերից մեկը, որը պահանջում է լուրջ ուսումնասիրություններ, մեր կարծիքով այն է, թե որքանով պատգամավորի գաղափարախոսական նախապատվությունները, նրա քաղաքականացածությունը կազդի այս կամ այն որոշման ընդունման վրա: Այս հարցը մեզ թվում է հույժ կարևոր, քանի որ մեզանում դեռ չի ձևավորվել խորհրդարանականության քաղաքական մշակույթ: Այսպես. ՌԴ Վորոնեժի մարզի Դումայի նախագահի տեղակալ Տ. Մեշչերյակովան նշել է, որ իրենց մարզում բնակչությունը դեռ շատ չէ քաղաքականացված, ուստի լուրջ ազդեցություն չի դիտվել «միայն գուցե, այն ժամանակ, երբ ձևավորվում էին Դումայի իշխանության մարմինները, ընտրվում էին կոմիտեների նախագահները, նախագահի տեղակալները»[18]:

---

[16] Տես *H. Lasswell*. Power and Personality. N.Y., 1948, PP. 105–107:

[17] Տես *Հ. Ս. Քոթանջյան, Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Ա. Ա. Մինասյան,* «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: «ՀԲ», 2009, հմ. 1–2:

[18] *Т. Мещерякова*. Нас объединяет стремление решать проблемы «Коммуна», 5 мая 2005 г. (բերվում է ըստ՝ *Д. В. Сосунов.* Особенности принятия решений законодательной властью после введения пропорционально-мажоритарного принципа в регионах (на примере Воронежской области) (https://cyberleninka.ru/article/n/osobennosti-prinyatiya-politicheskih-resheniy-zakonodatelnoy-vlastyu-posle-vvedeniya-proportsionalno-mazhoritarnogo-printsipa-v/viewer)):

Այստեղ կարևոր դեր կարող է խաղալ հակադարձ կապը, երբ պատգամավորի ցանկացած քայլի առնչությամբ սոցիալական միջավայրից ստացվում են համապատասխան ազդանշաններ: Մեր կարծիքով՝ լավ արդյունք կարող է տալ նաև հասարակական լսումների ընթացակարգի կիրառումը:

Նշենք, որ տվյալ հարցերը Արևմտյան պետություններում հիմնականում հաջողությամբ լուծված են: Ուստի պետք է ավելի լուրջ կերպով ուսումնասիրել նրանց փորձը: Սակայն նրանց խորհրդարանների աշխատանքի պրակտիկան չի կարելի մեխանիկորեն պատճենել: Տեղայնացման ժամանակ պարտադիր կերպով պետք է հաշվի առնվեն մեր մտածելակերպի ու հոգեկերտվածքի յուրահատկությունները, մեր ներպետական սոցիալ-քաղաքական առանձնահատկությունները, իրավական համակարգի պահանջները: Սակայն այդ ամենը չի կարող խանգարել մեզ, որ սովորենք ուրիշներից և գիտատեսական ու գործնական գիտելիքների հենքի վրա ստեղծենք ու զարգացնենք մեր ազգային խորհրդարանական քաղաքական մշակույթը, առանց որի չի կարող արդյունավետ կերպով գործել պետական կառավարման համակարգը, ինչպես չի կարող անխափան կերպով գործել ցանկացած մեքենա, եթե դրա մասերը միմյանց լավ չեն հարմարեցված: Իսկ պետական կառավարման համակարգի առանձին տարրերի գործունեությունը կարող է գաղափարապես միավորել ու ներդաշնակել միայն խորհրդարանական քաղաքական մշակույթը:

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

ПОЛИТИЧЕСКАЯ КУЛЬТУРА ПАРЛАМЕНТАРИЗМА КАК ВАЖНЫЙ ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ ЭФФЕКТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

Н. Г. ГРИГОРЯН, аспирант Института философии, социологии и права НАН РА, старший научный аналитик Центра региональных стратегических исследований НИУО МО РА

РЕЗЮМЕ

В системе государственного управления значительную роль играет политическая культура, которая регулирует механизмы принятия политических решений, деятельности государственных органов власти и руководящих лиц, их взаимоотношения.

Роль политической культуры особенно существенна в тех государствах, где принята парламентская форма правления, поскольку здесь в систему отправления власти вовлечен очень широкий круг лиц. В данном случае в сферу общей политической культуры входят как парламентская культура, так и политическая культура парламен-

таризма. Первая определяет нормы депутатской этики, механизмы деятельности парламента, в том числе процедуры принятия решений, вторая – всю политическую жизнь в государстве. При этом ее важными составляющими являются гражданское общество и система выработки и принятия политических решений.

На базе анализа обширной теоретической литературы раскрыты сущность и содержание основных понятий и составляющих политической культуры парламентаризма.

PUBLIC ADMINISTRATION

THE POLITICAL CULTURE OF PARLIAMENTARISM AS A CRITICAL FACTOR IN PROVIDING FOR THE EFFECTIVE FUNCTIONING OF THE PUBLIC ADMINISTRATION SYSTEM

N. G. GRIGORYAN, Graduate Student, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA, Senior Research Fellow, Center for Strategic Regional Analyses, NDRU, MOD, RA

SUMMARY

In the public administration system a significant role is played by the political culture, which regulates the mechanisms for political decision-making, the activities of state authorities and leaders, as well as their relationships.

The role of political culture is especially critical in those states where a parliamentary form of government is adopted, since a very wide circle of people is involved there in the exercise of power. In this case, the sphere of general political culture includes both the parliamentary culture, and the political culture of parliamentarism. The first defines the norms of parliamentary ethics, the mechanisms for the parliament's activities, including decision-making procedures, the second – the entire political life in the state. Meanwhile, its important components are the civil society, and the system of developing and making political decisions.

Based on the analysis of extensive theoretical literature, the article reveals the essence and content of the basic concepts and components of the political culture of parliamentarism.

ՆՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դ. Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների սերտացումն ուղեկցվում է այդ պետություններում նոր եվրասիականության գաղափարախոսության ազդեցության մեծացմամբ: Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության շրջանում աճում է այն եվրասիականների դերը, որոնք սերտորեն համագործակցում են նոր եվրասիականության ռուսաստանյան դպրոցի ներկայացուցիչների հետ: Տվյալ միտումների հաշվառմամբ՝ չի կարելի բացառել, որ դրանք կարող են նախադրյալներ ստեղծել նաև Թուրքիա–Ռուսաստան–Ադրբեջան ձևաչափով տարածաշրջանային համագործակցության ծավալման համար: Ուստի նոր եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգի շրջանակներում Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացման հնարավորությունների բազմակողմանի ուսումնասիրությունը էական կարևորություն ունի ՀՀ տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից:

ՆՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Եվրասիականության գաղափարական-փիլիսոփայական ուղղությունը ձևավորվել է 1920-ական թթ. սկզբին ռուս մտավորականության շրջանում (Սավինցկի, Տրուբեցկոյ և ուրիշներ): Այն պատմական և աշխարհագրական տեսանկյունից յուրովի է իմաստավորում Ռուսաստանի տեղն ու դերը Եվրասիայի մայրցամաքում: Դրա ելակետային դրույթն այն է, որ Ռուսաստանն իր ձևավորման և զարգացման պատմական առանձնահատկություններով և աշխարհագրական դիրքով ո՛չ Արևմուտք է, ո՛չ էլ Արևելք, այլ մի յուրահատուկ աշխարհ է իր ինքնատիպ *եվրասիական* ինքնությամբ ու քաղաքակրթությամբ[1]:

[1] Տես *Н. Трубецкой.* Наследие Чингисхана. Взгляд на русскую историю не с Запада, а с Востока. Берлин, 1925, с. 60; *П. Савицкий.* В борьбе за Евразийство. Париж, 1931, с. 59 (https://archive.org/details/ddesokk_gmail_1931/page/n57):

Հետխորհրդային շրջանում եվրասիականության (նոր եվրասիականության) գաղափարախոսությունը զարգանում է աշխարհաքաղաքականության ռուսական դպրոցի կայացման համատեքստում: Այդ դպրոցի ներկայացուցիչները (Ա. Դուգին և ուրիշներ) շարունակում են ինտենսիվ քայլեր կատարել Խորհրդային Միության փլուզմամբ պայմանավորված գաղափարական վակուումը լրացնելու և Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական աշխարհառազմավարական ուղենիշները մշակելու ուղղությամբ: Այս համատեքստում էական ձեռնարկում էր արդի աշխարհակարգի պահանջներին եվրասիականության գաղափարների (օրինակ՝ Տրուբեցկոյի «հակաարևմտյան» տեսությունը և այլն) համապատասխանեցումը և միջազգային հարաբերություններում Ռուսաստանի՝ որպես կայսերական ավանդույթներ կրող պետության տեղի ու դերի գնահատումը:

Նոր եվրասիականության ռուսաստանյան դպրոցի ներկայացուցիչների (Լ. Գումիլյով[2], Ա. Դուգին[3] և ուրիշներ) աշխատությունների և հրապարակային ելույթների ուսումնասիրության արդյունքներով հնարավոր է դառնում առանձնացնել նոր եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգի հետևյալ առանցքային դրույթները.

- Ռուսաստանը, չլինելով ո՛չ Արևմուտք, ո՛չ Արևելք, այլ ունենալով մի երրորդ՝ եվրասիական, ինքնություն, Եվրասիայի կենտրոնական միջուկն է, որի շուրջ ձևավորվել է եվրասիական քաղաքակրթությունը: Դրանով հիմնավորվում են Ռուսաստանի շուրջ ընդհանուր պատմական անցյալ և ավանդական մշակութային արժեքներ ունեցող տարբեր եվրասիական ազգերի ու պետությունների համախմբման պատմական անհրաժեշտությունն ու «անխուսափելիությունը»,
- Ռուսաստանի պատմական զարգացման և եվրասիական քաղաքակրթության ձևավորման գործում էական դեր է խաղացել սլավոնական և թյուրք-թաթարական («թուրանական») մշակույթը: Սլավոնա-թյուրքական տարրերի միահյուսումը մեծապես ապահովել է Ռուսաստանի աշխարհաքաղաքական ինքնուրույնությունը[4],
- իր եվրասիական ինքնության հաշվառմամբ՝ Ռուսաստանը արտաքին քաղաքականության հիմքում պետք է դնի ոչ թե ատլանտյան, այլ եվրասիական հայեցակարգը: «Եվրասիականություն – ատլանտականություն» աշխարհաքաղաքական[*] և արժեքային-գաղափա-

[2] Տես *Л. Гумилев.* Древняя Русь и Великая степь. М., 1989, *նույնի՝* Из истории Евразии. М., 1993:

[3] Տես *А. Г. Дугин.* Основы геополитики. М., 1997, *նույնի՝* Геополитика. М., 2011; *նույնի՝* Основы Евразийства. М., 2002:

[4] Տես *Н. Трубецкой.* Европа и человечество. Наследие Чингисхана. М., 2000:

[*] Նոր եվրասիականության տեսության շրջանակներում Ա. Դուգինը առաջ է քաշել «ցամաքային» (Ռուսաստան-Եվրասիա) և «ծովային» (ԱՄՆ, Բրիտանիա) ուժերի հավերժ հակամարտության տեսությունը, որում զգալի չափով հենվում է անվանի բրիտանացի

ական* հակամարտության պայմաններում Ռուսաստանի առաքելություններն են Արևմուտքի արժեքների մերժումը, իր մշակույթի և ինքնության պահպանումը, անկախ արտաքին քաղաքականության վարումը,

- այդ աշխարհաքաղաքական ռազմավարության իրագործումը ենթադրում է օրգանապես կապված տարբեր քաղաքակրթական միավորների (օրինակ՝ սլավոնա-թյուրքական) ձևավորմամբ Ռուսաստանի շուրջ Եվրասիայի մայրցամաքային տարածքների միավորում: Նման հզոր մայրցամաքային բևեռի ձևավորումը կընդլայնի Եվրասիայում «ատլանտյան» ուժերի ծավալումը զսպելու Ռուսաստանի ռեսուրսները,
- Ռուսաստանն իր բնակչությամբ, տարածքով և պատմական զարգացման առանձնահատկություններով հանդերձ անտարակույս ունի նման «մայրցամաքային անկախության» պահպանման և եվրասիական ինտեգրման լիարժեք ներուժ: Եվրասիական ինտեգրումը ենթադրում է, մի կողմից, հետխորհրդային պետությունների աստիճանական ինտեգրում, մյուս կողմից՝ առաջատար եվրասիական ուժերի հետ (Չինաստան, Հնդկաստան, Թուրքիա, Իրան և այլն) երկկողմ և բազմակողմ համագործակցության խորացում:

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ «ՌՈՒՍԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Եվրասիականության քննարկումը Թուրքիայի քաղաքական օրակարգ մտավ 1990-ական թթ. սկզբին և էապես ուժեղացավ 2000-ականներին՝ ստանալով ռազմաքաղաքական բյուրոկրատիայի տարբեր շերտերի, ինչպես նաև ձախ ազգայնական և պահպանողական ուժերի աջակցությունը: Տվյալ քննարկումը ձեռնարկվեց հետսառըպատերազմյան աշխարհակարգում Թուրքիայի՝ որպես կայսերական ժառանգության կրողի և Արևելքի ու

աշխարհագետ Հ. Մաքինդերի «Հարտլենդի» հայեցակարգի վրա, որտեղ վերջինս համաշխարհային քաղաքականության մեջ առանցքային համարում էր Եվրասիայի մայրցամաքը և նրա միջուկ Ռուսաստանը, որի շուրջ ձևավորվել է Եվրասիայի քաղաքակրթությունը: Զարգացնելով Մաքինդերի տեսությունը՝ Ա. Դուգինը պնդում է, որ մյուս բոլոր եվրասիական տարածքները ափամերձ են («Ռիմլենդ»), որոնց հիմնական առաքելությունն է Ռուսաստանի՝ «Հարտլենդի» հետ միավորմամբ դիմագրավել «ծովային ուժերին»՝ ԱՄՆ-ին, Բրիտանիային և այլ պետությունների: Ուստի Ռուսաստանի խնդիրն է համագործակցել «Ռիմլենդի» ուժերի հետ:

* «Եթե եվրաատլանտյան ուժերին գերազանցապես բնորոշ են ազատական ժողովրդավարությունը անհատապաշտությունը, պրագմատիզմը, ապա Ռուսաստանին և եվրասիական ինքնություն ունեցող այլ մայրցամաքային ուժերին (Չինաստան, Թուրքիա, Իրան և այլն) առավել հարազատ են պահպանողականությունը, ավանդական մշակութային արժեքները, կոլեկտիվիզմ հայրենասիրությունը» (տես *А. Дугин.* Внутренняя геополитика России. «Основы геополитики». М., 2000, с. 170):

Արևմուտքի միջև «կամրջի» նոր աշխարհաքաղաքական դերի իմաստավորման, Ռուսաստանի հետ հարաբերությունների նորովի գնահատման, Կենտրոնական Ասիայում «պանթուրքական» ռազմավարության վերանայման առանցքների շուրջ:

Թեև վերջին շրջանում Թուրքիայում եվրասիականության քննարկումը տեղի է ունեցել «եվրոպականացման»[*], «պանթուրքականության»[**], «նոր օսմանականության»[***] և այլ առանցքների շուրջ, այնուամենայնիվ, ներկայումս նրա քաղաքական օրակարգում առաջատար դիրքեր է զբաղեցնում այսպես կոչված «ռուսակենտրոնությունը», որն զգալի չափով կրում է նոր եվրասիականության ռուսական դպրոցի գաղափարական ազդեցությունը: Տվյալ մոտեցումը հայեցակարգային հիմքերի վրա են դրել և զարգացնում են ձախակողմյան հայացքներ ունեցող Դողու Փերինչեքի ու նրա որդի Մեհմեթ Փերինչեքի գլխավորությամբ, որոնք սերտ կապեր ունեն Ա. Դուգինի և 2003 թ. նրա ստեղծած «Միջազգային եվրասիական շարժման» հետ: Կրեմլի հետ սերտորեն առնչվող Ա. Դուգինը, որի աշխատությունները շարունակում են էական ազդեցություն ունենալ Ռուսաստանի ռազմաքաղաքական վերնախավի տարբեր շերտերի վրա, վերջին 10–15 տարիներին ինտենսիվորեն

---

[*] «Եվրոպականացման» ուղղության կողմնակիցները, որոնք Թուրքիայի զարգացումը տեսնում են Արևմուտքի հետ հարաբերությունների խորացման ձևով և այդ համատեքստում են դիտում եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության աճումը՝ որպես ԵՄ-ի համար Թուրքիայի կարևորությունը մեծացնելու և Եվրասիայում թուրքական մոդելով «եվրոպականացումը» տարածելու միջոց: Սակայն այս ուղղության դերն էապես նվազեց վերջին տարիներին Արևմուտք–Թուրքիա հարաբերությունների սրման պատճառով:

[**] Եվրասիականության «պանթուրքական» քննարկումը Թուրքիայի աշխարհաքաղաքական դերի աճումը տեսնում է Եվրասիայում էթնոմշակութային ռեսուրսի միավորմամբ թյուրքական ժողովուրդներով բնակեցված տարածքներում Թուրքիայի ազդեցության մեծացման միջոցով: Այս քննարկումը առավել տարածված է պանթուրքական ինտելեկտուալների և ուլտրաազգայնական քաղաքական ուժերի շրջանում՝ էապես հակասելով եվրասիականության ռուսական գաղափարախոսությանը, քանի որ «պանթուրքական» եվրասիականները համարում են, որ Ռուսաստանը Եվրասիայում իրենց հիմնական հակառակորդն է, և որ եվրասիական տարածաշրջանում ապրող թուրքերը Ռուսաստանի նկատմամբ ունեն աշխարհագրական և մշակութային առավելություն, ուստի պետք է «թոթափեն» Ռուսաստանի գերակայությունը: Միևնույն ժամանակ, ռուսական եվրասիականության կողմնակիցները պանթուրքականը դիտում են որպես Արևմուտքի աջակցությանն արժանացած, մինչդեռ Արևմուտքի նպատակն է խարխլել «եվրասիական քաղաքակրթության հիմքը կազմող թյուրք-սլավոնական միասնությունը»:

[***] Եվրասիականության «նոր օսմանականության» ուղղությունը կենտրոնացած է Օսմանյան կայսրության նախկին տարածքներում Թուրքիայի ազդեցության մեծացման վրա: Թեև, մի կողմից, նոր օսմանականությունը ուղղակիորեն չի հակասում ռուսական տեսակետին, քանի որ Եվրասիայի թյուրք ժողովուրդները չեն մտնում հետօսմանյան տարածքի մեջ: Այնուամենայնիվ, երկու մոտեցումների կայսերական հիմքերի և պատմական հակամարտայնության բերումով, նկատվում է փոխադարձ անվստահություն:

ներգրավված է եղել Թուրքիայում եվրասիական ցանցի ձևավորման ու զարգացման, երկու պետություններում գործող եվրասիական շարժումների միջև համագործակցության խորացման գործում: Դրա շնորհիվ Ա. Դուգինի թուրք գործընկերներն էական ազդեցություն են ձեռք բերել հատկապես Թուրքիայի բարձրագույն զինվորականության շրջանում, մի շարք եվրասիականներ տեղ են գտել նաև էրդողանի մերձավորների շրջանում[5]: Վերջիններս լինելով Ռուսաստանի նոր եվրասիականության դպրոցի գաղափարական ազդեցության տակ, համարում են, որ Թուրքիան և Ռուսաստանը ունեն եվրասիական ինքնություն (նրանց խորթ են «եվրոպականացումը» և արևմտյան տիպի «արդիականացումը»)[6] և միևնույն եվրասիական քաղաքակրթության կրողներ են: Երկու պետությունների ղեկավարները աշխարհընկալման տեսանկյունից ունեն ընդհանուր մոտեցումներ և դավանում են եվրասիական արժեքների: Թուրքիայի եվրասիականության ուղղության ներկայացուցիչները հանդես են գալիս եվրաատլանտյան անվտանգության համակարգից Թուրքիայի դուրս գալու օգտին: Ավելին. նրանք համարում են, որ միջազգային անվտանգության երկբևեռ համակարգի փլուզման և ըստ այդմ Արևմուտքի ու ՆԱՏՕ-ի համար Թուրքիայի կարևորության նվազման պայմաններում Մեծ Մերձավոր Արևելքում նոր անվտանգային սպառնալիքները (քրդական գործոնի դերի աճում, ծայրահեղական իսլամական կառույցների տարածում, պետությունների փաստացի տրոհում և այլն) ի հայտ են եկել ԱՄՆ-ի վարած քաղաքականության հետևանքով, ուստի նրա հետ դաշինքը լրջագույն սպառնալիք է Թուրքիայի անվտանգության և տարածքային ամբողջականության համար[7]: Նրանց գնահատմամբ՝ Եվրասիայում արժանի տեղ զբաղեցնելու համար Թուրքիան ունի նոր գաղափարախոսական (եվրասիական) մոդելի մշակման անհրաժեշտություն, քանի որ վերջին շրջանում առաջ քաշված մոդելները («քեմալականություն», «նոր օսմանականություն», «պանթուրքականություն», «չափավոր իսլամի թուրքական մոդել» և այլն) պարզապես ձախողվել են և սպառել իրենց ռեսուրսը: Հետևաբար Թուրքիայի աշխարհաքաղաքական կողմնորոշման հիմքում պետք է դրվի զարգացման եվրասիական ուղղությունը՝ Ռուսաստանի, Չինաստանի և առաջատար այլ եվրասիական ուժերի հետ համագոր-

[5] Թուրքիայում Ա. Դուգինի կազմավորած եվրասիական ցանցի մասին հանգամանորեն տես *Marlene Laruelle*. Russo-Turkish Rapprochement through the Idea of Eurasia: Alexander Dugin's Network in Turkey. The Jamestown Foundation, 2008 (http://www.academia.edu/7896457/_Russo-Turkish_Rapprochement_Through_the_Idea_of_Eurasia_Alexander_Dugin_s_Networks_in_Turkey_Jamestown_Occasional_Papers_April_2008):

[6] Տես «Геополитика Турции (Александр Дугин)», 25.01.2013 (https://www.youtube.com/watch?v=Mfz3rxfLK0U):

[7] Տես "The fourth revolutionary war. A chronicle of the Global Revolutionary Wars of the Eurasian Alliance" (https://4threvolutionarywar.wordpress.com/2017/07/18/dugin-about-the-coup-in-turkey-azerbaijan/):

ծակցության խորացմամբ: Արևմուտքին հակակշիռ դառնալու ներուժ ունեցող նման բևեռի ձևավորումը կնպաստի բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորմանը, ինչը բխում է Թուրքիայի աշխարհառազմավարական շահերից, քանի որ այս դեպքում կմեծանան միջազգային հարաբերություններում նրա տարաշարժի և անկախ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունները[8]:

Թուրք եվրասիականները հենց Ռուսաստանի հետ դաշինքի միջոցով են տեսնում նաև Թուրքիայի «պանթուրքականության» ռազմավարության իրականացումը, այդ թվում՝ Եվրասիայի «թյուրքական» տարածքներում էթնոմշակութային գործոնի մոբիլիզացմամբ Թուրքիայի ազդեցության մեծացումը: Նրանց կարծիքով՝ թյուրքական ազգերով բնակեցված տարածքները հենց այն քաղաքակրթական տարածությունն են, որտեղ թյուրք-սլավոնական միասնության հիմքի վրա ձևավորվել է եվրասիական քաղաքակրթությունը[9]:

ՆՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԻԱ–ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Վերջին տարիներին Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականության վերլուծությունը վկայում է, որ Ռուսաստանի աշխարհառազմավարության ոլորտում նոր եվրասիական գաղափարախոսության մի շարք տեսական դրույթներ գործնական կիրառում են ստացել, և կարևորվում է «եվրասիական» գործոնը[10]: Այս միտումը, մեր գնահատմամբ, կշարունակվի առնվազն մինչև Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինի պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտը՝ 2024 թվականը: Այս համատեքստում պետք է նաև դիտվեն «Հարտլենդում» եվրաատլանտյան ուժերի ծավալման զսպմանը նպատակաուղղված ռուսաստանյան քաղաքականությունը (Վրաստան, Ուկրաինա)[11] և ԱՄՆ–Ռուսաստան ռազմավարական հակամարտության խորացումը, հետխորհրդային տարածությունում իր ուժերի

[8] Տես “The Politics of Eurasianism: Identity, Popular Culture and Russia’s Foreign Policy”. Ed. by Mark Bassin and Gonzalo Pozo. London and New York, 2017:

[9] Տես *А. Г. Дружинин.* Россия в многополюсной Евразии: взгляд географа-обществоведа. Ростов-на-Дону, 2016 (http://argorussia.ru/sites/default/files/Дружинин%20 А.Г.%20Россия%20в%20многополюсной% 20Евразии.pdf):

[10] Տես *M. Schmidt.* Is Putin Pursuing a Policy of Eurasianism? “Demokratizatsiya”, 2005, Vol. 13, N 1:

[11] Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա Ա. Դուգինի գաղափարների ազդեցության վերաբերյալ տես *Charles Clover.* The Unlikely Origins of Russia’s Manifest Destiny. “Foreign Policy”, 27 July 2016 (https://foreignpolicy.com/2016/07/27 /geopolitics-russia-mackinder-eurasia-heartland-dugin-ukraine-eurasianism-manifest-destiny-putin/):

համախմբմանը և ինտեգրային գործընթացների առաջմղմանը (ԵԱՏՄ-ի ստեղծում) միտված՝ Ռուսաստանի ձեռնարկած քայլերը: Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ էապես մեծանում է թուրքական, իրանական և իսլամական գործոնների կարևորությունը: Ռուսաստանը ինտենսիվ կերպով ջանում է ծավալել Չինաստանի ու Հնդկաստանի հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ (ԲՐԻՔՍ, Համագործակցության շանհայյան կազմակերպություն) ձևաչափերով համագործակցություն, առաջ է քաշում «Մեծ եվրասիական համագործակցության» գաղափարը[12], որի նպատակն է եվրասիական միասնական բևեռի՝ Արևմուտքին այլընտրանքի ձևավորումը:

Կան ևս մի շարք գործոններ, որոնք վերջին տարիներին հանգեցնում են Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ «եվրասիական» վեկտորի կարևորության աճմանը: Դա հիմնականում պայմանավորված է համընդհանուր անվտանգության համակարգում տեղի ունեցող փոփոխություններով, առաջին հերթին՝ եվրաատլանտյան բևեռի հարաբերական թուլացման միտումների և Ռուսաստանի ու Չինաստանի շուրջ ձևավորվող «արևելյան բևեռի» աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հզորացմամբ[13]: Ընդսմին Թուրքիայի եվրասիական կողմնորոշման գործում առանցքային կարևորություն են ստանում աշխարհատնտեսական, առաջին հերթին՝ էներգետիկ, գործոնները[14]: Եթե Ռուսաստանը Թուրքիայի գլխավոր էներգետիկ մատակարարն է, ապա 2013 թ. մեկնարկած Չինաստանի «գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը հսկայական հնարավորություններ է ստեղծում Թուրքիայի համար ներդրումների խթանման, մեծանշանակ ենթակառուցվածքային նախագծերի իրագործման, արտահանումների համար նոր ճանապարհների ու շուկաների բացման առումով: Այս համատեքստում պետք է դիտել նաև Համագործակցության շանհայան կազմակերպությանը անդամակցելու Թուրքիայի մտադրությունը (2013 թվականից նա կազմակերպությունում ունի երկխոսության գործընկերոջ կարգավիճակ)[15], ինչպես նաև եվրասիական մաքսային միությանը միանալու վերաբերյալ հնչեցվող պաշտոնական հայտարարությունները:

[12] Այս մասին ավելի հանգամանորեն տես *S. Karaganov.* The new Cold War and the emerging Greater Eurasia. “Journal of Eurasian Studies”, 2018, N 9 (https://reader.elsevier.com/reader/sd/pii/S1879366518300174?token=A5D83D05C5882C21ADCE8AB4D90FE924F28ACC441E97EDD4E2296F1E675092A29B1705EC21E682978105CE2667433342):

[13] Տես նույն տեղում, *G. Diesen.* Russia's Geoeconomic Strategy of a Greater Eurasia. London, 2017:

[14] Տես “Turkey: Towards a Eurasian Shift?” Ed. by V. Talbot. April 2018, Milan (https://www.ispionline.it/sites/default/files/pubblicazioni/turkey_report_.pdf):

[15] Տես *L. Wang.* “Will Turkey Join the Shangai Cooperation Organization Instead of the EU?”. “The Diplomat”, 24 November 2016 (https://thediplomat.com/2016/11/will-turkey-join-the-shanghai-cooperation-organization-instead-of-the-eu/):

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում «եվրասիական» վեկտորի կարևորության մեծացմանը նպաստող մյուս գործոնը Թուրքիա–Արևմուտք հարաբերությունների վատթարացումն ու Ռուսաստան–Թուրքիա համագործակցության զարգացումն է: Մի կողմից՝ սիրիական ճգնաժամի համատեքստում ԵՄ–Թուրքիա հարաբերությունների սրման և ԵՄ-ին Թուրքիայի անդամագրման փաստացի կասեցման և տեսանելի ապագայում դրա անհավանականության պայմաններում Թուրքիայի համար գնալով նվազում են ԵՄ-ից սպասվող գործնական ակնկալիքները: Մյուս կողմից՝ 2016 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո Թուրքիային Ֆեթուլահ Գյուլենին հանձնելու պահանջի՝ ԱՄՆ-ի մերժման, Սիրիայի քրդերին ցուցաբերվող ամերիկյան օգնության աճման հետևանքով էապես վատթարացել են Թուրքիա–ԱՄՆ հարաբերությունները:

Միևնույն ժամանակ, 2016 թ.-ից Ռուսաստանն աջակցում է Սիրիայում քրդական գործոնի աճումը զսպելու և Հյուսիսային Սիրիայում դիրքերը պահպանելու Թուրքիայի փորձերին, ինչպես նաև սիրիական հակամարտության կարգավորման ուղղությամբ իր նախաձեռնած Աստանայի ու Սոչիի բանակցություններում Թուրքիայի ներգրավմանը: Այս ամենը էապես նպաստում է տարածաշրջանում Թուրքիայի և Ռուսաստանի երկկողմ համագործակցության խորացմանը և ամրապնդել այդ երկու պետությունների ղեկավարների փոխվստահությունը: Սույն գործընթացն ավելի մեծ թափ է ստանում շնորհիվ ռազմավարական տնտեսական (այդ թվում՝ Թուրքիայում «Ակկույու» ատոմակայանի կառուցում) համատեղ նախագծերի գործարկման, ինչպես նաև Թուրքիա–Ռուսաստան ռազմատեխնիկական (օրինակ՝ ՀՕՊ-ի Ս-400 համալիրների գնելու որոշումը) փոխգործության զարգացման:

2016 թ. օգոստոսին մեկնարկած Թուրքիա – Ռուսաստան հարաբերությունների կարգավորման գործընթացը[*], որում տարբեր, այդ թվում՝ թուրքական, աղբյուրների հավաստմամբ էական դեր է խաղացել Ա. Դուգինը, որը նաև Թուրքիայի իշխանություններին զգուշացրել է նախապատրաստվող հեղաշրջման մասին[16], զգալի չափով նպաստեց Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավում եվրասիականների դիրքերի ամրապնդմանը: Մասնավորապես՝ 2016 թ. հուլիսի 15-ին Թուրքիայում տեղի ունեցած պետական

[*] Ռուսաստան–Թուրքիա հարաբերությունները վատթարացան, երբ 2015 թ. նոյեմբերին թուրք-սիրիական սահմանին թուրքական ուժերը խոցեցին ռուսական ինքնաթիռը:

[16] Տես *Yusuf Selman Inanç*. Can Turkey, Russia free themselves from third parties? “Daily Sabah”, 29 April 2018 (https://www.dailysabah.com/world/2018/04/30/can-turkey-russia-free-themselves-from-third-parties); *Henry Meyer, Onur Ant.* Alexander Dugin – The one Russian linking Donald Trump, Vladimir Putin and Recep Tayyip Erdogan. “Independent”, 3 February 2017 (https://www.independent.co.uk/news/world/americas/alexander-dugin-russian-academic-linking-us-president-donald-trump-vladimir-putin-turkey-president-a7560611.html):

հեղաշրջման փորձի ձախողումից հետո Ա. Դուգինի և Դ. Փերինչեքի ջանքերով սերտ փոխգործություն է ծավալվել Ռուսաստանում և Թուրքիայում եվրասիականության շարժումների ներկայացուցիչների միջև, որոնք հանդես են գալիս եվրասիականության միասնական գաղափարական պլատֆորմի վրա Թուրքիա–Ռուսաստան դաշինքի ստեղծման օգտին: Ռուսաստանի հետ հարաբերությունները խորացնելու Նախագահ Էրդողանի վարած քաղաքականության համատեքստում առաջատար դեր է հատկացվում 2003–2009 թթ. պետական հեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով դատապարտված և վերջին շրջանում արդարացված մի քանի գեներալների, որոնք սերտ կապեր ունեն Ա. Դուգինի ղեկավարած «միջազգային եվրասիական շարժման» հետ:

Հավաստի աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ գործում առանձնակի մեծ դեր են խաղում 2007–2012 թթ. Թուրքիայի Գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետ, «Հայրենիք» կուսակցության անդամ Իսմայիլ Հաքի Փեքինը և 2002–2004 թթ. ժանդարմերիայի հետախուզության ծառայության պետ Լեվենտ Էրսոզը: Փեքինը գլխավորել է 2015 թ. Ռուսաստան մեկնած՝ Դողու Փերինչեքի ղեկավարած «Հայրենիք» կուսակցության պատվիրակությունը, հանդիպումներ ունեցել ռուսական ղեկավար շրջանների հետ[17]: Լեվենտ Էրսոզը սերտ կապեր ունի Ռուսաստանի ռազմաարդյունաբերական ոլորտի ղեկավարության հետ, մինչև 2012 թ. զբաղեցրել է «Ռուսօբորոնէքսպորտ» ընկերության խորհրդականի պաշտոնը և կարևոր դեր է խաղացել 2016 թ. սեպտեմբերին Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետի՝ Թուրքիա կատարած այցի կազմակերպման գործում: Ռուսաստանի և Թուրքիայի եվրասիականների տարածաշրջանային սերտ համագործակցության վկայությունն է նաև Ա. Դուգինի և Թուրքիայի «եվրասիական զարգացման հարթակի» ղեկավար Հ. Սենգիզի գլխավորությամբ 2016 թ. նոյեմբերին թուրք բարձրաստիճան պաշտոնյաների և գործարարների Ղրիմ կատարած այցելությունը[18]:

Հարկ է նշել, որ տվյալ գործընթացներն ուղեկցվում են նաև Ռուսաստանի և Ադրբեջանի եվրասիականության շարժման ներկայացուցիչների միջև կապերի ամրապնդմամբ: Դրա վկայությունն է նաև վերջին տարիներին Դուգինի՝ Ադրբեջան կատարած բազմաթիվ այցելություններն ու տարբեր ձևաչափերով ադրբեջանցի եվրասիականների հետ ինտենսիվ հանդիպումները, որոնք ստանում են թուրք եվրասիականների աջակցությունը: Մի շարք աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս

[17] Տես *Henry Meyer, Onur Ant.* The Russian “philosopher” who links Putin, Bannon, Turkey: Alexander Dugin. “Chicago Tribune”, 3 February 2017 (http://www.Chicago tribune.com/news/nationworld/ct-dugin-trump-putin-turkey-20170203-story. html):

[18] Տես “Turkish delegates glad to visit Crimea amid thaw in Moscow-Ankara relations”. “Sputnik”. 24.11.2016 (https://sputniknews.com/russia/2016112410477736 86-turkish-delegation-crimea/):

պնդելու, որ նման եռակողմ համագործակցությունն ունի որոշակի հակահայկական ուղղվածություն, քանի որ առաջ է քաշում Թուրքիա–Ռուսաստան–Ադրբեջան և Թուրքիա–Ռուսաստան–Ադրբեջան–Իրան աշխարհաքաղաքական առանցքի ձևավորման գաղափարը՝ դրանում էապես կարևորելով Ադրբեջանի դերը և տարածաշրջանում վերջինիս շահերի առաջմղումը:

ՆՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆ–ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Սակայն կան նաև որոշ գործոններ (աշխարհաքաղաքական, գաղափարական և այլ բնույթի), որոնք սահմանափակում են նոր եվրասիականության գաղափարախոսության շրջանակներում Ռուսաստան – Թուրքիա հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները: Թեև տեղի է ունենում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ եվրասիական կողմնորոշման և այդ համատեքստում Ռուսաստանի ու Չինաստանի հետ հարաբերությունների զարգացման ռազմավարական նշանակության էական աճում, Թուրքիան դեռ շարունակում է ուժեղ անվտանգային ու տնտեսական կապեր պահպանել Արևմուտքի հետ և առնվազն կարճաժամկետ հեռանկարում չի պատրաստվում փոխել իր արտաքին անվտանգային կողմնորոշումը: ԵՄ-ը մնում է նրա խոշորագույն առևտրային գործընկերը և հիմնական արտաքին ներդրողը: Չնայած սիրիական ճգնաժամի կարգավորման հարցում, տնտեսական և ռազմատեխնիկական ոլորտներում Ռուսաստանի հետ համագործակցության խորացմանը՝ Թուրքիան պատրաստ չէ Ռուսաստանի հետ գործակցությունը փոխադրելու ռազմավարական դաշնակցության մակարդակ՝ վտանգելով ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունները: Առնվազն միջնաժամկետ հեռանկարում Թուրքիան կշարունակի հանդես գալ որպես եվրաատլանտյան համակարգի առանցքային բաղադրիչ՝ իր անվտանգության ապահովման հիմքում դնելով անդամակցությունը ՆԱՏՕ-ին և ԱՄՆ-ի հետ ռազմավարական հարաբերությունների պահպանումը: Ավելին. Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ պետություն, հավանական է, որ շարունակի կարևոր դեր խաղալ ՆԱՏՕ-ի հարավային թևում՝ Ռուսաստանի զսպման ռազմավարության շրջանակներում:

Թուրքիայի ղեկավարությունը նոր եվրասիական հարթակում, մի կողմից, Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացումը հավանական է, որ օգտագործի որպես լծակ ԱՄՆ-ի հետ ռազմավարական քաղաքական-դիվանագիտական առևտրում զիջումներ կորզելու նպատակով, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների սահմանափակման և իր «եվրասիական կողմնորոշման» հնարավորությունը ՌԴ-ի հետ շփումներում կիրառի որպես խայծ:

Թեև Ռուսաստանում և Թուրքիայում եվրասիական շարժումների ներկայացուցիչները փորձ են անում եվրասիականության գաղափարախոսության

միջոցով «կոծկելու» Թուրքիա–Ռուսաստան համագործակցության «իրավիճակային» բնույթը և դրան հաղորդելու ավելի խոր ռազմավարական տրամաչափ, այնուամենայնիվ, մի շարք տարածաշրջաններում (Սև ծով, Կենտրոնական Ասիա, Սիրիա, Հարավային Կովկաս և այլն) առկա աշխարհաքաղաքական հակասություններն ու մրցակցությունը նույնպես հանդես են գալիս որպես երկու պետությունների միջև խորքային համագործակցության ձևավորման գործում եվրասիականության հարթակի դերը սահմանափակող գործոններ:

Ռուսաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերի անհամապատասխանության հաշվառմամբ՝ այդ պետությունների ղեկավար շրջաններին մոտ կանգած եվրասիականները չունեն իրենց գաղափարախոսության նկատմամբ միասնական մոտեցում և եվրասիական հարթակի կարևորությունը գնահատում են տարբեր տեսանկյուններից: Ռուսաստանի տարբեր մտավոր և իշխանական շրջաններն այն հիմնականում կարևորում են հետխորհդային տարածաշրջանը Ռուսաստանի շուրջը միավորելու և Եվրասիայում Արևմուտքին հակակշռող միասնական բևեռ ձևավորելու տեսանկյունից, Ռուսաստանի՝ որպես տվյալ չափանիշներին համապատասխանող պետության ծավալապաշտական քաղաքականությունը «լեգիտիմացնելու» նպատակով: Թուրքիայում, որտեղ ի տարբերություն Ռուսաստանից եվրասիականությունը նվազ քաղաքականացված է ու չունի խոր պատմական արմատներ և ամուր տեսական հիմք, եվրասիական հարթակը գերազանցապես կարևորվում է, մի կողմից, Արևմուտքի և Արևելքի միջև Թուրքիայի «կամրջող» դերի վերահաստատման, Արևմուտքին հակակշռելուն և վերջինիս ճնշմանը դիմակայելուն ուղղված արդյունավետ գործիքների ստեղծման, մյուս կողմից՝ եվրասիական առաջատար պետություններից առավելագույն տնտեսական ու քաղաքական օգուտներ քաղելու և իր հնարավոր «եվրասիական» կողմնորոշման համար անհրաժեշտ հիմքեր ու նախադրյալներ ստեղծելու տեսանկյունից:

Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ Արևմուտքին «զսպելու» Թուրքիայի և Ռուսաստանի ընդհանուր շահագրգռվածությունը իրավիճակային է, և նոր եվրասիականության գաղափարախոսությունը առայժմ չունի այն ներուժը, որն անհրաժեշտ է, որպեսզի այդ երկու պետությունների հարաբերությունները վերաճեն ռազմավարական դաշնակցության:

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

СТРАТЕГИЧЕСКАЯ ОЦЕНКА ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ОТНОШЕНИЙ МЕЖДУ ТУРЦИЕЙ И РОССИЕЙ В РАМКАХ ГЕОПОЛИТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ НОВОГО ЕВРАЗИЙСТВА

Д. М. МАНАСЯН, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических анализов НИУО МО РА

РЕЗЮМЕ

В последние годы процесс углубления отношений между Россией и Турцией сопровождается ростом влияния идеологии евразийства в этих государствах. При этом евразийцы Турции имеют прочные связи с представителями школы неоевразийства России, в частности – с А. Дугиным. Относительное ослабление США в системе международной безопасности и возрастание роли России и в особенности Китая, ухудшение отношений между Турцией и США, ближневосточные процессы и прочие обстоятельства создают благоприятные условия для подобного сотрудничества.

Вместе с тем существует ряд факторов (стратегическая важность НАТО для Турции, экономическое сотрудничество Турции с ЕС, геополитические противоречия между Россией и Турцией в ряде регионов и т. д.), которые, по всей вероятности, в краткосрочной и среднесрочной перспективе ограничат потенциал развития отношений между Россией и Турцией в рамках идеологии евразийства.

Тем не менее современные тенденции роста значения евразийского вектора во внешней политике России и Турции наводят на мысль о возможности создания благоприятных условий для развития регионального сотрудничества в трехстороннем формате Турция–Россия–Азербайджан в русле идеологии евразийства.

REGIONAL SECURITY

STRATEGIC ASSESSMENT OF THE POSSIBILITY OF DEVELOPING RELATIONS BETWEEN TURKEY AND RUSSIA WITHIN THE GEOPOLITICAL CONCEPT OF NEW EURASIANISM

D. M. MANASYAN, PhD in History, Head of the Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD RA

SUMMARY

In recent years, the process of deepening relations between Russia and Turkey has been accompanied by growing influence of the ideology of Eurasianism in these states. At the same time, the Eurasianists of Turkey

have strong ties with the representatives of the neo-Eurasianism school in Russia, in particular with A. Dugin. The relative weakening of the United States in the international security system and the growing role of Russia and especially China, the deterioration of relations between Turkey and the United States, the Middle East processes and other circumstances create fertile ground for such cooperation.

However, there are a number of factors (NATO's strategic importance for Turkey, Turkey's economic cooperation with the EU, geopolitical differences between Russia and Turkey in a number of regions, etc.), which, most probably, will limit the potential for developing relations in the short- and medium-term between Russia and Turkey in the framework of the ideology of Eurasianism.

Nevertheless, the current trends of growing importance of the Eurasian vector in the foreign policy of Russia and Turkey suggest the possibility of creating favourable conditions for the development of regional cooperation in the trilateral format of Turkey – Russia – Azerbaijan in line with the ideology of Eurasianism.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Ս. Ռ. ՊԱՊԻԿՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ

Յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացման անհրաժեշտ պայման է էներգետիկ անվտանգության ապահովման հուսալի և կայուն համակարգի առկայությունը: Էներգետիկ անվտանգություն ասելով հասկանում ենք տնտեսական անվտանգության այն կարևորագույն բաղադրիչը, որը «բնութագրում է պետության պաշտպանվածությունը այլ պետությունների կողմից էներգակիրների մատակարարումը որպես քաղաքական, տնտեսական և/կամ այլ բնույթի ճնշում գործադրելու միջոց կիրառելու հնարավորությունից: Ներառում է համալիր միջոցներ հուսալի և կայուն էներգամատակարարման ապահովման նպատակով, այդ թվում՝ էներգակիրների տեսակների և դրանց մատակարարման ուղիների տարատեսակացում, իր ունեցած վերականգնվող էներգապաշարների առավելագույն չափով օգտագործում»[1]:

Ինչպես գիտենք, էներգետիկան զբաղվում է էներգիայի ստացման, տեղափոխման և բաշխման հարցերով: Այսօր աշխարհում ամեն տարի էներգետիկ նպատակներով օգտագործվում է ավելի քան 14 միլիարդ տոննա վառելիք: Եթե նման միտումը պահպանվի, ապա նավթի ու բնական գազի հետազոտված պաշարները մարդկությանը կբավարարեն ընդամենը 50–60 տարի, քարածխինը՝ մոտ 200 տարի[2]: Ուստի առաջատար պետությունները ուղիներ են փնտրում այլընտրանքային էներգետիկայի զարգացման համար, ինչպես նաև մեծ տեղ են հատկացնում էներգախնայողության քաղաքականությանը:

Մեր հանրապետությունը վառելիքաէներգետիկ ռեսուրսներով հարուստ չէ, հետևաբար և մեծապես կախված է դրանց ներմուծումից, որը զուգակցվում է բազմաթիվ դժվարություններով՝ տնտեսական շրջափակում, պատերազմի սպառնալիք և այլն: Ըստ այդմ՝ Հայաստանի էներգետիկ անվտանգության հույժ կարևոր խնդիրներից է էներգակիրների աղբյուրների և

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 73:

[2] Տես, օրինակ, «На сколько еще хватит? Когда исчерпаются мировые запасы основных полезных ископаемых», 08.10.2018 (https://zen.yandex.ru/media/i_i/naskolko-esce-hvatit-kogda-ischerpaiutsia-mirovye-zapasy-osnovnyh-poleznyh-iskopaemyh-5bb360f9a7b1ae00aa5ed350):

առբերման ուղիների բազմազանեցումը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մեր պետությունն ունի էներգետիկ ոլորտի զարգացման հաստատուն ներուժ, եթե հաշվի առնենք կադրային և բնակլիմայական պայմանները: ՀՀ էներգետիկ ոլորտի հիմնական ցուցանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ հանրապետությունում կա կայուն էներգետիկ բազա: Մասնավորապես՝ Հայաստանում 2017 թ. արտադրվել է 7,76 միլիարդ կՎտ.ժ էլեկտրաէներգիա. ՋԷԿ-երում՝ 2,85 միլիարդ, ՀԷԿ-երում և փոքր էլեկտրակայաններում՝ 2,29 միլիարդ և ԱԷԿ-ում՝ 2,61 միլիարդ կՎտ·ժ[3]:

Սակայն, մեր ունեցած տվյալների համաձայն, գործող արտադրական հզորությունների 38 %-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, ՋԷԿ-երի հիմնական սարքավորանքի աշխատանքի տևողությունը անցել է սահմանային 200 հազ. ժամը[4]: ՀԷԿ-երում (ՁորաՀԷԿ, Սևան–Հրազդան կասկադ, Որոտանի ՀԷԿ-երի համակարգ) ևս սարքավորանքի 70 %-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, իսկ 50 %-ը՝ ավելի քան 50 տարի:

Ուստի հույժ կարևոր խնդիրներից են սարքավորանքի սերնդափոխությունը և արդիականացումը: Այս ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ, որոնցից կարող ենք առանձնացնել Երևանի ՋԷԿ-ի հարևանությամբ նախատեսվող նոր շոգեգազատուրբինային բլոկի շինարարությունը[5]:

Հայկական ատոմային էլեկտրակայանի գործող երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվել է: Սակայն այն երկարաձգվել է, և ներկայումս աշխատանքներ են տարվում ինչպես անվտանգության ապահովմանը միտված միջոցառումների իրագործման, այնպես էլ նոր էներգաբլոկի կառուցման ուղղությամբ: Սակայն պետք է նշել, որ և՛ ՀՀ-ում, և՛ աշխարհի շատ պետություններում կա ատոմային էներգետիկայի զարգացման նկատմամբ բացասական վերաբերմունք: Մտահոգությունը հիմնականում պայմանավորված է ԱԷԿ-ների շահագործման վտանգավորությամբ և թափոնների օգտահանման բարդությամբ: 1986 թ. Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարից հետո ատոմակայանների կառուցման և շահագործման հարցում ցուցաբերվող զգուշավորությունն աճել է, թեև աշխարհի առաջատար պետություններից մեկը՝ Ֆրանսիան, ներկայումս էլեկտրաէներգիայի մոտ 75 %-ը արտադրում է ԱԷԿ-ներում[6]:

---

[3] Տես «Տեղեկանք էլեկտրաէներգիայի արտադրության և առաքման վերաբերյալ (2017–2018 թթ. հունվար-դեկտեմբեր ամիսների համեմատություն)»: «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» (http://www.minenergy.am/page/396):

[4] Տես ««ԵրևանիՋԷԿ» ՓԲԸ»: «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» (http://www.minenergy.am/page/531):

[5] Տես «Երևանում մեկնարկել է 250 մեգավատ հզորությամբ նոր էլեկտրակայանի կառուցման շինարարությունը», 12.07.2019 (https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/07/12/Nikol-Pashinyan-visit-to-RENCO/):

[6] Տես “Nuclear Power in France” (https://www.world-nuclear.org/information-library/country-profiles/countries-a-f/france.aspx):

Մեր հանրապետությունում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի քայքայման հետևանքով կիրառվում են հիմնականում անհատական ու տեղային ջերմամատակարարման սարքեր, ինչի հետևանքով ծախսերն էապես աճում են[7]: Ուստի նպատակահարմար է, որ Երևանի ՋԷԿ-ում և Հրազդանի 5-րդ էներգաբլոկում ստեղծվեն ջերմավորման հանգույցներ, ինչը հնարավորություն կտա միասնական փուլաշրջանով արտադրելու և՛ էլեկտրական, և՛ ջերմային էներգիա ոչ միայն վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողությամբ, այլև մի շարք բնապահպանական խնդիրների լուծմամբ, մասնավորապես՝ դա հնարավորություն կտա շրջակա միջավայրը զերծ պահելու թունավոր նյութերի արտանետումներից:

Ներկայումս մեծ թվով պետություններ որդեգրել են այլընտրանքային, կամ վերականգնվող էներգետիկայի զարգացման քաղաքականություն[8]: Միջազգային փորձը հիմնվում է արտադրության և ներդրումների խթանման վրա, այդ թվում նաև օրենսդրական դաշտում արտոնությունների ամրագրմամբ, մասնավորապես՝ արդյունավետ գործիքներից են հարկերից լրիվ կամ մասնակի ազատումը և առանց մաքսային վճարումների սարքավորանքի ներմուծումը: Այդ քաղաքականության շնորհիվ հողմային և արևային էներգետիկան դառնում է ամենահեռանկարային և արագ զարգացող ուղղություններից մեկը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հողմային կայանները առաջացնում են որոշակի բնապահպանական խնդիրներ, թեև չեն աղտոտում օդային ու ջրային միջավայրները: Դրանց նկատմամբ ցուցաբերվող վերապահումը հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքով՝ ինֆրաձայնային աղմուկի առաջացմամբ և լանդշաֆտի (բնապատկերի) վրա ազդեցությամբ[9]: Աղմուկը հիմնականում առաջանում է հողմանիվի առանցքակալների և գեներատորի աշխատանքի հետևանքով: Մարդու համար այդ աղմուկի մակարդակը թույլատրելի սահմաններում է, եթե կայանը տեղակայված է բնակավայրերից բավական հեռու, սակայն այն ազդում է անմիջականորեն հողմակայանի մոտ ապրող կենդանիների վրա: Բացի այդ, հողմակայանքներն իրենց հետևում ստեղծում են ցածր ճնշումների գոտի (գրեթե անօդ տարածություն), որտեղ հայտնված, կարելի է ասել՝ ներքաշված կենդանիները, օրինակ՝ չղջիները, շնչահեղձ են լինում (պայթում են թոքերի մազանոթները): Դրա հետ մեկտեղ այդ գոտիները հանգեցնում են օդի շարժման դանդա-

[7] Տես, օրինակ, «Что лучше: централизованное, индивидуальное или автономное отопление». «АКВА-ПЕКО» (aquapek.ua/что-лучше-централизованное-инди виду/):

[8] Տես, օրինակ, *Андрей Гурков*. Плохая погода для «Газпрома»: газ проигрывает в ФРГ ветру и солнцу. «Deutsche Welle», 03.11.2018 (https://www.dw.com/ru/плохая-погода-для-газпрома-газ-проигрывает-в-фрг-ветру-и-солнцу/a-46136208); “Global Wind Statistics 2015”. Global Wind Energy Council, 10.02.2016:

[9] Տես, օրինակ, «Массовое развитие ветроэнергетики может нанести серьезный вред планете». «Energy.media», 08.03.2017 (https://eenergy.media/2017/03/08/massovoe-razvitie-vetroenergetiki-mozhet-nanesti-sereznyj-vred-planete/):

ղեցման, ինչի հետևանքով փոխվում է ջերմափոխանակությունը, ուստի և կլիման[10]: Կլիմայի վրա ազդում է նաև այն, որ հողմային կայանները փակում են փչող քամիների ճանապարհը՝ տվյալ տարածքում խախտելով բնական կենսընթացը:

Նշենք այս տեսակի էներգիայի աղբյուրի նաև որոշ այլ բացասական կողմեր: Քամու էներգիայի խտությունը մեծ չէ: Զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա արտադրելու համար հարկավոր է կառուցել շատ կայաններ, ինչը պահանջում է լրացուցիչ հողային տարածքներ: Միևնույն ժամանակ, հողմաշարժիչների թիակները վտանգավոր են չվող թռչունների համար, քանի որ ժամանակակից հողմային կայանքներում թիակները պտտվում են բավական արագ և համարյա աննկատ են: Հողմային կայանքները կարող են բացասաբար ազդել նաև ռադիո- և հեռուստատեսային հաղորդումների որակի վրա: Դրանք չեն կարող արտադրել էներգահամակարգի համար պահանջվող հզորությամբ էլեկտրաէներգիա, չեն կարող օգտագործվել բեռնվածքի գրաֆիկի բազիսային մասում, քանի որ հավանականային բնույթի են[11]: Այս ամենով հանդերձ՝ հողմային կայանները, մեր կարծիքով, ունեն մեծ նշանակություն հատկապես Հայաստանի հեռավոր շրջանների համար՝ որպես հուսալի էներգամատակարարում ապահովող միջոց:

Այլընտրանքային էներգետիկայի մյուս ճյուղը՝ արևային էներգետիկան, բավական արագ տեմպերով զարգանում է ամբողջ աշխարհում, այդ թվում և մեր հանրապետությունում: Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1 մ^2 հորիզոնական մակերևույթի վրա ընկնող արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը 1720 կՎտ·ժ/մ^2 է, իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդին բնորոշ են տարեկան 1850 կՎտ·ժ/մ^2 ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներ)[12]:

Էներգետիկայի ոլորտի զարգացման տեսակետից կարևոր է Եվրամիության հետ էներգետիկ համագործակցության խորացումը[13]: Ընդսմին, մեր կարծիքով, վերականգնվող էներգետիկայի ոլորտում շեշտը պետք է դրվի առաջին հերթին հողմակայանների կառուցման և տեղական արտադրության արևային ջրատաքացուցիչների կիրառման վրա, ինչպես նաև արևային ֆոտովոլտային կայանների, կենտրոնացված արևային և երկրաջերմային կայանների կառուցման վրա:

ՀՀ էներգետիկ անվտանգության մեկ այլ կարևոր պրոբլեմն այն է, որ էներգետիկական հզորությունների մեծ մասը կենտրոնացված է հիմնակա-

[10] Տես նույն տեղում:

[11] Տես *Ս. Ռ. Պապիկյան,* Հայաստանի էներգետիկայի պատմությունը: Չորս հատորով: Ե., 2019:

[12] Տես նույն տեղում, *նաև*՝ «Արևային էներգետիկա»: «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» (http://www.minenergy.am/page/416):

[13] Տես «Միջազգային համագործակցություն»: «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» (http://www.minenergy.am/page/379):

նում Երևան–Մեծամոր–Հրազդան եռանկյունու գագաթներում, իսկ դրանց հեռավորությունները մեկը մյուսից 40–60 կմ են: Այստեղ են տեղաբաշխված արդիական սարքավորանքով կահավորված նորագույն էներգաբլոկները, ինչպես նաև Սևան–Հրազդան կասկադի ՀԷԿ-երը, Երևանի ՋԷԿ-ի հարևանությամբ գտնվող շոգեգազային բլոկը, որը շահագործման է հանձնվել 2010 թ. ապրիլին:

Այսպիսով՝ պարզ է, որ արտակարգ իրավիճակների դեպքում էներգահամակարգի աշխատանքը կարող է լրջորեն խափանվել, և Հայաստանի էներգահամակարգը կարող է հայտնվել բավական դժվար կացության մեջ:

Ընդհանուր առմամբ, էներգահամակարգի աշխատանքի հարյուր տոկոսանոց հուսալիություն չի լինում: Օրինակ՝ հայտնի է, որ էներգահամակարգում էլեկտրական բեռնվածության կտրուկ անկումը հանգեցնում է համակարգի աշխատանքային հաճախականության նվազման, և կարող են առաջանալ տարբեր տեսակի անցանկալի երևույթներ: Հասկանալի է, որ այս դեպքում բացը լրացվում է էներգետիկ աղբյուրների հաշվին, և համակարգը վերադարձվում է հավասարակշռության վիճակ: Այսինքն՝ տվյալ պահին պետք է արտադրվի այնքան էլեկտրական էներգիա, որքան անհրաժեշտ է սպառման համար:

Վերջերս (2019 թ. հուլիս) ՀՀ էներգահամակարգում տեղի ունեցած վթարը տարբեր կարծիքների առիթ դարձավ: Եթե վթարի պատճառը, ինչպես ասվում էր տարածված տեղեկություններում, իրոք Իրանի էներգահամակարգում տեղի ունեցած խափանումն էր, ապա մեր էներգահամակարգը կարող էր համարժեք կերպով արձագանքել: Առայժմ մասնագիտական տեսակետից անչափ դժվար է հիմնավոր եզրակացություն անել և փորձել տարբերակներ առաջարկել: Սակայն մի բան պարզ է. անհրաժեշտ է անընդհատ մեծացնել մեր պետության էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

Անվտանգության տեսակետից վերլուծելով ՀՀ էներգետիկ ոլորտի առանձնահատկություններն ու խնդիրները՝ առաջարկում ենք էներգետիկական կայանքներ կառուցել մայրաքաղաքից հեռու գտնվող համեմատաբար մարդաշատ քաղաքներում, որոնց հատուկ են ցուրտ կլիմայական պայմանները, օրինակ՝ Գյումրի քաղաքում: Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևան և Գյումրի քաղաքներում նույն հզորությամբ շոգեգազատուրբինային կայանքներ գործարկելու դեպքում (էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրմամբ) կարող ենք ստանալ միևնույն արդյունքը՝ Գյումրիում ծախսելով մոտ 20 %-ով պակաս վառելիք: Հետևաբար կիջնի էներգիայի ինքնարժեքը, ինչպես նաև արտանետումների նվազման շնորհիվ պակաս վնաս կհասցվի շրջակա միջավայրին: Մասամբ կլուծվի նաև աշխատատեղերի խնդիրը, և տնտեսությունը կսկսի զարգանալ նաև մարզերում:

Նպատակահարմար է, որպեսզի ներդրումների 51 %-ը կատարի պետությունը, իսկ մնացած 49 %-ը ապահովվի բնակչության խնայողություններով գնված բաժնետոմսերով: Այսինքն՝ շոգեգազատուրբինային ջեռուցման ՋԷԿ կառուցելու դեպքում նրա մեծ մասի սեփականատերը կլինի պետությունը, որն էլ դրա աշխատանքի նկատմամբ կսահմանի խիստ հսկողություն:

Ընդսմին գազատուրբինային կայանքները հնարավոր է գործարկել մի քանի րոպեում: Դրանք կարող են էներգահամակարգում լինել հուսալի ռեզերվ՝ գագաթնակետային բեռները ծածկելու համար, ինչը մերձսահմանային գոտու համար պակաս կարևոր չէ:

Չմոռանանք նաև, որ այսօր մեր հանրապետությունում ջեռուցման և տաք ջրի մատակարարման հարցերը լուծվում են «ով ինչպես կարող է» մակարդակով: Հետևաբար, սենյակների տաքացման համար շատ հաճախ օգտագործվում է թանկարժեք էլեկտրական էներգիա: Համեմատության համար նշենք, որ նման դեպքերում ծախսվում է մոտ չորս անգամ ավելի վառելիք: Ուստի նպատակահարմար է նախագծել և կառուցել փոքր ու միջին հզորությամբ ջեռուցման ԶԷԿ-եր՝ գազատուրբինային կայանքներ կամ հակաճնշումային տուրբինների օգտագործմամբ:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է կազմել Հայաստանի բոլոր բնակավայրերի համար առանձին էլեկտրաջերմա- և վառելիքամատակարարման համակարգերի այնպիսի սխեմաներ, որոնց շնորհիվ կապահովվի նույն էներգետիկական արդյունքը՝ սակավ վառելիքաէներգետիկ ռեսուրսների ծախսմամբ:

Հայկական ատոմակայանն ունի երկու էլեկտրական սնուցում. առաջինը կատարվում է էներգահամակարգից, իսկ երկրորդը՝ Սևան–Հրազդան կասկադի մեկ ՀԷԿ-ից, քանի որ այն ունի օրական կարգավորվող ջրամբար: Ցանկալի կլիներ, որ Մեծամոր բանավանում կառուցվեր գազատուրբինային ջեռուցման փոքր հզորությամբ մի ԶԷԿ: Դա հնարավորություն կտար Մեծամոր բանավանը, ՀԱԷԿ-ի վարչական շենքը ջեռուցելու ավելի նվազ ծախսերով, ինչպես նաև մեքենայական սրահն ապահովելու սպասարկային ջեռուցմամբ: Կայանը կարող է ցանկացած պահի դառնալ ոչ միայն Հայաստանի էներգահամակարգի, այլև ՀԱԷԿ-ի համար էլեկտրամատակարարման հուսալի աղբյուր:

Վերջին տասնամյակներում մեր կատարած գիտական հետազոտությունների արդյունքները վկայում են փոքր ու միջին հզորությամբ գազատուրբինային կայանքների լայնամասշտաբ օգտագործման անհրաժեշտությունը ՀՀ քաղաքների բնակելի շենքերի և շինությունների ջեռուցման, տաք ջրի մատակարարման, ինչպես նաև ջերմոցային տնտեսություններին էներգիայի մատակարարման համար[14]:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների հեռանկարային զարգացումը առանձնահատուկ նշանակություն ունի պետության պաշտպանական համակարգի ամրապնդման համար: Լայնորեն օգտագործելով այլընտրանքային էներգիայի՝ արևի, քամու, կենսագազի, ջրի անհրաժեշտ ռեսուրսները, ինչպես նաև էներգախնայողության ճիշտ քաղաքականություն վարելով՝ մենք կկարողանանք բարձրացնել մեր պետության ոչ միայն էներգետիկ անվտանգության, այլև պաշտպանունակության մակարդակը:

[14] Տես *С. Р. Папикян.* Возможность использования ГТУ в энергосистеме Армении. «Энергетика за рубежом», 2007, № 3:

Այսպես. զորամասերում արևային ջրատաքացուցիչների տեղադրմամբ ստացված տաք ջուրը կօգտագործվի մի շարք կենցաղային խնդիրներ լուծելու համար: Հարթ արեգակնային կոլեկտորները կարող են ծառայել որպես էլեկտրական էներգիայի անկախ աղբյուր: Փոքր հզորությամբ հողմա- և հիդրոէլեկտրակայանների նախագծման ու կառուցման պարագայում կլուծվեն ջեռուցման, տաք ջրի մատակարարման և մեծ թվով այլ խնդիրներ: Ամենակարևորն այն է, որ զորամասերը կունենան էներգիայի սնուցման ինքնուրույն աղբյուրներ, կախված չեն լինի ընդհանուր էներգահամակարգից: Դա անչափ կարևոր հարց է հատկապես տարերային աղետների, պատերազմական իրավիճակների և այլ չնախատեսված դեպքերում: Համակարգիչները, ջեռուցման և լուսավորության համակարգերը կաշխատեն անխափան: Դա է՛լ ավելի կամրապնդի հայկական բանակի մարտունակությունը, կհզորացնի մեր պաշտպանական համակարգը:

Որոշ դեպքերում միկրոհէկերը (մինչև 50 կՎտ հզորությամբ) կարելի է ըստ տեղանքի կառուցել նաև ստորգետնյա: Այսպես դրանք կմնան հակառակորդի համար աննկատ, ինչը առավելապես կարևոր է առաջավոր դիրքերում: Օրինակ՝ 50 ԿՎտ հզորությամբ ՀԷԿ-ի նախագծման և կառուցման համար կծախսվի մոտ 50 միլիոն ՀՀ դրամ: Տարեկան կարող է արտադրվել մոտ 250 հազար ԿՎտ·ժ էլեկտրական էներգիա՝ ավելի քան հինգ միլիոն դրամ արժողությամբ: Այսինքն՝ հետգնման ժամանակահատվածը կկազմի մոտ 10 տարի, ինչը էներգետիկական տեսակետից ընդունելի ցուցանիշ է:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

- Մշակել էներգետիկայի զարգացման գիտականորեն հիմնավորված հայեցակարգ, որում հաշվի առնել վերը թվարկված բոլոր գործոնները, մշակել և իրագործել էլեկտրա-, ջերմա- և վառելիքամատակարարման համակարգերի այնպիսի սխեմաներ, որոնցով այդ խնդիրը կլուծվի ավելի քիչ վառելիքէներգետիկ ռեսուրսների ծախսմամբ,
- ՀՀ Տավուշի մարզին օրենքի սահմաններում տալ հատուկ կարգավիճակ, որի շնորհիվ նա էներգահամակարգի հնարավոր փլուզման, տարերային աղետների դեպքում և վերը նշված մյուս բոլոր ծայրահեղ իրավիճակներում ունենա տարածաշրջանի կարևոր օբյեկտները էլեկտրական և ջերմային էներգիայով ինքնուրույնաբար սնուցելու հնարավորություն: Այստեղ պետք է շուկայական հարաբերությունները մղվեն երկրորդական պլան և առաջնահերթ համարվի սահմանների ու բնակչության անվտանգությունը: Զորամասերում կամ դրանց կից ունենալ արևային էներգիայով աշխատող ջրատաքացուցիչներ, ինչպես նաև մարտկոցներ, հոսպիտալներին կից ունենալ հզոր դիզելային գեներատորներ հեղուկ վառելիքի ամսական պաշարով: Իջևան քաղաքի համար կառուցել փոքր հզորությամբ գազատուրբիններով կահավորված ջեռուցման ջերմային էլեկտրակայան: Խաղաղ պայմաններում կայանը կաշխատի իր արդյունավետ բանելակարգով՝ արտադրելով էլեկտրա-

կան և ջերմային էներգիա, իսկ մնացած դեպքերում կարող է ինքնուրույնաբար հուսալի կերպով էներգիայով ապահովել ռազմական օբյեկտները և քաղաքացիական բնակչության կարիքները,

- սահմանամերձ շրջանների փոքր գետերի ջրհոսքի վրա նախագծել և կառուցել ավտոմատ կառավարմամբ միկրո (մինչև մի քանի տասնյակ կՎտ հզորությամբ) հիդրոէլեկտրակայաններ,
- Հայաստանի էներգահամակարգում լայնորեն օգտագործել գազային տուրբիններով կահավորված փոքր հզորությամբ ջեռուցիչ ԶԷԿ-եր, որոնց վառելիքի օգտագործման արդյունավետությունը այլ տիպի էներգաբլոկների համեմատությամբ բավական մեծ է,
- ռազմական և էներգետիկ անվտանգությունների ապահովման համար Գյումրի, Վանաձոր, Արթիկ, Կապան, Եղեգնաձոր, Իջևան, Սևան քաղաքներում, ինչպես նաև Մեծամոր բանավանում կառուցել փոքր և միջին հզորությամբ շոգեգազատուրբինային ջեռուցիչ ԶԷԿ-եր: Որպես արդյունք՝ կունենանք վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողություն, ինչպես նաև որոշ չափով կլուծվեն բնապահպանական խնդիրները,
- ՀՀ պաշտպանության նախարարությունում ստեղծել էներգետիկայի հարցերով խորհրդատուի հաստիք, թեկուզ՝ հասարակական կարգով: Նրան հանձնարարել պարբերաբար այցելել զորամասերն ու դրանց հարակից տարածքները, տեղում ծանոթանալ ռազմաէներգետիկ իրավիճակին և ըստ այդմ մշակել ռազմապաշտպանական էներգետիկայի զարգացման գիտականորեն հիմնավորված ծրագիր և վերահսկել դրա իրագործումը:

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ВОПРОСЫ РАЗВИТИЯ ЭНЕРГЕТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В АСПЕКТЕ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

С. Р. ПАПИКЯН, кандидат технических наук, председатель-основатель Армянской энергетической академии

РЕЗЮМЕ

Республика Армения не богата энергетическими ресурсами и зависит от их импорта. Это обстоятельство в сочетании с экономической блокадой и перманентной угрозой возобновления войны ставит в разряд первоочередных задачи диверсификации источников энергоресурсов и поиска путей их доставки. В то же время РА с учетом кадровых ресурсов и природно-климатических условий обладает устойчивым потенциалом для развития энергетической сферы. В деле обеспечения энергетической безопасности и развития оборон-

ной системы Армении особое внимание следует уделить перспективному развитию альтернативных (возобновляемых) источников энергии – солнца, ветра, биогаза, воды, а также эффективной политике энергосбережения. В частности, для решения бытовых проблем в войсковых частях и обеспечения автономности в их электроснабжении имеет определенную перспективу использование солнечных водонагревателей, ветряных электростанций, а также гидроэлектростанций малых мощностей.

ENERGY SECURITY

ENERGY DEVELOPMENT ISSUES OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE ASPECT OF ENERGY SECURITY

S. R. PAPIKYAN, PhD in Technical Sciences, Chairman-Founder, Armenian Academy of Energetics

SUMMARY

The Republic of Armenia is not rich in energy resources and dependent on their import. This circumstance, in combination with the economic blockade and the permanent threat of war resumption, prioritizes the tasks of diversifying energy sources and searching for ways of their delivery. At the same time, with regard to the human resources, as well as natural and climatic conditions, the Republic of Armenia has a sustainable potential for the energy sphere development. In providing energy security and developing the defense system of Armenia special attention should be paid to the perspective development of alternative (renewable) energy sources – solar, wind, biogas, water, as well as to the efficient energy conservation policy. In particular, to solve everyday problems in military units and ensure self-sufficiency in their power supply, there is certain perspective in the use of solar water heaters, wind farms, as well as small-capacity hydroelectric power stations.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Թ. Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր

Հայաստանի գլխավոր արտաքին մարտահրավերն այսօր պայմանավորված է այն բանով, որ արդյունավետ տնտեսական քաղաքականություն չլինելու դեպքում տնտեսության հետագա ազատականացումը կարող է ուղեկցվել տնտեսական անվտանգության թուլացմամբ, դրա արդյունաբերական և տեխնոլոգիական կարողությունների առաջընթացի արգելակմամբ, ինչպես նաև համաշխարհային շուկայում հիմնականում ծառայությունների ոլորտի մասնագիտացման և որոշ արտադրությունների գծով զարգացած պետություններից կախվածությամբ, կամ, որն ավելի վտանգավոր է, տեղական արտադրության կորստով: Մի կողմից՝ դա պայմանավորված է հանրապետության տնտեսությունում նկատվող ճգնաժամային երևույթներով, գործնականում տնտեսական շահերի պաշտպանության համակարգի անբավարարությամբ, «ստվերային» տնտեսության զգալի տեսակարար կշռով և այլ բացասական ներտնտեսական երևույթներով: Մյուս կողմից՝ այդ վտանգն ավելի է խորանում մի շարք արտաքին տնտեսական գործոնների ազդեցությամբ: Դրանց թվին են պատկանում՝ կուտակված զգալի արտաքին պարտքը*, տարածաշրջանային հաղորդակցություններից փաստացի մեկուսացածությունը և գոյություն ունեցող հաղորդակցությունների անարդյունավետ, ոչ լիարժեք օգտագործումը, ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի անդամ պետությունների և այլ արտաքին գործընկերների ու մրցակիցների ջանքերով հանրապետության մտավոր կարողության նվազումը բարձրորակ մասնագետների արտահոսքի պատճառով, երկրից ազգային հարստության (մշակութային արժեքներ, արտարժույթ, ռազմավարական նշանակության հումք և ապրանքներ) դուրսբերումը, արտահանման կարողությանն օժանդակող և ներմուծման կառուցվածքի արդյունավետության մեծացման ժամանակակից ֆինանսական, կառուցվածքային ու տեղեկատվական ենթակառուցվածքների թերի զարգացածությունը:

Հայաստանը, ինչպես հայտնի է, չի հակամարտում միջազգային ուժի որևէ կենտրոնի հետ, ոչ էլ որևէ կերպ մասնակցում կամ աջակցում է նման ուժերի հակամարտություններին: Միևնույն ժամանակ, նա չի պատրաստվում դրանցից և ոչ մեկից միակողմանի կախվածության մեջ լինել: Այսօր

* 2019 թ. ապրիլի 1-ի դրությամբ արտաքին պարտք / ՀՆԱ-ի հարաբերակցությունը 70 տոկոսից ավելի էր:

Հայաստանի Հանրապետությունը վարում է փոխլրացման արտաքին քաղաքականություն, որը հնարավորություն է տալիս երկկողմ և բազմակողմ հարաբերությունների համաչափ զարգացմամբ անցում կատարելու միջազգային տնտեսական համագործակցության ու համաշխարհային շուկային մերձեցման մի աստիճանից մյուսը[1]: Այդ հարաբերությունները, իրենց հերթին, կարող են հնարավորություն ընձեռել առավելագույնս արդյունավետ կերպով իրացնելու Հայաստանի և հայության մրցակցային առավելությունները:

Տնտեսական անվտանգության արտաքին հատվածը փոխկապված գործոնների մի ամբողջություն է, որը որոշակի ազդեցություն ունի տնտեսության և դրանում տեղի ունեցող գործընթացների վրա: Արտաքին տնտեսական անվտանգության մաս են կազմում արտերկրի հետ տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգը, որը բնութագրվում է, մի կողմից, համաշխարհային տնտեսության, միջազգային տնտեսական կապերի վիճակով, ուժերի բաշխվածությամբ և առաջատար պետությունների վարած արտաքին տնտեսական քաղաքականությամբ, իսկ մյուս կողմից՝ ազգային տնտեսության վիճակով և ազգային ու պետական շահերն արտացոլող համապատասխան արտաքին տնտեսական քաղաքականությամբ:

Արտաքին տնտեսական բնագավառում առաջադրման են ենթարկվում տարբեր պետությունների տնտեսական զարգացման ազգային չափանիշները, որոնք համաշխարհային շուկայում որոշակիորեն շտկվում են՝ հարմարեցվելով աշխատանքի միջազգային բաժանման փոխկապված համամասնությունների համակարգին[2]: Համաշխարհային շուկայի ներգործության հենց այդ բնույթն է հնարավորություն տալիս արտաքին տնտեսական անվտանգությունը դիտելու որպես տնտեսության առանձին ոլորտ և սուբյեկտ:

Արտաքին տնտեսական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված քաղաքականությունը կոչված է երաշխավորելու պետության՝ որպես ամբողջական տնտեսվարող կառույցի կայուն և անկախ զարգացումը, նրա բնականոն տնտեսական աճը՝ հիմնված արտաքին տնտեսական արդյունավետ փոխհարաբերությունների, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի և մտավոր կարողության անընդհատ զարգացման վրա: Նման մոտեցման դեպքում արտաքին տնտեսական անվտանգությունը կարելի է բնորոշել որպես անհրաժեշտ մրցունակության, համաշխարհային շուկային ազգային տնտեսության առավելագույն մերձեցման և բարձր աստիճանի ճկունության ձեռքբերում, տնտեսության կառավարելիության և, մի կողմից, հովանավորչական պաշտպանության, մյուս կողմից՝ ազատական քաղաքականության հետ կապված փոփոխականության նկատմամբ զգայունության ապահովում՝ կայուն տնտեսական զարգացման նպատակով: Այս ամենի հետևանքով հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային

[1] Տես *Christopher Hill.* The Changing Politics of Foreign Policy. New York, 2003, PP. 223–234:

[2] Տես “International Security and Economic Policy” (http://portal.publicpolicy.utoronto.ca/en/MPPMPAPrograms/MarylandSPP/Documents/IntlSecurity.pdf):

ազգային գործընթացների արագընթաց զարգացմանը զուգահեռաբար համաշխարհային տնտեսական համագործակցության մասնակիցների թիվն անընդհատ փոփոխվում է: Աշխատանքի միջազգային բաժանմանը պետության մասնակցությունը, տեղական ձեռներեցության զարգացման համար որոշակի ազդակ ծառայելով հանդերձ, նշանակում է արտաքին աշխարհից ազգային տնտեսության կախման աճում: Անվտանգությունն այս դեպքում ստանում է այն իմաստը, որ տվյալ կախումը հասցվի նվազագույնի կամ հնարավորություն ստեղծվի արտաքին ռեսուրսները և համագործակցության կապերը փոխարինելու տեղական աղբյուրներով[*]:

Արտաքին տնտեսական անվտանգությանն առնչվող էական հակասություններից մեկն այն է, որ պետությունները, որպես ամբողջություն վերցված, ձգտում են տնտեսական և հասարակական կյանքի ինտեգրմանը, ինչին հակադրվում է հիմնականում ազգային պետական զարգացման փաստացի կողմնորոշումը: Դա իր հերթին նշանակում է, որ արտաքին տնտեսական անվտանգության ապահովման ճանապարհին եղած այս հիմնական հակասությունը պայմանավորված է զարգացման օբյեկտիվորեն պահանջվող փուլերը շրջանցելու արդիական փորձերով: Մյուսը համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու, միջազգային կառույցներին ակտիվորեն անդամակցելու և տեղական ձեռներեցությունն ամեն գնով հովանավորելու գործում շահագրգռվածության ակնհայտ հակասականությունն է: Ըստ որում, արտաքին տնտեսական անվտանգությունն անհրաժեշտաբար ներառում է բարեփոխումների այնպիսի ոլորտներ, որոնք նպաստում են պետության պաշտպանական կարողության ամրապնդմանը, արտաքին շուկաներում նոր՝ ավելի բարձր, դիրքերի գրավմանը, ինչպես նաև տարածաշրջանում ազդեցության հնարավոր ոլորտների ձևավորմանը[3]:

Մեր հանրապետությունում արտաքին տնտեսական անվտանգության անհրաժեշտ մակարդակի ձեռքբերումը ենթադրում է պետության կենսական շահերի պաշտպանություն, տարածաշրջանային գործընթացներում որոշիչ դերի ապահովում, ներքաղաքական և ներտնտեսական խնդիրների լուծման համար որոշակի ինքնուրույնություն, ինչի շնորհիվ կկանխվեն արտաքին ուժերի հնարավոր ճնշումներն ու վերջնագրերը և հնարավոր կդառնա երկրում հասնելու սոցիալական ու քաղաքական կայունության:

Այսպիսով՝ ներկայումս արտաքին տնտեսական անվտանգությունը կարելի է բնութագրել որպես տնտեսության զարգացման արդյունքների և պետության արտաքին տնտեսական քաղաքականության համապատասխանությունը՝ ընթացիկ և հեռանկարային շահերին: Հետևաբար արտաքին

[*] ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից մշակվել և իրականացվում է ներմուծման փոխարինման քաղաքականություն:

[3] Այս մասին ավելի հանգամանորեն տես ՀՀ Կառավարության 2019 թ. մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» հմ. 650-Լ որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287):

տնտեսական անվտանգության հիմնական գործառույթ պետք է համարել ազգային տնտեսությունն ապակայունացնող ներքին և արտաքին գործոնների ազդեցության հնարավորինս նվազեցումը:

Այսօր ակնհայտ են դառնում համաշխարհային տնտեսությանը բնորոշ համընդհանրացումից ակնկալվող դրական արդյունքները: Միևնույն ժամանակ, չի կարելի չնկատել, որ այդ գործընթացը կարող է կործանարար լինել, եթե հաշվի չառնվեն յուրաքանչյուր պետության առանձնահատկությունները և տնտեսական ու քաղաքական գերակայությունները: Ներկայումս կարելի է առանձնացնել ինտեգրային հետևյալ գործընթացների երեք հիմնական ուղղությունները: Առաջինը բնորոշ է արևմտաեվրոպական պետություններին, որոնք ունեն տնտեսական զարգացման մոտավորապես նույն մակարդակը, հավասարակշռություն են պահպանում ազգային շահերի, ազգային շուկաների միջազգայնացման և ինքնուրույն զարգացման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական հիմքերի ամրապնդման միջև: Դասական դարձած այս ճանապարհով փորձում են շարժվել նաև որոշ զարգացող երկրներ, որոնք նպատակ ունեն ստեղծելու ընդհանուր շուկա: Երկրորդը թույլ զարգացած պետությունների տնտեսության ազատականացման ուղին է, երբ համաշխարհային շուկայի ազդեցությունը հիմնականում ձեռք է բերում կործանարար բնույթ, իսկ պետական տնտեսությունը հեռու է հավասարակշռված վիճակից և կայունությունից, պաշտպանված չէ համաշխարհային տնտեսության վայրիվերումներից, զուրկ է աշխատանքի միջազգային բաժանմամբ ընձեռվող հնարավորությունները ներքին կառուցվածքային բարեփոխումներին ծառայեցնելու ունակությունից, ինչն իր հերթին հանգեցնում է ներքին պառակտումների և քաղաքական ցնցումների: Վերջապես, երրորդ ուղին թույլ զարգացած պետությանը տանում է դեպի համաշխարհային տնտեսությանը աստիճանական, կարգավորվող և կառավարելի ինտեգրում: Տվյալ դեպքում համաշխարհային տնտեսությանը հետևողական փուլային ինտեգրումը համապատասխանեցվում է ներտնտեսական վերափոխումներին և օգտագործվում է որպես ազգային զարգացման մի կարևոր միջոց[4]:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսական գործընթացներին հաղորդակցման որևէ ձևն ընտրելու դեպքում հնարավոր են երկու հիմնական տարբերակներ.

– պետության տնտեսությունն ապրում է հետընթաց և քայքայվում,
– տնտեսությունն ստանում է աճելու լրացուցիչ հնարավորություններ և արդյունավետության հզոր աղբյուր:

Արտաքին տնտեսական անվտանգության վերլուծության ժամանակ կարևոր է հաշվի առնել, որ երկու դեպքում էլ աճում է ազգային տնտեսության կախումն արտաքին գործոններից, սակայն դրա աստիճանը և բնույթը

[4] Տես *И. В. Снимщикова, Е. М. Маковка.* Некоторые теоретические аспекты внешнеэкономической безопасности России. «Общество: политика, экономика, право», 2012, № 1 (https://cyberleninka.ru/article/v/nekotorye-teoreticheskie-aspekty-vneshneekonomicheskoy-bezopasnosti-rossii):

կարող են լինել միանգամայն տարբեր: Հենց այդ կախման և տնտեսության ինքնաբավության միջև անհրաժեշտ հաշվեկշռի պահպանումը տվյալ պետության արտաքին տնտեսական անվտանգության հիմնական խնդիրն է:

Ինչպես վկայում է նորանկախ պետություններում արտասահմանյան հսկա ընկերությունների փորձը, նոր շուկաների գրավումը կատարվում է երեք հաջորդական փուլերով: Առաջին փուլում տեղի են ունենում զարգացած օտարերկրյա ընկերությունների արտադրանքի զանգվածային առաքումներ և վաճառք, ինչի միջոցով և համապատասխան գովազդային աշխատանքների շնորհիվ ճշտվում են սպառման նոր շուկաների ծավալները և ազգային առանձնահատկությունները, դրա կառուցվածքը և պահանջարկը: Երկրորդ փուլում արտերկրի ընկերությունները, ամրապնդելով նոր շուկաներում իրենց դիրքերը, ձևավորում են արտադրանքի բաշխման սեփական ցանցը, կազմակերպում լիցենզավորված ապրանքների արտադրություն, ինչպես նաև ներմուծվող մասերով արտադրանքների հավաքման գծեր: Երրորդ փուլը եզրափակում է նոր շուկայի գրավումը՝ տեղի ձեռնարկության ձեռքբերմամբ կամ իր ուժերով նոր արտադրության ստեղծման միջոցով: Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների փորձը ցույց է տալիս, որ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում՝

– տարբեր տեսակների սնունդը, ոգելից խմիչքները, ծխախոտը,
– դեղագործական ապրանքները,
– հեռահաղորդակցությունները,
– մեքենաշինությունը,
– էներգետիկ և էլեկտրատեխնիկական սարքավորանքը,
– քիմիական արդյունաբերությունը,
– համակարգիչները,
– կենցաղային էլեկտրոնիկան և այլ ապրանքներ:

Հատկանշական է, որ արտասահմանյան ներդրումների համար ներկայումս Հայաստանում ստեղծված բարենպաստ պայմանները բոլորովին էլ բնորոշ չեն անկախացման ուղին ընտրած մի շարք, առաջին հերթին՝ Արևելյան Եվրոպայի պետություններին: Այսպես. առաջին տարիներին արտասահմանյան ընկերություններին տրամադրած արտոնությունները հետզհետե կրճատվում են Բուլղարիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Չեխիայում և Էստոնիայում: Այս առումով որոշակի զգուշավոր վերաբերմունք է ձևավորվել նաև Ռուսաստանում:

Անկախացման սկզբնական փուլի թողտվություններն իրենց տեղը զիջում են ազգային տնտեսության շահերի պաշտպանությանն ուղղված պետական ծրագրերի իրականացմանը: Գնալով ավելի մեծ դեր է հատկացվում պետությանն ու պետական կառավարման լծակներին: Արտաքին տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված պետական կառավարային գործառույթների իրականացումը պահանջում է, մի կողմից, արտաքին տնտեսական կապերի ազատականացման և, մյուս կողմից, տեղական շուկան արտասահմանյան ընկերությունների անարդար մրցակցությունից պաշտպանությանը միտված հովանավորչական միջոցառումների, հայրենական

արտադրության մրցակցային առավելությունների զարգացման քայլերի հավասարակշռված զուգորդում: Հայաստանում իրագործվող տնտեսական բարեփոխումներում, ինչպես հայտնի է, շրջանցվել է արտաքին տնտեսական անվտանգության այդ հիմնարար պահանջը: Ձեռնարկություններին ի սկզբանե տալով արտաքին շուկաներ դուրս գալու իրավունք՝ պետությունը որևէ կերպ հաշվի չի առել արտաքին տնտեսական անվտանգությունն ապահովող գործոնները, չի հաշվարկել առևտրի ազատականացումից ակնկալվող իրական արգասիքներն ու վնասները: Որպես արդյունք՝ չափից ավելի բաց տնտեսության մեջ անկառավարելիորեն աճեց ստվերային հատվածը, նվազեց արտահանման կարողությունը, մեծացավ բնակչության կախումը ներմուծվող ապրանքներից: 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետություն ներկրվող ապրանքները գումարային արտահայտությամբ եռապատիկ գերազանցում էին արտահանումը[5]:

Տնտեսության ազատականացման քաղաքականության մեջ անհրաժեշտաբար պետք է հաշվի առնվեն ոչ միայն նյութատեխնիկական, այլև սոցիալական բնույթի մի շարք գործոններ, ինչպիսիք են նոր աշխատատեղերի ստեղծումը, հին աշխատատեղերի պահպանումը, սպառողների շահերի պաշտպանությունը և այլն: Ազատականացման և հովանավորչության հարաբերակցության խնդիրը առավել հաջող լուծել են ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի պետությունները, որոնք դեռ 1929–1933 թթ.՝ «Մեծ դեպրեսիայից» հետո, աստիճանաբար կիրառեցին տնտեսության և արտաքին առևտրի պետական կարգավորման տարբեր մեխանիզմներ: Տնտեսագիտության մեջ դա հայտնի է որպես քեյնսյան տեսության գործնական կիրառություն, որի հիմքում ոչ թե միկրո, այլ մակրոտնտեսական հասկացություններն են՝ ազգային եկամուտը, սպառումը, խնայողությունները և ներդրումները:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991–2017 ԹԹ.[6]

	1991 թ.	*1999 թ.*	*2017 թ.*
Ներդրումային միջավայրը կարգավորող օրենքների փոփոխություններ ներկայացրած պետությունների թիվը	35	63	44
Օրենսդրական, կանոնակարգող փոփոխությունների թիվը, ներառյալ՝	82	140	67
– արտաքին ներդրումները խթանող	80	131	52
– արտաքին ներդրումներին խոչընդոտող	2	9	15

[5] Տես «Հիմնական վիճակագրական տվյալներ» (https://www.armstat.am/am/):

[6] Տես “World Investment Reports 1992-2017. Foreign Direct Investment and the Challenge of Development”. United Nations Conference on Trade and Development. United Nations, New York and Geneva, 1992-2017:

Ազատականացման տեսությունները զարմանալի կերպով դարձյալ տարածում ստացան, այս անգամ՝ անցյալ դարի 90-ականների սկզբին, երբ Արևմուտքի արդեն կայացած տնտեսություններն իրենց կարող էին թույլ տալ նման սկզբունքների քարոզում՝ հիմնականում նախկին մրցակից բևեռի պետություններում[7]: Տնտեսական բարեփոխումների առաջին տասնամյակը ցույց տվեց, որ միայն ազատականացմամբ, համընդհանրացման տեսությամբ, առաջատար արդյունաբերական պետությունների և միջազգային կազմակերպությունների մոդելներով հնարավոր չէ ներտնտեսական խնդիրների համար գտնել հանգուցալուծումներ: Այս խնդիրներն ըստ ամենայնի պահանջում են պետության առանձնահատկությունների և առաջնահերթությունների հանգամանալից հաշվառում և՛ ընթացիկ, և՛ հեռանկարային ծրագրերի մշակման, առավել ևս՝ իրագործման փուլերում: Եվ այս ամենը, բնականաբար, պահանջում է պետության վերահսկողության որոշակի ակտիվացում:

Միևնույն ժամանակ, կարևոր է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ առևտրի (այդ թվում և արտաքին) վերահսկելիության աստիճանը հակառակ համեմատական է բնակչության մեկ շնչին բաժին հասնող եկամտի մակարդակին: Որքան բարձր է տնտեսության արդյունավետության, հետևաբար՝ եկամտի մակարդակը, այնքան քիչ հիմքեր ունի պետությունը դիմելու հովանավորչության, այսինքն՝ այդքանով քիչ են առևտրի համար սակագնային և ոչ սակագնային արգելքները: Եթե զարգացող պետություններում հովանավորչությունը պայմանավորված է նոր արտադրությունների աճն ապահովելու ձգտմամբ, ապա զարգացած պետություններում հովանավորչական քաղաքականությունը, ըստ էության, արդարացում չունի[8]: Զարգացած պետություններում, որպես կանոն, հովանավորչության հիմքում շահագրգիռ խմբերի քաղաքական ուժն է, որը միավորում է ոչ միայն արդյունաբերողներին, այլև արհմիություններն ու ֆերմերներին: Այս դեպքում սակագները պաշտպանում են ոչ թե արդյունաբերության նոր ճյուղերը կամ նոր արտադրությունները, այլ ընդհակառակը, հիմնականում՝ հին և արտերկրի իրենց հակառակորդների նկատմամբ մրցունակությունը կորցնող տեղական արտադրությունները: Հովանավորչական քայլերի ձեռնարկումը կախված է տնտեսության համար տվյալ ճյուղի կարևորությունից և դրանում շահագրգռված քաղաքական ուժերից: Համաշխարհային փորձը վկայում է, որ մրցակցությունից պաշտպանությունն ինքնին կարող է հանգեցնել այնպիսի արտադրությունների զարգացմանը, որոնք ի վիճակի չլինեն մրցակցելու համաշխարհային շուկայում: Մյուս կողմից՝ միամտություն կլինի ենթադրել, որ այսօր համաշխարհային շուկայում եղանակ ստեղծող ընկերությունները ձևավորվել և հաջողությունների են հասել միմիայն շուկայական տարերքի և ազատ մրցակցության շնորհիվ՝ առանց պետության անհրաժեշտ միջամտության:

[7] Տես *Neil Clark.* Eastern Europe's neoliberal disaster provides a warning for the Arab spring. “The Guardian”, 20 May 2012:

[8] Տես *Murray N. Rothbard.* Protectionism and the Destruction of Prosperity (https://cdn.mises.org/Protectionism%20and%20the%20Destruction%20of%20Prosperity_2.pdf):

Պետք եղած լծակների օգտագործմամբ ժամանակակից տեխնոլոգիաների, ծրագրավորման և այլ ապրանքների ու ծառայությունների միջոցով արտաքին շուկաների նվաճումը կարող է հանգեցնել տնտեսության կայուն զարգացման, ներդրումների համար անհրաժեշտ վստահության մթնոլորտի ձևավորման, արտարժույթի զանգվածային ներհոսքի, գիտատեխնիկական առաջընթացի, հայրենական ապրանքների մրցունակության աստիճանական բարձրացման: Այս ամենով հանդերձ՝ դա համեմատաբար փոքր տարածք ունեցող պետություններին հնարավորություն կընձեռի որպես հավասարը հավասարի հետ համագործակցելու թե՛ տարածաշրջանում, թե՛ բազմաթիվ զարգացող ու զարգացած պետությունների հետ՝ բարձրացնելով նաև պետության հեղինակությունն արտերկրում: Այս իմաստով հույժ կարևոր է հաշվի առնել համաշխարհային շուկայում ավանդաբար գերիշխող պետությունների արտաքին և արտաքին տնտեսական քաղաքականությունների հնարավոր փոփոխությունները, որոնք վաղ թե ուշ կարող են ազդել ազգային տնտեսության զարգացման վրա: Այսպես. միջազգային բանալի տարադրամի հայրենիքի՝ ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը վաղուց արդեն դադարել է տեղական նշանակություն ունենալուց: Դոլարի փոխարժեքի անընդհատ փոփոխությունների ճիշտ հաշվարկած կանխատեսումները կարող են զգալի օգուտներ բերել, իսկ դրանց անտեսումն ընդհակառակը՝ կործանարար ազդեցություն ունենալ ոչ միայն զարգացող, այլև մի շարք զարգացած երկրների համար[9]: Եթե 80-ական թվականներին Ռեյգանի վարչակազմը հիմնականում վարում էր դոլարի բարձր փոխարժեքի և բանկային բարձր տոկոսադրույքի քաղաքականություն, ինչը հնարավորություն տվեց կապիտալ ներգրավելու աշխարհի բոլոր ծայրերից, ապա 90-ականների սկզբին Բուշը պետությունը կողմնորոշեց դեպի «թույլ դոլարը»՝ արհեստականորեն իջեցված մակարդակով ազգային արժույթը օգտագործելով արտահանման կարողությունը զարգացնելու և արտաքին առևտրային հաշվեկշիռը բարելավելու համար[10]:

Ինչ վերաբերում է Քլինտոնի կառավարությանը, ապա նա ավելի հակված էր ամերիկյան տնտեսության զարգացումը սահմանափակել Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտու և Առևտրի համաշխարհային կազմակերպության, այլ կառույցների բազմակողմ համագործակցության շրջանակներում[11]: Այսուհանդերձ, թե՛ ԱՄՆ-ի ներկայիս վարչակազմը, թե՛ զարգացած շուկայական տնտեսությամբ մի շարք այլ պետություններ շարունակում են

[9] Տես *Andrew Berg and Eduardo Borensztein*. The Pros and Cons of Full Dollarization. IMF Working Paper No. 00/50. Washington, DC, 2000, PP. 33–35:

[10] Տես *Stephen Moore and John Tamny.* Week Dollars, Week Presidents, The real reason why Republicans never had a chance on November 4. “The American Spectator”, From the December 2008 January 2009 issue (http://spectator.org/articles/42534/weakdollarsweakpresidents):

[11] Տես “Deeper, better, NAFTA, North America’s trade deal has delivered real benefits. But the job is not done”. “The Economist”, 4 January 2014 (https://www.economist.com/leaders/2014/01/04/deeper-better-nafta):

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՏԱՆԿԵՐ*

Տ-90 Ա
(Ռուսաստան)

Տ-80 ՈՒ
(Ռուսաստան)

* Ներդիրում ներկայացված բոլոր տանկերի ՄՏԲ-ները տես էջ 121–122:

Մ1Ա2 «Աբրամս»
(ԱՄՆ)

ՉՏՋ-99Ա2
(Չինաստան)

«Չելենջեր-2»
(Մեծ Բրիտանիա)

«Լեոպարդ» 2Ա6Մ
(Գերմանիա)

«Լեկլերկ» ԱՄԻքս-56
(Ֆրանսիա)

«Մերկավա»-Մկ4
(Իսրայել)

կիրառել պետական հովանավորչության բազմապիսի լծակներ՝ տեղի ձեռնարկատերերին պաշտպանելու և պետության տնտեսական, այդ թվում՝ արտաքին տնտեսական անվտանգությունը ապահովելու համար:

Այս ամենը, մի կողմից, ստիպում է վերագնահատել անկախացման առաջին տարիների վարած տնտեսական քաղաքականությունը՝ առանձնակի ուշադրության արժանացնելով հատկապես տնտեսության պետական կառավարման հնարավորությունները, մյուս կողմից՝ կասեցնել պետությանը բնորոշ մրցակցային առավելությունների փոշիացումը: Ընդ որում, պետք է խոստովանել, որ հաճախ շրջանառության մեջ հանդիպող մրցակցային առավելությունների մի մասը այսօր արտասահմանյան ներդրողներին այլևս տրամադրելի չէ. արտադրական տեխնոլոգիաները բարոյապես մաշված են, բնական մենաշնորհների մեծ մասը տրամադրված է անարդյունավետ շահագործման կամ վերածվել է իրական մենաշնորհի, տեղի է ունենում որակյալ մասնագետների շարունակական արտահոսք, և այս ամենը տնտեսության զարգացման համար լուրջ խոչընդոտ է:

Իրատեսորեն գնահատելով իրավիճակը՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի արտաքին տնտեսական անվտանգությունն ունի երկու հիմնական կողմ: Մեկը արտաքին շուկաներից սպասվող հնարավոր սպառնալիքներն են, հաղորդակցության ուղիների շրջափակումը, իսկ մյուսը՝ ազգային տնտեսության ձևավորումը վտանգող, նախկինում հաստատված կլանային համակարգերն են, ինչպես նաև բյուրոկրատական խոչընդոտները, կոռուպցիան, ստվերային տնտեսության ծավալները և այլն, որոնք «թավշյա հեղափոխությունից» մեկ տարի անց էլ դեռ ամբողջովին չեն վերացել:

Եվ այսպես, չնայած ապրանքների, ծառայությունների, կապիտալների և տեղեկատվության միջազգային փոխանակման համընդհանուր միտմանը, Հայաստանն ի վիճակի չի լինի ստեղծելու ինքնուրույն շուկայական տնտեսություն կամ ապահովելու իր տնտեսական, այդ թվում՝ արտաքին տնտեսական, անվտանգությունը, եթե հետագայում ևս ակտիվորեն չկիրառի արտաքին տնտեսական կապերի կարգավորման անհրաժեշտ միջոցներ և լծակներ: Դրանք տնտեսական բնույթի են (մաքսային սակագներ, գանձումներ, ներքին հարկեր, սակագնային արտոնություններ և քանակական սահմանափակումներ, հակադեմպինգային և փոխհատուցող տուրքեր), ինչպես նաև ներկրման ու առաքումների սահմանափակման կամ արգելման ոչ սակագնային միջոցները՝ բեռնարգելանք ((էմբարգո), լիցենզավորում, քանակական սահմանափակումներ, արտահանման կամավոր կրճատում, տեխնիկական ստանդարտների կիրառում, սանիտարական, բնապահպանական և այլ պահանջներ, պետական մթերումներ): Կարգավորման սակագնային և ոչ սակագնային միջոցների կիրառման պարագայում կարևոր է ոչ այնքան ֆիսկալ կողմը, որքան տնտեսության անընդհատ աշխատանքը, պետության պաշտպանունակությունը, ազգային տնտեսության կառուցվածքային վերակառուցումն ապահովող որոշ ռազմավարական ճյուղերի և ձեռնարկությունների պահպանումը:

Ակնհայտ է, որ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությունը, բազմաթիվ դրական կողմերի հետ մեկտեղ, Հայաստանին այլևս թույլ չի տա վարել թեկուզ և չափավոր հովանավորչական քաղաքականություն: Արտաքին շուկաներում մրցակցելուն անպատրաստությունը կարող է լուրջ վնաս հասցնել մեր տնտեսությանը[12]: Նույնը պետք է հաշվի առնել նաև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության առնչությամբ[13]: Թերևս նպատակահարմար է վերը նշված երկու կառույցներին անդամակցելուն զուգահեռաբար մշակել և կիրառել արտաքին տնտեսական անվտանգության սկզբունքներին հարիր ռազմավարություն և դրա իրագործման հստակ մեխանիզմներ:

Հաշվի առնելով միջազգային տնտեսական հարաբերություններում պետությունների միջև գոյություն ունեցող և օրեցօր աճող փոխկապվածությունը՝ կարող ենք արձանագրել, որ նշված և մեծաթիվ սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարումը միայն ներքին ուժերով հնարավոր չէ: Առանց միջազգային համագործակցության և փոխշահավետ կապիտալ ներդրումների հնարավոր չէ հասնել հանրապետության տնտեսության աճի, հետևաբար նաև՝ բնակչության կենսամակարդակի և իրական եկամուտների ավելացման գործում շոշափելի առաջընթացի թեկուզ այն պատճառով, որ Հայաստանի հազարամյակների պատմության մեջ երբեք չի եղել արտադրության կողմնորոշում դեպի արտաքին շուկաներ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ թե՛ արդյունաբերության տեխնիկական զինվածության, թե՛ մասնագետների կրթական մակարդակի առումով, թե՛ համատեղ արտադրության համար առաջարկվող ապրանքների ու ծառայությունների գծով Հայաստանը նորանկախ, հատկապես՝ տարածաշրջանում գտնվող, պետությունների նկատմամբ ունի համագործակցության համար խիստ շահավետ համեմատական, իսկ երբեմն էլ՝ բացարձակ առավելություն[14]: Դրանց թվում կարող են ներառվել Հայաստանից արտահանման կարողության համար էական նշանակություն ունեցող այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ տեղեկատվական տեխնոլոգիաները, ժամանակակից գիտատար սարքաշինությունն ու մեքենաշինությունը, կենսատեխնոլոգիան, օպտիկական (այդ թվում և թելքային), էլեկտրոնիկան, լեռնային պայմաններում աշխատող մեքենաների մեխանիզմների արտադրությունը, ավանդական՝ կոնյակի, գորգի արտադրությունը և այլն:

[12] Տես «ВТО и экономические закономерности развития в странах СНГ: на примере Армении». М., Апрель 2008, сс. 17–19:

[13] Տես «Процесс евразийской интеграции Армении не противоречит евроинтеграции – эксперт», 24 Октября 2012 (http://alternative.am/процесс-евразийской-интеграции-арме/):

[14] Տես *M. E. Porter, M. R. Kramer.* Creating Shared Value. “Harvard Business Review”, Jan/Feb 2011, Vol. 89, Issue 1/2:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Т. Н. МАНАСЕРЯН, доктор экономических наук, профессор

РЕЗЮМЕ

Внешнеэкономическая безопасность Армении имеет два ключевых аспекта. Один из них – это защищенность от потенциальных угроз, генерированных внешними рынками, а также в результате блокады коммуникаций, второй определяется рисками связанными с ранее сформировавшейся клановой системой, угрожающей развитию национальной экономики, а также с бюрократическими препонами, коррупцией, теневой экономикой и т. п., которые спустя год после «бархатной революции» еще не полностью ликвидированы. Несмотря на общую тенденцию международного обмена товарами, услугами, капиталом и ИТ, Армения не сможет создать свою собственную рыночную экономику или обеспечить свою экономическую, в том числе внешнеэкономическую, безопасность, если не будет продолжать активно использовать необходимые инструменты и рычаги регулирования внутриэкономических отношений.

ECONOMIC SECURITY

SOME ISSUES OF FOREIGN ECONOMIC SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

T. N. Manaseryan, Doctor of Economics, professor

SUMMARY

Armenia's foreign economic security has got two key aspects. The first aspect is the defensibility against potential threats emanating from external markets, as well as occurring as a result of the blockade of communications, with the second being defined by the risks related to the previously shaped clan system which threatens the development of the national economy, as well as to the bureaucratic hurdles, corruption, shadow economy, etc., that a year after the "velvet revolution" are not completely eliminated. Despite the general trend of international exchange of goods, services, capital and IT, Armenia will not be able to create its own market economy or to provide its economic, including external economic, security unless it continues to actively use necessary tools and levers to regulate domestic economic relations.

ՀԱՅ-ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐ

Ս. Օ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, 1-ին դասի խորհրդական, ՈԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի ասպիրանտ, ՀՀ ՊՆ ՊՔՎ պայմանագրա-իրավական բաժնի պետ

«Հայաստանը մեծապես կարևորում է Ռուսաստանի հետ համագործակցությունը պաշտպանական, ռազմատեխնիկական և էներգետիկայի բնագավառներում», գրված է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ[1]: Ռազմատեխնիկական ոլորտում այդ համագործակցությունը ծավալվում է ինչպես ԱՊՀ-ի ու ՀԱՊԿ-ի շրջանակներում, այնպես էլ երկկողմ ձևաչափով: Ընդսմին անհրաժեշտ է նշել, որ համագործակցության ռազմական և ռազմատեխնիկական ոլորտներում կողմերի ունեցած հիմնական պարտավորությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրով[2]:

Տվյալ պայմանագրի առկայությամբ պայմանավորում էր նաև լրացուցիչ փաստաթղթերի մշակում, որոնցով պետք է համագործակցության խորացման և ընդլայնման պայմաններում ապահովվեր կողմերի իրավունքների ու պարտավորությունների հավասարակշռությունը՝ ըստ ծագող պրոբլեմների և իրավիճակի զարգացման առանձնահատկությունների:

Ըստ էության համագործակցության հաստատման ու զարգացման նկատմամբ երկու պետությունների հավասար հետաքրքրվածությունը նշանակում է դրա համար անհրաժեշտ ջանքերի գործադրմանը նրանց համամասնական կշռադատված մասնակցություն, որը մտահայեցողական դիտարկման դեպքում իրոք հավասար է, իսկ իրականում արտացոլում է

[1] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 38 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/national-security-strategy-of-the-republic-of-armenia.pdf)):

[2] Տես «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր»: Ստորագրվել է 1997 թ. օգոստոսի 29-ին (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532):

նրանց հնարավորությունների մասշտաբները: Սույն մոտեցումը միանգամայն արդարացված է նաև ռազմական, այդ թվում՝ ռազմատեխնիկական, համագործակցության դեպքում: Այստեղ խոսքը ոչ թե ծախսվող միջոցների թվաբանական հավասարության մասին է, այլ վերաբերում է ծախսերի ծածկմանը նպատակաուղղված նրանց «ջանքերի հավասարությանը»:

Ինչպես արդեն նշվել է, հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցությունը զարգանում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերում՝ ԱՊՀ-ի ու ՀԱՊԿ-ի շրջանակներում սույն հոդվածում կուսումնասիրենք հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցության իրավական հիմքերի որոշ հարցեր՝ զուտ երկկողմ հարաբերությունների ձևաչափով:

Տվյալ համագործակցության իրավական հիմքը դրվել է երկու անկախ պետությունների ստեղծումից անմիջապես հետո:

Այսպես. հաշվի առնելով այդ ուղղություններին վերաբերող տեղեկույթի հսկայական ծավալները՝ ԽՍՀՄ-ում սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակման և արտադրության ընթացքում ձևավորված համագործակցային կապերը պահպանելու, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտահետազոտական ու կոնստրուկտորական հիմնարկությունների, ձեռնարկությունների, ասոցիացիաների միջև նոր հարաբերություններ զարգացնելու նպատակով և պաշտպանական արդյունաբերության կատարվող և պլանավորվող կոնվերսիայի հաշվառմամբ արդեն 1992 թ. օգոստոսի 21-ին Մոսկվայում ստորագրվեցին երկու կարևոր փաստաթուղթ՝ «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտպանական արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին»[3] և «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև իրենց զինված ուժերի փոխադարձ նյութական և տեխնիկական ապահովման սկզբունքների մասին»[4]:

[3] Տես «Соглашение о сотрудничестве в области оборонной промышленности Российской Федерации и Республики Армения». Подписано 21 августа 1992 г. (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-421/48808?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

[4] Տես «Соглашение между Республикой Армения и Российской Федерацией о принципах взаимного технического и материального обеспечения их вооруженных сил». Подписано 21 августа 1992 г. (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-421/48809?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD%EF%BF%BD&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

Երկրորդ համաձայնագիրը կարգավորում էր իրենց պաշտպանական բյուջեների հաշվին կողմերի զինված ուժերի սպառազինության, ռազմական տեխնիկայի, արտադրական-տեխնիկական նախանշանակման արտադրանքի և այլ նյութական միջոցների մշակման, արտադրության, մատակարարման և փոխադարձ ապահովման ընդհանուր հարցերը:

Հարկ է նշել, որ երկու փաստաթուղթն էլ ըստ էության հայտարարական բնույթի էին, սակայն նորանկախ պետությունների ձևավորման շրջանում, երբ Հայաստանը դեռ ընդգրկված չէր որևէ ռազմաքաղաքական դաշինքում և «այս աշխարհի տիրակալներից» ոչ մեկի հետ չուներ իր անվտանգության ապահովման առնչությամբ որևէ միջազգային պայմանագիր, այս փաստաթղթերը հսկայական նշանակություն ունեին երիտասարդ պետության միջազգային կերպարանքի ձևավորման համար:

Ներկայումս հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցության իրավական հիմքերը բովանդակող գլխավոր փաստաթուղթն անկասկած «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագիրն է, որն ստորագրվել է 2013 թ. հունիսի 25-ին[5]: Դրանից առաջ գործում էր «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին», որն ստորագրվել էր 2003 թ. հունվարի 17-ին Մոսկվայում և մինչև հիմա էլ դեռ ուժի մեջ է[6]: Սակայն այն կնքված էր միջկառավարական մակարդակով և բովանդակում էր ընդհանուր հասկացություններ ու պարտավորություններ, ինչի հետևանքով այսօր արդեն կորցրել է իր կարևորությունը: Ուստի երկու պետությունները որոշեցին իրենց ռազմատեխնիկական համագործակցությունը բարձրացնել նոր՝ միջպետական, մակարդակի, ինչը հնարավորություն կտար լուծելու ավելի մեծ ու կարևոր խնդիրներ և, որ ամենակարևորն է, ավելի համակողմանիորեն զարգացնելու հարաբերություններն այդ ոլորտում:

[5] Տես «Договор между Российской Федерацией и Республикой Армения о развитии военно-технического сотрудничества». Подписан 25 июня 2013 г. (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/53023?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=Договора+между+Республикой+Армения+и+Российской+Федерацией+о+развитии+военно-технического+сотрудничества&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

[6] Տես «Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Армения о военно-техническом сотрудничестве». Подписано 17 января 2003 г. (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/46236?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=Соглашение+между+Правительством+Республики+Армения+и+Правительством+Российской+Федерации+о+военно-техническом+сотрудничестве&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

Կնքված նոր միջպետական պայմանագրով նախատեսվում է ստեղծել սպառազինության և ռազմական տեխնիկայի հեռանկարային նմուշներով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ազգային զինված ուժերի, մյուս զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների զինումը երկար ժամկետներով պլանավորելու և դրանց մարտունակությունն ապահովելու համակարգ: Պայմանագիրը նաև հնարավորություն է տալիս պահպանելու նշված կառույցների կարիքների բավարարման համար ռազմական նախանշանակման արտադրանքի ստեղծման, թողարկման, նորոգման, արդիականացման և սպասարկման բնագավառում կողմերի ունեցած գիտատեխնիկական և արտադրական-տեխնոլոգիական ներուժը: Պայմանագրով նաև նախատեսվում է ռազմական նախանշանակման արտադրանքի փոխադարձ մատակարարումների, ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում ծառայությունների մատուցման ընթացակարգերի կատարելագործում: Սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերին մատակարարող ռազմական նախանշանակման արտադրանքը պետք է ունենա այն նույն բնութագրերն ու լրակազմը, որոնք ունի Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերին տրամադրվող արտադրանքը: Ընդսմին ՀՀ-ի համար գները ձևավորվում են այն նույն հիմքերով, որոնք գործում են ՌԴ-ի համար:

Այս ամենը Հայաստանին հնարավորություն է տալիս գնելու և իր սպառազինության մեջ ներառելու ՍՈՏ այնպիսի նմուշներ, որոնցում կիրառված են ամենաարդիական գիտատեխնիկական ու տեխնոլոգիական նորույթները, ինչպես նաև լուծելու երկկողմ ձևաչափով ու ՀԱՊԿ-ի, ԱՊՀ-ի շրջանակներում Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի փոխգործելիության ապահովման հարցը: Վերջին հանգամանքը նախադրյալներ է ստեղծել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զորքերի միացյալ խմբավորում կազմավորելու համար, ընդսմին այն տեղաբաշխվում է ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ՌԴ հարավարևմտյան գոտում:

Նախատեսված է, որ ռազմական նախանշանակման արտադրանքի մատակարարումները կատարվում են առանց արտադրանքի ներմուծման և արտահանման թույլտվությունների տրամադրման: Այս տեսակի պայմանագիր Ռուսաստանի Դաշնությունն ունի միայն Բելառուսի Հանրապետության հետ, մինչդեռ ՀԱՊԿ-ի անդամ մյուս պետությունների հետ նա կնքել է համաձայնագրեր ռազմատեխնիկական նախանշանակման արտադրանք արտահանման տարբերակով մատակարարելու վերաբերյալ:

Ռազմական նախանշանակման արտադրանքի Մատակարարումների վերաբերյալ առանձին պայմանագրերը կնքում են Կողմերի լիազորված կազմակերպությունները՝ ըստ ռազմական նախանշանակման մատակարարվող արտադրանքի հաստատված ցանկերի: Այս ցանկերը կազմվում են ռազմական նախանշանակման արտադրանքի ձեռքբերման կամ սպառման գործում շահագրգռված լիազորված կազմակերպությունների հայտագրերի հիման վրա, որոնք տվյալ կողմի լիազոր մարմինը վերածում է ցանկի, որն էլ ուղարկվում է մյուս կողմի համապատասխան լիազոր մարմնին:

Տվյալ պայմանագրի իրագործման մեխանիզմների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, պատրաստել էր առաջարկություն, որը հաստատվել է Կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ[7]: Այդ որոշմամբ կարգավորում են ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հարաբերությունների մեխանիզմները, ինչպես նաև ՀՀ-ում պայմանագրի իրացման ներքին կարգը (դիմումի օրինակելի նմուշը, ներկայացման կարգն ու ժամկետը, փաստաթղթերի քննարկման կարգն ու ժամկետը, որոշման ընդունման և քաղվածքի ուղարկման կարգը և այլն):

Պայմանագրի կատարման գծով լիազոր մարմիններ են. ՌԴ-ից՝ օտար պետությունների հետ Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության հարցերով դաշնային ծառայությունը, ՀՀ-ից՝ հանրապետության պաշտպանության նախարարությունը: Ցանկացած լիազորված կազմակերպություն (ոչ լիազոր մարմինը), որը ցանկանում է Ռուսաստանում ձեռք բերել ռազմատեխնիկական նախանշանակման արտադրանք կամ նման արտադրանք մատակարարել Ռուսաստանին, պետք է դիմի ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ ըստ Կառավարության վերը հիշատակված որոշմամբ հաստատված կարգի[8]:

Նշենք, որ գոյություն ունեն ռազմական նախանշանակման արտադրանքի, առաջին և երկրորդ ցանկեր, որոնցում ընդգրկված արտադրանքի արտահանման թույլտվություն տալիս են, համապատասխանաբար, Ռուսաստանի Դաշնության Նախագահը և Կառավարությունը:

Ռազմատեխնիկական համագործակցության հարցերի համադասման նպատակով ստեղծվել և գործում է ռազմատեխնիկական համագործակցության գծով հայ-ռուսաստանյան միջկառավարական հանձնաժողով, որի ամենամյա նիստերը տեղի են ունենում հաջորդաբար Հայաստանում և Ռուսաստանում: Նիստերին մասնակցում են երկու կողմի կառավարությունների, անվտանգության խորհուրդների աշխատակազմերի ներկայացուցիչներ, գերատեսչությունների ղեկավարներ, պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների տնօրեններ: Նրանք քննարկում են ՍՈՏ մատակարարման ընթացիկ հարցեր, համագործակցության հետագա զարգացման պլաններ, ստորագրում են սպառազինության ու զինամթերքի

[7] Տես Հայաստանի Հանրապետության Կառավարություն 2014 թ. դեկտեմբերի 4-ի «2013 թվականի հունիսի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրի կիրառման կարգը հաստատելու մասին» հմ. 1360-ն որոշում (https://www.e-gov.am/gov-decrees/item/25110/):

[8] Տես «2013 թվականի հունիսի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրի կիրառման կարգ»: Հայաստանի Հանրապետության Կառավարություն 2014 թ. դեկտեմբերի 4-ի հմ. 1360-ն որոշման հավելված (https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1360.pdf):

մատակարարման պայմանագրեր: Այսպես. հանձնաժողովի տասնչորսերորդ նիստը կայացել է 2019 թ. հունիսի 3-7-ը Երևանում, և դրան մասնակցել են ավելի քան 90 ներկայացուցիչներ: Որպես հանձնաժողովի գործունեության արգասիքների օրինակ կարելի է նշել, որ այդ նիստում պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում փաստաթղթերի հյուպատոսական օրինականացման ընթացակարգերը պարզեցնելու վերաբերյալ: Դրա հիմքը «Ռուսաստանի Դաշնությունում ռազմական նախանշանակման արտադրանքի ներմուծման և արտահանման արտոնագրման կարգի մասին» կանոնակարգն է, որը հաստատվել է ՌԴ Նախագահի 2005 թ. սեպտեմբերի 10-ի հրամանագրով[9]:

Ռազմատեխնիկական համագործակցության իրավական կարգավորման ոլորտում երկու պետություններն առանձնակի մեծ ուշադրություն են դարձնում մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության հարցերին: Այսպես. 2005 թ. նրանք Երևանում ստորագրել են «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում կիրառվող կամ ստացված՝ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին» փաստաթուղթը, որով պարտավորվել են կանխել այդ բնագավառում կատարվելիք իրավախախտումները[10]:

Ամփոփելով երկկողմ ձևաչափով հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցությունը կարգավորող հիմնական իրավական փաստաթղթերի սույն համառոտ ուսումնասիրությունը՝ հարկ ենք համարում նշել, որ հայ-ռուսաստանյան ռազմատեխնիկական համագործակցությունը ոչ միշտ է ապրել հարաճուն զարգացում, այլ եղել են ժամանակահատվածներ, երբ այն ինչ-ինչ պատճառներով արգելակվել է: Սակայն ներկայումս այդ համագործակցությունը ակտիվորեն զարգանում է, և հետագա զարգացման համար կարելի է վստահաբար ասել, որ ունի լավ հեռանկարներ, ինչի գրավականը համապատասխան իրավական փաստաթղթերի փաթեթի առկայությունն է:

---

[9] Տես «Положением о порядке лицензирования в Российской Федерации ввоза и вывоза продукции военного назначения». «Вопросы военно-технического сотрудничества Российской Федерации с иностранными государствами». Указ Президента Российской Федерации от 10.09.2005 г. № 1062 (http://kremlin.ru/acts/bank/22843/page/7):

[10] Տես «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ստացվող՝ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին»: Ստորագրվել է 2005 թ. դեկտեմբերի 2-ին (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=30243):

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПРАВОВОЙ ОСНОВЫ АРМЯНО-РОССИЙСКОГО ВОЕННО-ТЕХНИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА

С. О. АБРАМЯН, советник 1-го класса, аспирант Дипломатической академии МИД РФ, начальник Договорно-правового отдела УОП МО РА

РЕЗЮМЕ

В «Стратегии национальной безопасности» РА (2007 г.) зафиксировано важное значение военно-технического сотрудничества с РФ для обеспечения безопасности Армении в военной сфере. Для Вооруженных сил Республики Армения военно-техническое сотрудничество является одной из форм поддержания высокой боеготовности, а следовательно – гарантией обеспечения безопасности государства.

Данный факт отражают многочисленные двухсторонние договора, заключенные между двумя государствами практически со дня установления дипломатических отношений между ними в 1992 г. Этими договорами обеспечиваются правовые аспекты регулирования различных составляющих военно-технического сотрудничества, определяя цели и перспективы его развития.

Основными задачами армяно-российского военно-технического сотрудничества в настоящее время являются:

- продолжение работы по реализации подписанных документов в области создания на территории Республики Армения сертифицированных сервисных центров и совместных предприятий по ремонту и техническому обслуживанию вооружения и военной техники;
- активизация работы по созданию совместных предприятий и сертифицированных центров сервисного обслуживания вооружения и военной техники;
- продолжение работы по реализации трансфера технологий, а также поставок оборудования, материалов и комплектующих изделий;
- разработка Программы научно-производственного сотрудничества российских и армянских предприятий;
- обеспечение Вооруженных сил Республики Армения современным, высокоточным вооружением, техникой и боеприпасами.

INTERNATIONAL LAW

SOME ASPECTS OF THE LEGAL BASIS FOR THE ARMENIAN-RUSSIAN MILITARY-TECHNICAL COOPERATION

S. O. ABRAHAMYAN, 1st Class Counselor, Graduate Student, Diplomatic Academy, MFA, RF, Head, Contractual-Legal Unit, Defense Policy Department, MOD, RA

SUMMARY

The RA “National Security Strategy”-2007 highlights the critical importance of the military-technical cooperation with the RF for ensuring Armenia’s security in the military sphere. For the Armed Forces of the Republic of Armenia the military-technical cooperation is a means of maintaining high alert and, therefore, a safeguard for the national security.

This fact is reflected in numerous bilateral contracts, concluded between the two states almost from the very first day of establishing diplomatic relations between them in 1992. These contracts ensure the legal aspects of regulating various components of the military-technical cooperation, defining the aims and perspectives of its development.

Currently, the main concerns of the Armenian-Russian military-technical cooperation are the following:

- continuing activity in the implementation of the signed documents in the sphere of establishing certified service centers and joint enterprises on repairing and technical maintenance of the arms and military equipment on the territory of the Republic of Armenia;
- promoting works on the establishment of joint enterprises and certified centers for service maintenance of arms and military equipment;
- continuing activity in the realization of technology transfer, as well as delivery of the equipment, material and component parts;
- developing the Program on research and production cooperation between Russian and Armenian enterprises;
- providing the RA Armed Forces with modern high precision arms, equipment and armament.

ԲԱՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ՀՀ ԶՈՒ-Ի ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Ա. Ն. ԽԱՉԻԿՅԱՆ, Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ, ԵՊՀՀ դասախոս

1. ՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Զինված ուժերի արդիականացման հեռանկարային ծրագրերում, օրինակ՝ ՀՀ պաշտպանական համակարգի զարգացման վերաբերյալ Պաշտպանության նախարարի տեսլականում[1], մեծ տեղ է տրվում հասարակական համակարգում բանակի ունեցած դերին և նշանակությանը, զինծառայության հեղինակության ապահովման հիմնախնդիրների լուծմանը:

Դա հիմնականում պայմանավորված է երկու հանգամանքով: Առաջինը՝ ներկայումս տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունն է, որը ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությանը թելադրում է գերակա համարել պաշտպանական համակարգի հարաճուն զարգացումը, մասնավորապես, բանակի բարձր մակարդակի մարտունակության ապահովման և անձնակազմով համալրման մեխանիզմների կատարելագործումը: Երկրորդը՝ Հայաստանի մարդկային, ֆինանսատնտեսական, տարածքային ռեսուրսների սղության պայմաններում այդ խնդիրների օպտիմալ լուծումն է, որի համար անհրաժեշտ է գիտական մոտեցում՝ հիմնված տեսական և կիրառական համապարփակ հետազոտությունների վրա: Ընդսմին այդ ուսումնասիրությունը պետք է լինի համակողմանի, այսինքն՝ կատարվի տարբեր գիտությունների միջոցով (ժողովրդագրություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, ռազմագիտություն, սոցիոլոգիա, մասնավորապես՝ ռազմական սոցիոլոգիա, հոգեբանություն և այլն): Այսպես. ռազմական սոցիոլոգիան միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություն է, որն ուսումնասիրում է ԶՈՒ-ում՝ որպես փակ կառույցում, «և, միևնույն ժամանակ, որպես հասարակության անքակտելի հատվածում, ձևավորվող ռազմասոցիալական հարաբերություններն ու գործընթացները: … հետազոտում է խաղաղ և պատերազմական շրջաններում հասարա-

[1] Տես *Դ. Է. Տոնոյան,* ՀՀ պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը: «ՀԲ», 2018, հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/HB-2018-n4.pdf):

կության և բանակի միջև, ԶՈՒ-ում և դրանց կառուցվածքային օղակների, զինվորական կոլեկտիվների ու զինծառայողների միջև ծավալվող հարաբերությունների օրինաչափությունները և մեխանիզմները»[2]: Մասնավորապես՝ ռազմական սոցիոլոգիայի դիրքերից բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի դիտարկումը հնարավորություն է տալիս ուրվագծելու պետության պաշտպանունակության մեծացման, ԶՈՒ-ի համալրման, զորահավաքային ռեսուրսի խելամիտ կառավարման համար այնպիսի կարևոր հիմնախնդիրների լուծումները, ինչպիսիք են հասարակության շրջանում ԶՈՒ-ի և զինվորական ծառայության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը, բանակի մեծ հեղինակության ապահովումը, բանակի ու հասարակության միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորումը:

Գոյություն ունեն սոցիալական ինստիտուտների* մեծ թվով սահմանումներ: Օրինակ՝ Ստենֆորդի համալսարանի (ԱՄՆ) հանրագիտարանում սոցիալական ինստիտուտը սահմանվում է որպես «բարդ հասարակական իրենք իրենց վերարտադրող կազմակերպվածքներ, ինչպիսիք են՝ պետական կառավարման մարմինները, ընտանիքը, մարդկային լեզուները, համալսարանները, հիվանդանոցները, ձեռնարկատիրական կորպորացիաները և օրենսդրական համակարգը»[3]: Հայտնի ամերիկացի սոցիոլոգ Զոնաթան Թյոռները այն սահմանում է հետևյալ կերպ. «…դիրքորոշումների, դերերի, նորմերի, և արժեքների համալիր, որը բաշխված է կոնկրետ տեսակի հասարակական կառույցների միջև և որը ձևավորում է մարդկային գործունեության համեմատաբար կայուն մոդելներ՝ կյանքի պահպանման համար անհրաժեշտ ռեսուրսների արտադրության, մարդկանց վերարտադրության, ինչպես նաև տվյալ միջավայրում կենսունակ հասարակական կառույցների ստեղծման հիմնարար խնդիրների հաշվառմամբ»[4], ընդսմին դրանք «մարդկային գործունեության կայուն մոդելներ են»[5]:

Սոցիալական ինստիտուտների առաջացումը պայմանավորված է սոցիալական հարաբերությունների և սոցիալական գործունեության բնագավառում հասարակության կողմից հատուկ կարգավորումների օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Յուրաքանչյուր քիչ թե շատ ձևավորված ինստիտուտ

---

[2] Տես «Военный энциклопедический словарь», т. 2. М., 2001, с. 578:

* *Ինստիտուտ* (լատ. institutum՝ հաստատություն, հիմնարկություն) սոցիալական առումով հայերեն թարգմանվում է՝ 1. հաստատություն (որպես կառույց), 2. սահմանակարգ (որպես իրավական հասկացություն): Քանի որ հայերենի սոցիոլոգիական տերմինաբանության մեջ ավանդաբար օգտագործվում է «ինստիտուտ» ձևը այն պահպանվել է սույն հատվածում:- *Խմբ.:*

[3] Տես “Social Institutions”. “Stanford Encyclopedia of Philosophy” (https://plato.stanford.edu/entries/social-institutions/):

[4] *Jonathan Turner.* The Institutional Order. New York, 1997.

[5] Տես *Anthony Giddens.* The Constitution of Society. Outline of the Theory of Structuration. Cambridge, 1984:

ունի իր նպատակը, խմբային կամ հասարակական կարիքների շրջանը, որին ուղղված է նրա գործունեությունը: Սոցիալական ինստիտուտները միմյանցից տարբերվում են իրենց գործառութային առանձնահատկություններով[6]:

Հարկ է նշել, որ բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ, իր գործառութային և կառուցվածքային առանձնահատկություններով հարաբերականորեն փակ կառույց է, որի ուսումնասիրությունը օբյեկտիվորեն սահմանափակ է[7]: Միևնույն ժամանակ, մյուս սոցիալական ինստիտուտների հետ անմիջական կապի մեջ է և զարգանում է հասարակությանը համընթաց[8]: Հասարակության մեջ սոցիալական փոխհարաբերությունները, տարածված նորմերն ու արժեքները, վարքի մոդելները, ինչպես նաև հիմնախնդիրներն ու սոցիալական գործընթացները իրենց արտացոլումն են ստանում բանակում՝ մեծապես պայմանավորելով նրա մարտունակությունը, զինվորական կոլեկտիվներում առկա փոխհարաբերությունները[9]: Բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ անմիջականորեն կապված է հասարակական կառուցվածքի և սոցիալական շերտերի ձևավորման հետ: Բանակի ինստիտուտի միջոցով առանձնանում է սոցիալական այն շերտը, որի ներկայացուցիչներն իրականացնում են անվտանգության ապահովման գործառույթ՝ ձևավորելով յուրօրինակ սոցիալական հանրույթ:

Բանակ–հասարակություն փոխգործության կարևոր մեխանիզմներից է նրա համալրումը: Կախված պետության զինված ուժերի առջև դրված խնդիրների բնույթից ու ծավալից և նրա զարգացման մակարդակից, հասարակական և քաղաքական վիճակից, բնակչության ժողովրդագրական պատկերից, սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործոններից՝ տարբեր պետություններում կիրառվում են զինված ուժերի համալրման տարբեր սկզբունքներ և մեխանիզմներ: Բանակների մոտ 40 %-ը համալրվում է կամավոր (պայմանագրային) սկզբունքով, ավելի քան 50 %-ը՝ զորակոչով, և մոտ 7 %-ը՝ խառը սկզբունքով[10]:

Հայաստանում զինված ուժերի համալրումը կատարվում է և՛ պայմանագրային հիմունքներով, և՛ պարտադիր ծառայության ձևով (զորակոչով):

---

[6] Տես *А. И. Кравченко.* Социология: Общий курс. Учебное пособие для вузов. М., 2002, с. 271:

[7] Տես *Ա. Աթանեսյան, Ա. Շաքարյան, Վ. Ավետիքյան, Ա. Ավետիսյան, Դ. Հարությունյան,* Զինվորական առաջնորդություն: Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ե., 2012, էջ 25:

[8] Տես *А. И. Смирнов*. Взаимодействие общества и армии как социального института в современной России. Автореферат диссертации на соискание ученой степени доктора социологических наук. М., 2010:

[9] Տես *Ա. Աթանեսյան, Ա. Մկրտիչյան, Ա. Ավետիսյան, Ա. Սահակյան, Վ. Մարգարյան, Մ. Մախալկինա,* Բանակ և հասարակություն. ժամանակակից հիմնախնդիրներ: Ե., 2013, էջ 21:

[10] Տես *Մ. Ա. Սարգսյան,* Զինված ուժերի համալրման սկզբունքների համեմատական վերլուծություն: «ՀԲ», 2001, հմ. 3:

Որպես արդյունք՝ ՁՈՒ-ում և մյուս զորքերում ծառայության են անցնում բանակի և զինծառայության նկատմամբ տարբեր վերաբերմունք և տրամադրվածություն ունեցող անձնավորություններ: Զորացրվելուց հետո նրանք ներգրավվում են քաղաքացիական կյանքում՝ շրջանառության մեջ դնելով զինծառայության ընթացքում ձևավորված իրենց պատկերացումներն ու դիրքորոշումները:

Հարկ է նշել, որ ըստ պարբերաբար կատարվող սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների՝ ՀՀ ՁՈՒ-ի վարկանիշը վստահության 76 %-անոց մակարդակով հանդերձ պետական մարմինների համակարգում ամենաբարձրն է[11]: 2019 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարված հետազոտությունների արդյունքներով՝ բանակի նկատմամբ հայ հասարակության վստահության ցուցանիշը 91 % է[12]: Նշենք նաև, որ բանակի ինստիտուտի նկատմամբ մեծ վստահությունը բնորոշ է նաև այլ հասարակությունների: Այսպես. 2018 թ. վերջին «Փյու Ռեզերչ Սենտեր» *(Pew Research Center)* կազմակերպությունը կատարել է սոցիալական-պետական ինստիտուտների ուսումնասիրություն, որի շրջանակներում Արևմտյան Եվրոպայի ութ պետություններում և ԱՄՆ-ում հարցվածների մեծ մասը նշել է, որ վստահում է զինված ուժերին (Ֆրանսիայում հարցվածների՝ 84 %-ը, Գերմանիայում՝ 70 %-ը, Իսպանիայում՝ 66 %-ը, ԱՄՆ-ում՝ 80 %-ը)[13]:

Հարկ է նշել, որ հանրային վստահության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ.

- բանակի և զինծառայողների նկատմամբ հասարակության վերաբերմունքի ավանդույթները (տվյալ ժողովրդի պատմության ընթացքում ձևավորված մոդելները, ծեսերը, ձևերը), ազգային բանակի վերաբերյալ եղած պատմական հիշողությունը, բանակի և զինվորի սխրանքներն արտացոլող պատմամշակութային արժեքները,
- բանակի մարտունակության իրական վիճակը, ինչպես նաև ազգային բանակի մարտունակության վերաբերյալ հասարակության մեջ եղած պատկերացումները,
- ազգային բանակի հաղթանակները, միջազգային ռազմական գործողություններում և խաղաղապահական առաքելություններում ազգային բանակի մասնակցության արդյունավետությունը,

[11] Տես «Կովկասյան Բարոմետր (ԿԲ) 2015: Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2015 թ. նոյեմբերի դրությամբ)»: Ե., 15 ապրիլի 2016 (http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation.pdf):

[12] Տես “Public Opinion Survey: Residents of Armenia”. Center for Insights in Survey Research. The Armenian Sociological Association, September-October 2019 (https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf):

[13] Տես *Courtney Johnson.* Trust in the military exceeds trust in other institutions in Western Europe and U.S. “Pew Research Center”, 4 September 2018 (https://www.pewresearch.org/fact-tank/2018/09/04/trust-in-the-military-exceeds-trust-in-other-institutions-in-western-europe-and-u-s/15/):

- զինծառայողների և հասարակության այլ անդամների միջև շփման ամենօրյա փորձը, հորիզոնական կապերի ինտենսիվությունը[14]:

Բանակի կերպարանքի ձևավորման վրա ազդող գործոնների շարքում որոշ գիտնականներ վերը նշված բաղադրիչներին հավելում են նաև հետևյալ գործոնները:

- զինծառայողների, հատկապես՝ հրամկազմի մասին հասարակական ընկալումները, ներառյալ՝ զինվորականների մասնագիտական և բարոյահոգեբանական որակները, համազգեստը, հանրային վայրերում պահելաձևը,
- զինված ուժերում զինծառայության կազմակերպման որակը, կարգապահության, միասնականության, արդյունավետության և զարգացման ապահովումը,
- ռազմական տեխնիկայի մարտական հնարավորությունները, լուծման գործում դրա կիրառման արդյունավետությունը, մարտական խնդիրների, տեխնիկայի արդիականացումը և զորահանդեսներում ցուցադրումը[15]:

Հասարակական կարծիքի վրա զգալի ազդեցություն է գործում նաև բանակին զինծառայողների վերաբերմունքը: Ուստի նպատակահարմար է նաև ուսումնասիրել զորացրված անձանց վերաբերմունքը բանակի և զինծառայության նկատմամբ, քանի որ զորացրվելուց հետո նրանք կարող են ավելի անկաշկանդ և անկեղծ կերպով ներկայացնել իրենց մոտեցումները՝ չսահմանափակվելով պաշտոնական և ոչ պաշտոնական նորմատիվային սկզբունքներով:

Ժամանակակից ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունները կենտրոնանում են հիմնականում երկու օբյեկտի՝ բանակի՝ որպես սոցիալական առանձնահատուկ ինստիտուտի և զինվորական կոլեկտիվի՝ որպես սոցիալական խմբի վրա[16]:

2. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստորև կներկայացնենք ՀՀ պաշտպանության նախարարության «Դիտակետ» ծրագրի[17] շրջանակներում կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Տվյալ հետազոտությունը կատարվել է պարտադիր զինվորական ծառայությունից 2017 թ. և 2018 թ. արձակված անձանց շրջանում՝ զորացրվելուց 3 ամիս անց: Այս ժամանակահատվածն ընտրվել է այն նկատառումով, որ երիտասարդը զորացրվելուց անմիջապես հետո գտնվում է քաղաքացիական կյանքին ակտիվ վերաինտեգրման փուլում, զինծառա-

[14] Տես *Ա. Ի. Սմիրնով,* Նշ. աշխ., էջ 15:

[15] Տես *Ա. Ավետիսյան, Ա. Աթանեսյան,* Կինը և բանակը. հիմնախնդիրներ, մարտահրավերներ և հնարավորություններ: Կոլեկտիվ մենագրություն: Ե., 2016, էջ 66:

[16] *Ռազմական* սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու (Լ. Հարությունյանի խմբագրությամբ): Ե., Երևանի պետական համալսարանի հրատ., 2005, էջ 6:

[17] Տես «Զինվորական ծառայության պայմաններից զորացրվածների գոհունակության գնահատում: Սոցիոլոգիական հետազոտություն զորացրվածների հետ»: ՀՀ Պաշտպանության նախարարության «Դիտակետ» ծրագիր, «ԲՐԵՎԻՍ» ընկերություն: Ե., 2018:

յության վերաբերյալ իր պատկերացումների վերաիմաստավորման շրջանում, նրա դիրքորոշումներում դեռևս էական դեր են խաղում զգացմունքային գործոնները:

Հարցումը կատարվել է տնայցերի միջոցով, կիրառվել է համատարած ընտրանք: Քանակական հետազոտության շրջանակում պլանշետների միջոցով իրականացվել են «դեմ առ դեմ» հարցազրույցներ.

- ներգրավվել է հասանելի հարցվողների 80 %-ը,
- տվյալների ճշտությունը կազմել է α=95 %, սահմանային սխալի գործակիցը՝ Δ=±1,2 %,
- անկեղծության մակարդակը եղել է 74 %:

Հարցվողների կրթամակարդակը

Ռազմական սոցիոլոգիայի շրջանակներում ուսումնասիրվող հիմնախնդիրներից է զինվորականների սոցիալական նկարագիրը՝ նրանց սեռը, տարիքը, կրթությունը, էթնիկական պատկանելությունը, բնակության վայրը, լեզուն, տնտեսական վիճակը: Այս հատկությունների ընդհանրացումը հնա-

Հարցվողների բաշխումն ըստ կրթական մակարդակների (%-ով):



Գծապատկեր 1. Զորացրվածների կրթությունը ծառայության մեկնարկին

րավորություն է տալիս ոչ միայն պատկերացում կազմելու բանակում զինծառայողների տիպերի և նրանց ընդհանրությունների ու տարբերությունների մասին, որոնց հիմքով զինվորական կոլեկտիվում հաճախ ձևավորվում են տարբեր ոչ պաշտոնական ենթախմբեր, այլև կանխատեսելի ու նաև կառավարելի դարձնելու այդ ենթախմբերի միջև ձևավորվող հարաբերություններն ու հնարավոր գժտությունները[18]:

Ներկայացված գծապատկերից պարզ է դառնում, որ բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են հարցվողների մինչև 3 %-ը, մինչդեռ թերի միջնակարգ կրթություն ունեցողները ոչ ավելի, քան 13 %-ն են: Այսպիսով՝ զինվորական կոլեկտիվներում գերակշռում են միջնակարգ կրթութ-

[18] Տես *Н. Ф. Наумова, В. С. Сычева.* Общественное мнение о социальных проблемах армии России. «Социологические исследования», 1993, № 12:

յամբ զինծառայողները: Այս տվյալները հնարավորություն են տալիս նաև գնահատելու զինծառայության ընթացքում ռազմական գիտելիքը յուրացնելու զինծառայողի ունակության մասին:

Զինծառայության նկատմամբ տրամադրվածությունը

Բանակի և զինծառայության հասարակական վարկանիշն ու հեղինակությունը՝ որպես սոցիոլոգիական հետազոտության օբյեկտներ, դիտարկվում են թե՛ բանակի նկատմամբ հասարակության վերաբերմունքի, թե՛ իրենց զինծառայության նկատմամբ զինծառայողների վերաբերմունքի համատեքստում: Հայտնի է, որ բանակի և զինծառայության նկատմամբ զորակոչային տարիքի անձանց դրական տրամադրվածությունը կարող է հետագայում նպաստել զինծառայության արդյունավետությանը, զինվորական կոլեկտիվներում համագործակցային մթնոլորտի ձևավորմանը, մինչդեռ բացասականը կարող է խոչընդոտել ծառայության սահուն հարմարմանը, ինչպես նաև զինծառայողների միջև բարվոք հարաբերությունների կառուցմանը:



Գծապատկեր 2. Զինծառայության մեկնարկին բանակի և զինծառայության նկատմամբ տրամադրվածությունը

Այսպիսով՝ հարցման արդյունքները վկայում են, որ զորակոչվածների ճնշող մեծամասնությունը (84,8 %) զորակոչվելու պահին ծառայության նկատմամբ տրամադրված էր դրականորեն: Ընդ որում, զինծառայության մեկնելու ցանկության վրա ազդում է բնակավայրի տեսակը: Զինծառայություն անցնելու ավելի մեծ ձգտում ունեն գյուղական վայրերում բնակվող զորակոչիկները և առավել փոքր՝ Երևանում բնակվող զինծառայողները (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Բանակի և զինծառայության նկատմամբ տրամադրվածությունն ըստ բնակավայրերի և զորացրման տարիների

Հարցվողների զգալի մեծամասնությունը զորակոչի ժամանակ ցանկանում էր ծառայել բանակում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ զինծառայության մեկնելը գիտակցված և ընդունելի սոցիալական վարք է:

Բանակի նկատմամբ վերաբերմունքն հարազատի զինծառայության առնչությամբ:

Բանակի նկատմամբ վերաբերմունքի դրսևորումը պարզելու համար հարց է տրվել, թե «կցանկանայիք, որ ձեր բանակային տարիքի հարազատը գնար բանակ՝ ժամկետային զինծառայության»: Այլ հարցերի առնչությամբ արտահայտված դրական վերաբերմունքի ֆոնի վրա փոքր-ինչ մտահոգիչ կարելի է համարել այն, որ հարցվածների 64,3 %-ը չէր ցանկանա, որ իր բանակային տարիքի հարազատը անցներ ժամկետային զինծառայության (տես գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Զորացրվածների ընդհանրական կարծիքը զորակոչի տարիքի հարազատի զինծառայության մասին

Հարկ է նշել, որ բանակի նկատմամբ բարձր վստահությանը զուգահեռաբար պարտադիր զինվորական ծառայությունից որոշակի առումով խուսափելու, այն ոչ համարժեքորեն ընկալելու միտումը բնորոշ է նաև մեծ թվով այլ երկրների[19]:

Այստեղ նպատակահարմար է ներկայացնել նաև զորամասերից մեկի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրության տվյալները[20]: Հետազոտությունը կատարվել է այդ զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում, և ընդհանուր առմամբ ստացված տվյալները

[19] Տես, օրինակ, *Е. А. Котельникова.* Проблема отношения молодежи к службе в армии. «Гуманитарные научные исследования», 2013, № 6 (http://human.snauka.ru/2013/06/3235):

[20] Տես *Խ. Գասպարյան, Ա. Խաչիկյան,* ՀՀ ՊՆ N զորամասի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրություն (ՀՀ ՊՆ ԱՀՏԱ վարչության, «ԱՐԱՐ» հիմնադրամի, «ԲՐԵՎԻՍ» հետազոտական ընկերության և «ԻՆԹՐԱ» հոգեկան առողջության կենտրոնի համագործակցությամբ): Ե., 2019:

մոտ են գծապատկեր 4-ում բերված տվյալներին՝ փոքր-ինչ գերազանցելով դրանք:

Հետևաբար **բանակի և զինծառայության նկատմամբ զինծառայողների վերաբերմունքը զորացրվելուց հետո ավելի դրական է, քան զինծառայության ընթացքում:** Զինծառայության մեջ գտնվող և զորացրված երիտասարդների այս ցուցանիշը հիմնավոր և բնականոն է, քանի որ պարտադիր զինծառայության երկամյա ժամկետը, պարտականություններով պայմանավորված սահմանափակումները, ծանրաբեռնված առօրյան ու հարմարավետության գոտում չլինելը բացատրում են այս տարբերությունը:

Ապրիլյան պատերազմում մեր բանակը հաղթե՞լ է, թե՞ պարտվել (%-ով):



Գծապատկեր 5. Զինծառայողների գնահատականը ապրիլյան պատերազմի վերաբերյալ

Վերաբերմունքը՝ ապրիլյան պատերազմի արդյունքի նկատմամբ

Ապրիլյան պատերազմի ռազմական ելքի վերաբերյալ հարցին զորացրվածների գերակշիռ մեծամասնությունը՝ մոտ 80 %-ը, համարում է, որ մեր բանակը հաղթել է (գծապատկեր 5), և **ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 90 %-ը, կարծում է, որ մեր բանակը պատրաստ է հակառակորդի հետ նոր դիմակայությանը (տես գծապատկեր 6)**:

Ի՞նչ եք կարծում, պատերազմի դեպքում հայկական զինված ուժերը պատրա՞ստ են արդյոք դիմակայելու ադրբեջանական բանակին (%-ով):



Գծապատկեր 6. Զինծառայողների գնահատականը բանակի պատրաստվածության վերաբերյալ

Հատկանշական է, որ նույնիսկ նրանք, ովքեր չեն համարում, որ մեր բանակը հաղթել է, մեծ մասամբ (77 %) կարծում են, որ այժմ մեր բանակը պատրաստ է դիմակայության, և միայն 9 %-ն է կարծում, որ բանակը պատրաստ չէ դիմակայելու:

Վերաբերմունքը պայմանագրային զինծառայությանը ըստ հարցվածների բնակության վայրի տիպի և բարեկեցության աստիճանի

Բանակի սոցիալական ինստիտուտի հեղինակության, սպայական և պայմանագրային զինծառայության գրավչության, թվակազմով համալրման մեխանիզմների արդյունավետության տեսանկյունից կարևոր խնդիրներից է պայմանագրային զինծառայության գրավչության ապահովումը: Զինծառայության նկատմամբ վերաբերմունքի առանցքային բաղադրիչներն են իրենց զինվորական մասնագիտության, զինծառայության արդյունավետության, պատվաբերության, վտանգավորության, այլ մասնագիտությունների հետ մրցունակ լինելու մասին զինվորականների կարծիքները: Այս առումով էական է նաև զինծառայողների սոցիալական ապահովվածության մակարդակը, իրենց և ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանվածությունը:



Գծապատկեր 7. Վերաբերմունքը պայմանագրային զինծառայությանը ըստ բնակավայրի տիպի

Հարցման արդյունքներից բխում են հետևյալ ընդհանուր եզրակացությունները.

- թե՛ սպայական, թե՛ պայմանագրային ծառայության անցնելու ցանկություն հայտնած փոքրաթիվ զինծառայողները առավելապես ներկայացնում են գյուղական համայնքները, ավելի սակավ՝ քաղաքները և շատ քիչ՝ Երևանը:
- որքան ցածր է հարցվողի բարեկեցության աստիճանը, այնքան մեծ է պայմանագրային ծառայության անցնելու ցանկությունը:

Պետք է նշել, որ պայմանագրային կամ սպայական ծառայության ցանկանում է անցնել հարցվածների ընդամենը 3 %-ը (Երևանում՝ 1,5, իսկ այլ բնակավայրերում՝ 4 %-ը): Տվյալ դեպքում էական նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական գործոնները, ուստի բանակի հեղինակության ու գրավչության ապահովման գործում կարևոր տեղ պետք է հատկացվի սպայական և պայմանագրային զինծառայության սոցիալ-տնտեսական ապահովման հարցերին:



Գծապատկեր 8. Վերաբերմունքը պայմանագրային զինծառայությանը՝ ըստ բարեկեցության աստիճանի

Այսպիսով՝ զորակոչված և զինծառայություն անցնող անձը ծառայության ընթացքում մասնակցում է բանակի առօրյային, զինվորական կոլեկտիվի գործունեությանը, ծառայողական և մարտական խնդիրների կատարմանը, յուրացնում է նոր արժեքներ և սկզբունքներ: Վերադառնալով իր սոցիալական միջավայրը (ընտանիք, բակ, դասընկերներ, հարազատներ և այլն)՝ նա իր օբյեկտիվ փորձի և դրանով մեծապես պայմանավորված սուբյեկտիվ անձնական ապրումների հիման վրա որոշակիորեն ազդում է հասարակության մեջ բանակի ու զինծառայության վերաբերյալ պատկերացումների և գնահատականների ձևավորման վրա:

Կատարված հետազոտության արդյունքներով կարող ենք անել հետևյալ եզրակացությունը. զորակոչիկ–զինծառայող–զորացրված սոցիալական դերերի կատարման փուլում շատ կարևոր են բանակին ու զինծառայությանը վերաբերող տեղեկատվական հոսքերը, քանի որ բանակի վերաբերյալ տեղեկատվությունն ու վերաբերմունքը էական ազդեցություն են ունենում զորակոչիկի և նրա հետագա ծառայության վրա: Ընդսմին երբ տվյալ անձնավորությունը գտնվում է «զինծառայող» սոցիալական կարգավիճակում, նրա վերաբերմունքը ենթարկվում է կերպափոխման՝ գերազանցապես զգացմունքների ներգործության հետևանքով և զինծառայությունից դուրս գտնվող անձանց հետ հարաբերությունների միջոցով ազդեցություն գործում հասարակական խմբերի համապատասխան ընկալումների վրա: Դրանով իսկ զինծառայողը զորացրվելուց հետո ըստ էության դառնում է բանակի մասին «հավաստի» տեղեկությունների աղբյուր (քանի որ դրանք երանգավորվում են նրա հուզական ընկալումների ազդեցությամբ) և որոշակիորեն ներգործում է հանրային քննարկումների վրա:

Տեսական և հետազոտական արդյունքների համադրմամբ կարելի է հանգել բանակի և զինծառայության հեղինակության հիմնախնդիրների վերաբերյալ հետևյալ պնդումներին.

1. հասարակության մեջ բանակի վերաբերյալ ձևավորված դրական կար-

ծիքը ազդեցություն է ունենում զորակոչված երիտասարդի զինծառայության դրական ընթացքի և հետագա դրական վերաբերմունքի վրա,

2. զորակոչվողների մեծ մասին բնորոշ է զինծառայության մեկնելու գիտակցված և ընդունելի սոցիալական վարք,
3. զինծառայողների շրջանում առկա է զինծառայության նկատմամբ հիմնականում դրական տրամադրվածություն և վերաբերմունք, ինչը սոցիալական փոխազդեցությունների և տեղեկատվական հոսքերի շնորհիվ նպաստում է զինծառայության նկատմամբ ավելի դրական հասարակական վերաբերմունքի ձևավորմանը,
4. առկա են պայմանագրային զինծառայության և սպայական ծառայության պրոֆեսիոնալ գրավչությանն ու հեղինակության մեծացմանն ուղղված մարտահրավերներ, որոնք կարող են զգալի կերպով ազդել նաև ԶՈՒ-ի համալրման արդյունավետության վրա,
5. առկա է բանակի մարտունակության նկատմամբ զինծառայողների մեծ վստահություն:

Բանակը՝ որպես սոցիալական ինստիտուտ, լինելով հասարակության այլ ինստիտուտների հետ փոխկապված, առավել արդյունավետ կերպով կարող է գործառել, եթե վայելում է հասարակության վստահությունն ու հեղինակությունը: Բանակին և զինծառայությանը վերաբերող բազմաթիվ խնդիրների լուծումն զգալի չափով կախված է բանակի և զինծառայության նկատմամբ վերաբերմունքից:

ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ

АРМИЯ КАК СОЦИАЛЬНЫЙ ИНСТИТУТ: ПРОБЛЕМЫ ОТНОШЕНИЯ ОБЩЕСТВА К ВС РА И ВОЕННОЙ СЛУЖБЕ И ОБЕСПЕЧЕНИЯ ИХ ПРЕСТИЖА

А. Н. ХАЧИКЯН, аспирант факультета социологии,
Ереванский государственный университет

РЕЗЮМЕ

Для обеспечения обороноспособности государства и боевого потенциала его ВС важное значение имеет отношение общества к оборонным проблемам и, в первую очередь, к Вооруженным силам. Общеизвестно, что на формирование общественного мнения о собственных Вооруженных силах значительное воздействие оказывают потоки информации, распространяемой завершившими обязательную срочную службу лицами.

В связи с этим в статье рассматриваются результаты социологического исследования, проведенного в рамках программы Министер-

ства обороны РА «Дитакет» (Точка зрения). В исследовании, проведенном при участии автора, был использован метод сплошной выборки среди лиц, завершивших обязательную службу в 2017 и 2018 гг., спустя 3 месяца после их увольнения. В исследование были вовлечены 80 % от общего числа отслуживших за эти годы лиц, точность полученных данных составляет α=95 %, ошибка выборки – Δ=±1,2 %, а уровень откровенности – 74 %.

Путем сопоставления теоретических и исследовательских результатов были выработаны следующие общие выводы: сформированное в обществе положительное мнение об армии оказывает влияние на благоприятное прохождение службы срочниками и дальнейшее укрепление их положительного отношения к ней; большей части призывников присуще осознанное и приемлемое социальное поведение при вступлении на военную службу; среди военнослужащих существует в основном положительное отношение к армии и – что способствует формированию более положительного отношения во всем обществе – существует твердая уверенность в боеспособности армии. В то же время есть необходимость в повышении престижности и привлекательности военной службы, что связано с решением определенных социально-экономических проблем, касающихся военнослужащих и военной службы.

MILITARY SOCIOLOGY

ARMY AS A SOCIAL INSTITUTION: PROBLEMS OF SOCIETY'S ATTITUDE TOWARDS THE RA ARMED FORCES AND MILITARY SERVICE, AND ENHANCING THEIR PRESTIGE

A. N. KHACHIKYAN, Postgraduate Student, Department of Sociology, Yerevan State University

SUMMARY

The society's attitude towards the defense problems and, above all, to the Armed Forces is of great importance in order to ensure the state's defense capability and the combat potential of its Armed Forces. It is common knowledge that the formation of public opinion about their own Armed Forces is significantly affected by the flows of information distributed by those who have completed compulsory military service.

In this regard, the article discusses the results of the sociological study conducted within the program Ditaket (Point of View) of the RA Ministry of Defense. In the study conducted with the author's participation,

continuous sampling method was used among people who completed compulsory service in 2017 and 2018, 3 months after their discharge.

The study involved 80 % of the total number of people who served over these years, the accuracy of the data is α = 95 %, the sampling error is Δ = ±1,2 %, and the frankness level – 74 %.

Through collation of the theoretical and research results, the following general conclusions have been worked out: the positive opinion about the army formed in the society influences the positive military service by conscripts and the further developing of their positive attitude towards it; most of the recruits have a conscious and acceptable social behavior when joining the army; among the military there is basically a positive attitude towards the army and – which facilitates the formation of a more positive attitude in the whole society – there is a firm confidence in the combat effectiveness of the army. At the same time, there is a need to enhance the prestige and attractiveness of military service, which is connected with the solution of certain socio-economic issues related to military personnel and service.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ – ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ

Վերջին տասնամյակներում զինված պայքարի միջոցների հնարավորությունների կտրուկ աճումը և, համապատասխանաբար, պատերազմների վարման եղանակների արմատական փոփոխությունը[1] հանգեցրին այն բանին, որ ըստ էության վերացան «ռազմաճակատ», «թիկունք», «մարտիկ», «խաղաղ բնակչություն» հասկացությունները: Յուրաքանչյուր պետության ցանկացած շրջանի բնակչություն կարող է ենթարկվել հակառակորդի զանգվածեղ ավիահրթիռային հարվածների: Այս պրոբլեմն առավել կարևոր է փոքր տարածք ունեցող, ուստի և հարվածների համար ավելի մեծ հասանելիությամբ պետությունների համար: Նման պայմաններում հույժ կարևոր է դառնում բարվոք ու կայուն բարոյահոգեբանական վիճակի (ԲՀՎ) ապահովումը ոչ միայն զինված ուժերում, այլև ամբողջ բնակչության շրջանում:

Ներկայումս գոյություն ունեն ԲՀՎ 20-ից ավելի սահմանումներ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում ԲՀՎ ասելով հաճախ նկատի ունեն մարդու կամ խմբի մտավոր և հոգևոր վստահության մակարդակը, լավատեսության ոգին: Անգլիացի հոգեբան Ն. Բալչինը ԲՀՎ-ն բնութագրում է որպես «բանականության և ոգու վիճակ, որը պայմանավորում է այս կամ այն իրավիճակում նրա չպարտադրած վարքը»[2]:

Ռուսաստանցի մասնագետները ԲՀՎ-ն սահմանում են որպես տվյալ պահին և կոնկրետ իրադրությունում մարդու հոգեկանի կամ կոլեկտիվի հոգեբանության վիճակ, որը դրսևորվում է ակտիվ գործողությունների ձևով, ինչպես նաև այդ գործողություններին պատրաստության ձևով[3]:

---

[1] Տես, օրինակ, *Գ. Վ. Տավարածյան*, Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմական դիտարկում: «ՀԲ», 2019, հմ. 1 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/armenianarmy_2019_n1. pdf):

[2] Տես *С. Н. Воронцов.* Морально-психологическое состояние военнослужащих США и Великобритании в ходе военной операции в Ираке. «Институт Ближнего Востока», 26 января 2005 (http://www.iimes.ru/?p=3452):

[3] Տես *И. А. Хациева, А. В. Шестериков*. Морально-психологическое состояние

Թեև վերը ներկայացված սահմանումներից և ոչ մեկը սխալ չէ, այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ դրանք բոլորն էլ վերաբերում են անդամների սահմանափակ թվով կոլեկտիվներին, առաջին հերթին՝ զինված ուժերի անձնակազմին, ուստի հակված ենք բնակչության ԲՀՎ-ի համար առաջարկելու հետևյալ սահմանումը. **բնակչության ԲՀՎ-ն** տվյալ ժամանակահատվածում և կոնկրետ պայմաններում յուրաքանչյուր բնակչի հոգեկանի կամ ամբողջ հասարակության հոգեբանական այն վիճակն է, որն արտացոլում է հասարակության բարոյական հասունության, համախմբվածության, բարոյահոգեբանական պատրաստության, տեղի ունեցող զարգացումների ու անելիքների գիտակցման մակարդակը և պայմանավորում է դժվարությունները և զրկանքները հաղթահարելու սահմանային հնարավորությունների դրսևորման աստիճանը:

Ընդհանուր առմամբ ԲՀՎ-ն բաղկացած է ակտիվ վարքի շարժառիթավորման*, հուզական-կամային**, օպերացիոնալ*** բաղադրիչներից[4]: Քանի որ նշված բաղադրիչները սերտորեն փոխկապված են, ուստի դրանցից նույնիսկ մեկի ակնհայտորեն ոչ բավարար ձևավորվածությունը կարող է կտրուկ կերպով իջեցնել ԲՀՎ մակարդակը:

Առանձնահատուկ պայմանները, որոնցում մարդը կարող է հայտնվել, որպես կանոն, առաջացնում են հոգեկան լարվածություն (վախ, տագնապ, հուզական գրգռվածություն և այլն): Այդ լարվածությունը որոշ դեպքերում կարող է հանգեցնել ներքին էներգետիկ ռեսուրսների մոբիլիզացման, այլ դեպքերում՝ աշխատունակության անկման, իսկ շատ դեպքերում էլ՝ ընդհանրապես գործունեության խաթարման: Այդ տարաբնույթ դրսևորումները պայմանավորված են տվյալ անձնավորության անհատական-հոգեբանական առանձնահատկություններով, տեղի ունեցող իրադարձությունների բնույթով և դրանց վտանգավորության աստիճանի մասին տվյալ անձնավորության իրազեկվածությամբ:

Բոլոր բարդ իրավիճակներում կարևոր դեր են խաղում մարդու բարոյական կոփվածությունն ու հոգեվիճակը: Հենց դրանք են պայմանավորում նրա պատրաստությունը ցանկացած կրիտիկական իրավիճակում գիտակցված ու վստահ գործողությունների կատարմանը:

личного состава как проявление морального фактора (http://elib.bsu.by/bitstream/123456789/55362/1/1.%20МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЕ%20СОСТОЯНИЕ%20ЛИЧНОГО%20СОСТАВА%20.pdf):

* Ակտիվ վարքի շարժառիթավորում ասելով մենք նկատի ունենք բարոյական իդեալների, սկզբունքների, նորմերի, աշխարհայացքային դիրքորոշումների, պահանջմունքների, հետաքրքրությունների, հայացքների, համոզմունքների, տրամադրությունների համախումբը:

** Հուզական-կամային բաղադրիչը արտահայտում է իրադրության ստրես-գործոնների նկատմամբ համապատասխան հակազդում դրսևորելու ունակություն, ինքնատիրապետման պահպանումը:

*** Օպերացիոնալ բաղադրիչը առաջադրված խնդիրների և դրանց կատարման եղանակների մասին իմացությունն է:

[4] Տես *С. В. Гончаров.* Управление морально-психологическим обеспечением боевых действий: вопросы теории и практики. «Военная мысль», 2004, № 2:

Պատերազմի հետևանքով առաջացած ավերածությունները բացասաբար են ազդում մարդու հոգեկանի վրա՝ առաջացնելով մեծ հուզական լարվածություն, որը տվյալ դեպքում կարող է հանգեցնել մարդու բնականոն մտածելակերպի խանգարմանը կամ ինքնավերահսկման կարողության նվազմանը: Այդ ամենն իր հերթին կարող է դառնալ իմպուլսիվ բնույթի չարդարացված և անկանխատեսելի գործողությունների պատճառ:

Մարդու հոգեկան գործունեության հուզական և մտավոր կենսընթացների փոխադարձ կապը արտահայտվում է Յորկիս-Դոդսոնի օրենքով, որը նկարագրվում է հետևյալ գրաֆիկով (տես նկ. 1).



Նկ. 1. Յորկիս-Դոդսոնի օրենքը[5]

Վախի ազդեցությամբ հոգեբանորեն չպատրաստված, չկոփված անձինք ձգտում են փախչելու վտանգավոր վայրից, մյուսները ապրում են հոգեբանական ցնցակաթված (շոկ), որն ուղեկցվում է մկանների ընդարմացությամբ[6]: Վերջին դեպքում խանգարվում է բնականոն կերպով մտածելու կամ զգացումները վերահսկելու կարողությունը, նվազում է կամքի ուժը:

Հանկարծակիորեն ծագած սպառնալիքը, պատերազմի վտանգի և դրա հնարավոր հետևանքների, ստեղծված բարդ պայմաններում վարքի կանոնների չիմացությունը և համապատասխան վարքի ռազմավարություն չունենալը, ինչպես նաև պատերազմի հետևանքով առաջացած աղետների դեմ պայքարի փորձի ու հմտությունների պակասը, բարոյահոգեբանական պատրաստմանն ուղղված աշխատանքների անտեսումը կարող են առաջ բերել հոգեբանական անկայունություն, անկազմակերպվածություն, ասոցիալ վարք, խուճապային տրամադրություններ, հետևաբար և դառնալ ցածր մակարդակի ԲՀՎ պատճառ:

Վերը շարադրվածը միանշանակ կերպով ապացուցում է, որ պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր բաղադրիչներից է մարդկա-

[5] Տես «Большая психологическая энциклопедия». М., 2007, с. 164:

[6] Տես *Ն. Ն. Գոլովին*, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1-2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2011/10/1997-1-2.pdf):

յին ռեսուրսների պատրաստության համապատասխան մակարդակի ապահովումը, որը համապետական խնդիր է:

Այս համատեքստում կարևոր ենք համարում մեջբերել Սուն Ցզիի այն միտքը, թե առանց մանրակրկիտ պատրաստման հնարավոր չէ պատերազմում հասնել հաղթանակի: Ուստի մինչ պատերազմն սկսելը զորավարը պետք է վերլուծի պատերազմի հինգ գլխավոր տարրերը: Այդ հինգ տարրերից մեկը նա անվանում է «Ուղի»*, այսինքն՝ հասարակության վիճակը, ժողովրդի վերաբերմունքը իշխանությանը և հնարավոր ռազմական գործողություններին[7]:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ցանկացած պետության կայունությունը պայմանավորված է ոչ թե նրա պատժիչ համակարգի արդյունավետությամբ, այլ տնտեսական հիմքերի հուսալիությամբ և բնակչության հոգևոր ուժերով:

Բնակչության հոգևոր ուժեր ասելով մենք նկատի ունենք նրա բարձր մակարդակի գիտակցականության, բարոյականության և գաղափարական-քաղաքական հասուն մտքի ընդհանրությամբ պայմանավորված այն յուրահատուկ հոգեբանական գոյացությունը, որը դրսևորվում է միասնական նպատակային վարքի, անձնուրացության, հանուն համազգային գաղափարների զոհողությանը պատրաստակամության ձևով:

Հայտնի է, որ զինված ուժերի մարտական պատրաստությունն ու մարտունակությունը պայմանավորված են նյութական ու հոգևոր գործոններով, ընդսմին ռազմական գործում առաջնությունը տրվում է մարդկային, հոգևոր գործոնին: Մարդկային գործոնը կարելի է սահմանել որպես «մարդու, պետության բնակչության և նրա զինված ուժերի հոգևոր հնարավորությունները: Այն իրացվում է որպես բարոյահոգեբանական գործոն և հաղթանակի գլխավոր աղբյուրներից մեկն է, ...»[8]: Այսպիսով՝ բարոյահոգեբանական գործոնը ժողովրդի հոգևոր-բարոյական ուժերի և զորքերի (ուժերի) բարոյահոգեբանական կարողությունների իրացումն է՝ նպատակաուղղված պատերազմում հաղթանակի ապահովմանը[9]:

Ի մի բերելով վերը ասվածները՝ կարող ենք բնակչության ԲՀՎ-ն բնորոշել որպես մի ամբողջական բարոյահոգեբանական երևույթ, որը հոգևոր, բարոյական, բարոյահոգեբանական, քաղաքական, ազգային, սոցիալական, տնտեսական, կրթական և այլ սոցիալ-հոգեբանական գործոնների փոխգործության և միասնության ածանցյալն է, գործոնների, որոնք որոշակի բարոյահոգեբանական կարծրատիպերի ձևով արտացոլվելով հոգեկանում, ուղղորդում են բնակչության գործունեությունն ու վարքը:

---

* Սուն Ցզին առանձնացնում է պատերազմի հետևյալ տարրերը. *Երկինքը* (ժամանակը), *Երկիրը* (տեղանքը և տարվա ժամանակը), *Զորավարը* (խելամիտ ռիսկի դիմելու զորքերի ղեկավարի հակումը), *Օրենքը* (կարգապահությունը, զինվորների և սպաների պատրաստությունը) և *Ուղին:*

[7] Տես *Սուն Ցզին*, Ռազմավարություն. դասական և ժամանակակից: Ե., 2013, էջ 382:

[8] Տես *Ի. Ա. Խացիևա, Ա. Վ. Շեստերիկով,* Նշ. աշխ.:

[9] Տես նույն տեղում:

Նշենք, որ հասարակության հենց բարձր մակարդակի ԲՀՎ-ն է, որ հնարավորություն է ընձեռում պատերազմի ժամանակ դիմանալու մեծ լարվածությունների, հաղթահարելու դժվարությունները, համակերպվելու կորուստներին և նույնիսկ պարտություններին, չկորցնելու հաստատակամությունն ու հաղթանակի կամքը:

Փաստորեն ԲՀՎ-ն առանձին մարդու կամ բնակչության վրա ներազդող բոլոր սոցիալ-հոգևոր գործոնների գումարային ազդեցության դրսևորումն է: Ցանկալի դրսևորվածություն ունենալու համար պետք է թե՛ խաղաղ, թե՛ պատերազմի ժամանակ կատարվեն բնակչության բարոյահոգեբանական ապահովման աշխատանքներ:

Բնակչության հետ տարվող բարոյահոգեբանական աշխատանքը՝ որպես պաշտպանությանը պետության պատրաստման հիմնական բաղադրիչներից մեկը, ունի իր կարևոր սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները, որոնց իմացությունն անհրաժեշտ է բարոյահոգեբանական ապահովման (ԲՀԱ) հարցերով զբաղվող բոլոր սպաներին ու քաղաքացիական անձանց: Ուստի մենք կփորձենք ընդհանուր տեսքով ստորև ներկայացնել դրա սկզբունքները, մեթոդներն ու եղանակները, կառուցվածքն ու կազմակերպական ձևերը:

Բնակչության ԲՀԱ-ն ըստ նպատակների և միասնական մտահղացման ու պլանի պետական և զինվորական կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ձեռնարկած փոխհամաձայնեցված և փոխկապված կազմակերպական միջոցառումների համալիր է՝ ուղղված բնակչության այնպիսի մակարդակի բարոյահոգեբանական վիճակի և այլ անհրաժեշտ հատկությունների ձևավորմանը, պահպանմանն ու վերականգնմանը, որոնց շնորհիվ հնարավոր է լինում իրադրության բարդ պայմաններում ապահովել զորահավաքային միջոցառումներին ու ռազմական գործողություններին բնակչության բարձր աստիճանի պատրաստությունը և հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության նկատմամբ հոգեբանական կայունությունը*:

Համալիր միջոցառումների շարքում կարելի է նշել, օրինակ, ստեղծված իրավիճակի հավանական զարգացումների վերաբերյալ բնակչության օպերատիվ տեղեկացումը, ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ վստահության դաշտի ձևավորմանը նպաստող տեղեկութահոգեբանական ներգործությունը, սոցիալ-հոգեբանական աշխատանքը, որի շնորհիվ նույնիսկ մեծ կորուստների դեպքում կապահովվեն հակառակորդի ագրեսիայի հետմղման գործողությունները շարունակելու անկոտրում կամքի դրսևորումը, զոհվածների հերոսացումը և նրանց ընտանիքներին ոչ ձևական բնույթի օգնության ցուցաբերումը, թաղման արարողությունների պատշաճ մակարդակով կազմակերպումը և այլն:

Բնակչության ԲՀԱ-ն ձեռնարկվում է խաղաղ ժամանակ, սպառնալից շրջանում, ռազմական գործողությունների ընթացքում, ինչպես նաև պատերազմից հետո:

* Սահմանումը մերն է, քանի որ մասնագիտական գրականության մեջ (և՛ հայրենական, և՛ օտարալեզու) բնակչության ԲՀԱ-ի որևէ սահմանում չենք հանդիպել:

Դրա նպատակն է բարձր մակարդակի ԲՀՎ, կազմակերպվածության և աշխատանքային կարգապահության, ինչպես նաև հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության նկատմամբ հոգեբանական կայունության ապահովումը, հասարակական կարգուկանոնի պահպանումը, քաոսային դրսևորումների կանխումը:

ԲՀԱ-ի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝

- պետության ռազմաքաղաքական ղեկավարության վարած քաղաքականության նպատակների, խնդիրների պարզաբանումը և հասարակության համապատասխան դիրքորոշման ձևավորումը,
- բնակչության սոցիալական խնդիրների լուծումը,
- պատերազմի արհավիրքներին դիմակայելու պատրաստակամության սերմանումը,
- զինված ուժերի բարի համբավի և դրանց նկատմամբ հպարտության զգացումի արմատավորումը,
- զինապարտների մեջ հայրենասիրության, արիության և հերոսականության, ինքնազոհության պատրաստակամության խթանումը,
- բնակչության հայրենասիրական և ռազմահայրենասիրական, գաղափարական դաստիարակությունը,
- սպառնալից շրջանի և պատերազմի պահանջներին համապատասխան վարքի ռազմավարության մշակումը և արմատավորումը,
- բնակչության հոգեբանական պատրաստումը, ինչը ենթադրում է.
  - ստրեսորների նկատմամբ վարժեցնովի հակազդման ձևավորումը,
  - տոկունության, դժվարություններն արհաբար հաղթահարելու ունակության ձևավորումը,
- բնակչության մշակութային-գեղարվեստական սպասարկման հատուկ ծրագրերի մշակումն ու իրագործումը,
- հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության նկատմամբ քննադատական վերաբերմունքի և մերժողականության սերմանումը,

սպառնալից շրջանում՝

- ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի վերլուծությունը և գնահատումը,
- ռազմաքաղաքական ղեկավարության վարած քաղաքականության նպատակների և խնդիրների հստակ ու համոզիչ պարզաբանումը և հիմնավորումը, դրանց արդարացվածության նկատմամբ վստահության արմատավորումը,
- սպառնալից շրջանի և պատերազմի պահանջներին համապատասխան՝ բնակչության մտածելակերպի վերափոխումը,
- հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունը նվազեցնող կամ կասեցնող միջոցառումների իրականացումը,
- գիտնականների և մշակութային ու քաղաքական գործիչների ներ-

գրավմամբ, ԶԼՄ-ների բոլոր հնարավորությունների օգտագործմամբ ակտիվ քարոզչական աշխատանքի կատարումը՝ նպատակաուղղված բնակչության հոգեբանական կայունության ամրապնդմանը,

- բնակչության ԲՀՎ-ի վրա տեղեկատվական իրադրության ազդեցության աստիճանի գնահատումը, հավանական զարգացումների կանխատեսումը, ԲՀԱ-ի վաղօրոք մշակված ռազմավարության շտկումը և ըստ մշտազննման արդյունքների ԲՀԱ-ի աշխատանքներում ճշգրտումների պարբերական կատարումը,

ռազմական գործողությունների ժամանակ՝

- զինված ուժերի և մյուս զորքերի վարած ռազմական գործողությունների նկատմամբ բնակչության վստահության ձևավորումը,
- ռազմական գործողությունների շրջանում տիրող սոցիալ-քաղաքական ու բարոյահոգեբանական իրադրության ուսումնասիրությունը, տվյալների ընդհանրացումը, բնակչության ԲՀՎ-ի վրա դրանց ազդեցության աստիճանի գնահատումը և հնարավոր զարգացումների կանխատեսումը,
- ռազմական գործողությունների պատճառների կամ դրանցով պայմանավորված վտանգների պարզաբանումը՝ բնակչության հոգեբանական կայունության ամրապնդման նպատակով,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ցուցումների անվերապահ կատարման անհրաժեշտության գիտակցման ձևավորումը,
- պետության ռազմաքաղաքական ղեկավարության որոշումների մասին բնակչության իրազեկումը՝ հոգեբանական օպերացիաների տեսանկյունից տեղեկատվական դաշտի վերահսկմամբ,
- ռազմական գործողությունների հետևանքով առաջացած վտանգների դեպքում բնակչության կենսագործունեության համար բարենպաստ սոցիալական և իրավական պայմանների ապահովումը,
- բնակչության բարձր մակարդակի աշխատանքային կարգապահության, կազմակերպվածության ապահովումը և իրավակարգի պահպանումը,
- ռազմական գործողությունների ժամանակ զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների, հակառակորդի գործողություններից տուժածների և սոցիալապես խոցելի խավերի սոցիալ-տնտեսական ապահովումը,
- բնակչության շրջանում բարենպաստ սոցիալ-քաղաքական կլիմայի ստեղծումը՝ պետական կառավարման մարմինների, հասարակական միավորումների սուբյեկտների, հոգևորականների հետ փոխգործության կազմակերպմամբ,
- իրադրության հոգեխոցիչ ներգործության հետևանքները հաղթահարելու համար հոգեբանական վերականգնման ու շտկման արդյունավետորեն բանող համակարգի գործարկումը և բնակչությանը հոգեբանական օգնության ցուցաբերումը,

- արտակարգ իրավիճակներում ռադիո- և հեռուստահաղորդումների, հրատարակչությունների, մշակութաժամանցային հաստատությունների անխափան նպատակային աշխատանքի կազմակերպումը, բնակչության ապահովումը թերթերով և այլ տպագիր նյութերով,
- Սփյուռքի համախմբումը և նրա օգնության համադասումը:

Ընդհանուր առմամբ ԲՀԱ-ի կառուցվածքը և բովանդակությունը ունեն բարդ տրամաբանական կազմություն, որի առանձին բաժինների ու հատվածների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի սիներգետիկ արդյունք:



Նկ. 2. Բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի ամենօրյա կենսագործունեության պայմաններում կատարվող ԲՀԱ-ի սկզբունքային մոդելը[10]

Բնակչության բարոյահոգեբանական ապահովումը պետք է իրագործվի նպատակաուղղված կերպով ու մշտապես, ընդսմին պետք է պարբերաբար ենթարկվի որոշակի շտկումների՝ ձևավորվող իրադրության հաշվառմամբ:

[10] Տես *В. Ф. Кулаков.* Военная психология и педагогика. М., 1988, с. 303:

Այն ներառում է տեղեկատվական, հոգեբանական, սոցիալական, մշակութաժամանցային, հակառակորդի բացասական տեղեկությահոգեբանական ներգործությունից բնակչության պաշտպանությանն ուղղված աշխատանքները: Ստորև համառոտակի ներկայացնենք ԲՀԱ-ի շրջանակներում կատարվող աշխատանքների էությունը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տեղեկատվական աշխատանքը կազմակերպվում և կատարվում է բնակչությանը օպերատիվ կերպով տեղեկացնելու, բնակչության քննադատական-վերլուծական մտածողությունը զարգացնելու, բնակիչների անհրաժեշտ բարոյահոգեբանական հատկությունները*, ինչպես նաև բարդ իրավիճակներն ու անհաջողությունները հաղթահարելու կարողություն ձևավորելու նպատակով:

Տեղեկատվական աշխատանքի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝ օպերատիվ տեղեկույթի հավաքումը, վերլուծությունը, գնահատումը և ընդհանրացումը, հավանական զարգացումների կանխատեսումը, բնակչությանը տեղեկությունների մշտական օպերատիվ տրամադրումը, նրա իրավագիտակցության մակարդակի բարձրացումը՝ նպատակային նյութերի տպագրմամբ ու հեռարձակմամբ,

սպառնալից շրջանում և պատերազմի ժամանակ՝ բնակչության մտածելակերպի վերափոխումը խաղաղից պատերազմականի, հակառակորդի, ինչպես նաև տարբեր ասեկոսեների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումը, խուճապային իրավիճակներում հոգեբանական կայունություն ու դատողականություն պահպանելու կարողության զարգացումը:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հոգեբանական աշխատանքի նպատակներն են՝ բնակչության հոգեկան առողջության պահպանումը, բարդ պայմաններում գոյատևման համար հոգեբանական կայունության և այլ անհրաժեշտ հատկությունների ու հմտությունների ձևավորումը, հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից պաշտպանությունը**:

Հոգեբանական աշխատանքի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝ բնակչության բարոյահոգեբանական վիճակի և հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական զարգացումների ուսումնասիրությունը, վերլուծությունը, հավանական զարգացումների կանխատեսումը, բնակչության հոգեվիճակի ախտորոշումը՝ բնակչության հոգե-

* Բարոյահոգեբանական հատկություններ ասելով նկատի ունենք բարոյական նորմատիվությունը, պատասխանատվությունը, զգոնությունը, գիտակցված կարգապահությունը և այլն:

** Նշենք, որ հոգեբանական բնույթի ցանկացած միջամտության նպատակն է փոփոխել տվյալ անձնավորության հոգեվիճակը և վարքը:

բանական պատրաստման նպատակով (իմացական, հուզական-կամային ոլորտների զարգացում),

սպառնալից շրջանում և պատերազմի ժամանակ՝ դժվարությունները ակտիվորեն հաղթահարելու հոգեբանական պատրաստության և տրամադրվածության ձևավորումը, բնակչության հոգեվիճակի ախտորոշումն ու շտկումը հոգեբանական օգնության* ցուցաբերումը (աջակցություն, վերականգնում), աշխատունակության վերականգնումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Սոցիալական աշխատանքը կազմակերպվում և կատարվում է բնակչության արդյունավետ կենսագործունեության համար անհրաժեշտ սոցիալ-կենցաղային և սոցիալ-բնապահպանական պայմանների ստեղծման, անհատի, ընտանիքի, մեծ խմբերի սոցիալական իրավունքների ապահովման և պաշտպանման նպատակով:

Սոցիալական աշխատանքի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝ տարածաշրջանում սոցիալական իրադրության ուսումնասիրությունը, վերլուծությունը, զարգացման կանխատեսումը, առաջարկությունների մշակումը և իրագործումը, բնակչության սոցիալական պաշտպանվածության կազմակերպումը (նորմատիվային իրավական բազայի մշակում և իրացում, սոցիալական ծառայությունների աշխատանքի պատշաճ մակարդակի ապահովում),

սպառնալից շրջանում և պատերազմի ժամանակ՝ սոցիալական ծառայությունների աշխատանքի կազմակերպումը պատերազմի պահանջներին համապատասխան և այդ մասին բնակչության իրազեկումը, բնակչության սոցիալապես անապահով խավերին, զոհվածների ու վիրավորների ընտանիքներին սոցիալական օգնության ցուցաբերումը, բնակչության տարահանման և անվտանգ վայրերում տեղաբաշխման նպատակով տվյալների հավաքումը, վերլուծումը, պլանների ճշգրտումը, առաջարկությունների մշակումն ու իրագործումը, անհատի և շրջակա սոցիալական միջավայրի միջև խախտված փոխգործության վերականգնումը:

ՄՇԱԿՈՒԹԱԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մշակութաժամանցային աշխատանքը կազմակերպում է ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ իր վարած քաղաքականության նկատմամբ վստահության դաշտ ձևավորելու, բնակչության բարոյահոգեբանական ու ֆիզիկական ուժերը վերականգնելու և պահպանելու, ինչպես նաև դժվարությունների հաղթահարման համար ներքին էներգետիկ ռեսուրսները մոբիլիզացնելու

* Հոգեբանական օգնություն ասելով նկատի ունենք մասնագիտական աջակցությունը, որը ցուցաբերվում է մարդուն, ընտանիքին կամ սոցիալական խմբին եղած հոգեբանական պրոբլեմների, սոցիալական հարմարման հետ կապված խնդիրների լուծման, նրանց վերականգնման և բարդ հոգեբանական իրավիճակների հաղթահարման համար:

և աշխատանքային գործունեությունը արդյունավետորեն կազմակերպելու նպատակով:

Մշակութաժամանցային աշխատանքի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝ բնակչության մեջ Հայրենիքի նկատմամբ սիրո զգացումի, աշխատանքային պարտքի, ազգային-պետական ավանդույթների նկատմամբ հավատարմության, արիության, իրենց ուժերի նկատմամբ վստահության դաստիարակությունը,

սպառնալից շրջանում և պատերազմի ժամանակ՝ իրադրության կոնկրետ պայմանների հաշվառմամբ բնակչության հանգստի ու ժամանցի կազմակերպումը, բնակչության բացասական հուզական վիճակների առաջացման կանխումը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության դաշտի ձևավորումը:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Տեղեկութային պատերազմի համատեքստում հակառակորդի ձեռնարկած բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից բնակչության պաշտպանությունը կազմակերպվում և իրագործվում է խաղաղ ժամանակ, սպառնալից շրջանում, պատերազմի ժամանակ և պատերազմի ավարտից հետո՝ բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի համախմբման ու բարոյական ոգու ամրապնդման, ինչպես նաև բարոյահոգեբանական որակների վերականգնման ու բարելավման նպատակով:

Հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից բնակչության պաշտպանությանն ուղղված աշխատանքի հիմնական խնդիրներն են.

խաղաղ ժամանակ՝ հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործության հնարավորությունների, այդ նպատակին ծառայող աղբյուրների վերաբերյալ տվյալների հավաքումը, վերլուծությունը, հնարավոր թեմատիկայի (բովանդակության) և խորհրդանիշների, ինչպես նաև հակառակորդի ձեռնարկած հոգեբանական օպերացիաների ու տեղեկութահոգեբանական ներգործության այլ միջոցառումների հետևանքների կանխատեսումը, տեղեկութահոգեբանական ներգործության առավել հնարավոր թիրախների հետ բացատրական աշխատանքի կազմակերպումը, հակառակորդի գործողությունների նկատմամբ համապատասխան դիրքորոշումների ձևավորումը, բնակչության աշխարհայացքի և քննադատական վերլուծություններ կատարելու ունակության զարգացումը,

սպառնալից շրջանում և պատերազմի ժամանակ՝ բացասական տեղեկութահոգեբանական ներգործության աղբյուրների չեզոքացումը կամ ոչնչացումը, բնակչության շրջանում հակաքարոզչական աշխատանքների կատարումը, բնակչության համախմբվածության ձևավորմանն ուղղված աշխատանքների կատարումը:

Այսպիսով՝ պաշտպանությանը պետության պատրաստման հույժ կարևոր բաղադրիչն է բնակչության պատրաստումը, որի հիմնական տարրերից մեկը բնակչության հետ տարվող բարոյահոգեբանական աշխատանքն է: Այն պետք է կազմակերպվի վաղօրոք՝ պատերազմի սպառնալիքի ի հայտ գալուց շատ առաջ, և կատարվի գրագետ ձևով՝ բոլոր սկզբունքների, մեթոդների, ձևերի ճիշտ ու հետևողական կիրառմամբ:

ՂԵԿԱՎԱՐԻ, ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Ս. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

Ներկայումս մարդկության քաղաքակրթության առաջընթացը թևակոխել է մի փուլ, երբ «տնտեսական ոլորտում, գիտության և տեխնիկայի ասպարեզում տեղի է ունենում թռիչքային զարգացում, որը հանգեցնում է նաև զինված պայքարի նոր միջոցների, ուստի և նոր ձևերի ու եղանակների ստեղծմանը»[1]: Մարտը դառնում է ավելի ու ավելի արագընթաց՝ լի անորոշությամբ և անակնկալներով, ինչը հրամանատարից պահանջում է բարդ և խճճված իրավիճակներում ավելի արագ կողմնորոշվելու, իրավիճակի փոփոխություններին ավելի արագ ու ճիշտ արձագանքելու և հարմարվելու ունակություններ, նախաձեռնողականություն և ինքնուրույնություն: Դա առաջադրանքային կառավարման *(Mission Command)* համակարգաստեղծ սկզբունքներից է:

Ըստ ռազմական բնագավառի գերմանացի խոշոր տեսաբան Կլաուզևիցի՝ պատերազմում հրամանատարի համար ծագող գլխավոր մարտահրավերը անհամապատասխանության հաղթահարման անհրաժեշտությունն է. «Պատերազմում ամեն ինչ շատ պարզ է, բայց ամենապարզը դժվար է.... հպարտ ոգու կուռ կամքը գերիշխում է պատերազմի արվեստի վրա»[2]: Այս

[1] *Գ. Վ. Տավարածյան,* Փոփոխվող անվտանգային միջավայրի պայմաններում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի դերն ու խնդիրները: «ՀԲ», 2019, հմ. 1 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/armenianarmy_2019_n1.pdf):

[2] *Carl von Clausewitz.* On War. Edited and Translated by Michael Howard and Peter Paret. Princeton, 1976, P. 119.

առումով Կլաուզևիցը շեշտում է, որ հրամանատարը պետք է ունենա ազնվության, կայունության և վճռականության առաքինություններ, որպեսզի որոշումների կայացման ժամանակ թույլ չտա հույզերին իրեն ղեկավարելու: Հրամանատարը պետք է իր հույզերը կարողանա օգտագործել ենթականերին ոգեշնչելու համար և երբեմն զսպել դրանք՝ իր դատողությունների տրամաբանվածությունն ապահովելու համար[3]:

Նման պայմաններում հրամանատարը և ընդհանրապես ցանկացած կազմակերպության ղեկավար պետք է լինեն ոչ միայն իենց ոլորտում բարձր որակավորմամբ մասնագետ ու ֆիզիկապես լավ կոփված անձ, այլև կարողանան «ներգործել ենթակաների վրա, կառավարել կոլեկտիվում տիրող մթնոլորտը, դիմակայել հակառակորդի հոգեբանական ճնշմանը, այդ թվում և իրական մարտի պայմաններում, զանազան արտակարգ գործոնների ազդեցության նկատմամբ լինել կայուն, ունակ լինեն վերահսկելու իրավիճակի անորոշությունը, երկարաժամկետ նպատակներին հասնելու գործում դրսևորել համառություն»[4]:

Միջանձնային հարաբերությունների որոշարկման տերմիններով արտահայտված՝ նա պետք է օժտված լինի զարգացած հուզական բանականությամբ և անորոշությունների հանդեպ հանդուրժողականությամբ[5]:

Այսպիսով՝ կառավարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովման համար կարևոր նշանակություն ունի, թե որքան զարգացած է ղեկավարի հուզական բանականությունը, որն իր և իրեն շրջապատող անձանց հույզերն ըմբռնելու և արդյունավետ կերպով կառավարելու ունակությունն է[6]:

Հուզական բանականության ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ջ. Մեյերը, Փ. Սալովեյը, Դ. Կառուզոն, Դ. Գոուլմենը, Ռ. Բար–Օնը: Ռուսական գրականության մեջ «հուզական բանականություն» հասկացությունն առաջին անգամ գործածել է Գ. Գ. Գարսկովան[7]: Իսկ հայրենական հոգեբանության մեջ այս երևույթը լիարժեքորեն ուսումնասիրված չէ, կան միայն առանձին հոդվածներ (Ա. Լոքյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան), որոնցում հուզական բանականությունը դիտարկվում է մասնակիորեն՝ գերազանցապես կիրառական տեսակետից:

---

[3] Տես *David S. Abrahams*. Emotional Intelligence and Army Leadership: Give It to Me Straight! “Military Review”, March-April 2007:

[4] Տես *Е. В. Краснов, Т. В. Корнилова.* Эмоциональный интеллект и толерантность к неопределенности как предикторы результативности деятельности военных руководителей. «Вестник СПБГУ», сер. 16: «Психология. Педагогия», 2016, вып. 3:

[5] Տես նույն տեղում:

[6] Տես «Модель Дж. Мейера, П. Сэловея и Д. Карузо. Эмоциональный интеллект» (https://sites.google.com/site/emocionalnyjintellekt5555/home/model-bar-ona):

[7] Տես *И. Н. Андреева.* Эмоциональный интеллект. исследования феномена. Новополоцк, 2011, с. 9:

Վերջին տարիներին ՀՀ պետական կառավարման համակարգում կատարվել են հուզական բանականության ուսումնասիրություններ, որոնք բերել են այն եզրահանգման, որ ղեկավար անձինք և աշխատողներն ունեն իրենց հույզերը կառավարելու և ուրիշների հույզերը հասկանալու ցածր մակարդակ, ինչը նշանակում է, որ աշխատանքի ընթացքում հուզական դրսևորումները կարող են խոչընդոտել նրանց բնականոն գործունեությանը[8]:

Կառավարման համակարգի գործունեությունը ներառում է մարդ–մարդ փոխհարաբերություններ, որոնց արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ղեկավարների ու ենթակաների ծագող պրոբլեմների ներդաշնակ ընկալմամբ, համագործակցային ներուժով, որոնց կարևոր տարրերից է բարձր մակարդակի հուզական բանականությունը: Ըստ այդմ տվյալ ունակությունը կարևորվում է, քանի որ՝

- հնարավորություն է տալիս արագ կերպով կայացնելու ճիշտ և արդյունավետ որոշումներ,
- դրանով օժտված ղեկավարները յուրաքանչյուր աշխատանքային իրավիճակում պահպանում են հանգստություն և դատողականություն,
- այն ղեկավարները, որոնք ունեն զարգացած հուզական բանականություն, կարողանում են կանխել աշխատանքային գործունեության ընթացքում ծագող գժտությունները և ապահովել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի «Բանակային առաջավարություն» մարտական կանոնադրության մեջ առաջավարությունը սահմանվում է որպես «նպատակի, ուղղության և շարժառիթավորման միջոցով մարդկանց վրա գործադրվող ազդեցություն, որը ձեռնարկվում է առաջադրանք կատարելու և կազմակերպությունը բարելավելու ժամանակ»[9]: Դա ենթադրում է, որ առաջավարությունը ներառում է մարդկային փոխգործությունը որպես միակողմանի գործընթաց՝ ուղղված ղեկավարից դեպի ենթակաները, այսինքն՝ «Ազդեցություն գործելը նշանակում է ստիպել մարդկանց այնպես անել այն, ինչ դու ուզում ես»[10]: Դրանով իսկ ենթական զրկվում է «գործի կառավարմանը մասնակցելու» որևէ հնարավորությունից[11]: Մինչդեռ, դա մարդ–մարդ փոխգործությունն է, որին մասնակցողների միջև կապը պետք է լինի երկկողմ, այսինքն՝ ղեկավարը պետք է կարողանա հաշվի առնել ենթակաների նպատակները, հույզերը, մտադրությունները՝ դրանք հաջողությամբ «տեղավորելով» իր ընդհանուր մտահղացման սահմաններում[12]: Օրինակ՝ ենթա-

[8] Տես *Ա. Լոքյան,* Հանրային ծառայողների հուզական կայունության առանձնահատկությունների հետազոտության արդյունքների վերլուծությունը: «Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու», 2016, հմ 2:

[9] Տես “Army Leadership: Be, Know, Do” (FM 22-100), 31 August 1999, P. 1-4:

[10] Տես նույն տեղում:

[11] Տես *Դ. Ս. Աբրահամ,* Նշ. աշխ.:

[12] Տես *Peter J. Northause.* Leadership: Theory and Practice. California, 2004, P. 3:

կայի զայրույթն ուղղել հակառակորդի դեմ, որպեսզի ենթական գործի ավելի արդյունավետ կերպով, թեև այդ հուզական վիճակի ծագման պատճառը ամենևին էլ հակառակորդը չէր:

Ինչպես վերը նշվեց, հուզական դաշտի բարձր աստիճանի վերահսկելիությունը անհրաժեշտ պայման է ճիշտ որոշումներ կայացնելու, միջավայրում տիրող անորոշությունների նկատմամբ հանդուրժողականությունը և հարմարվողական հակազդումների կայունությունը ապահովելու, աշխատանքային հարաբերությունները հմտորեն կարգավորելու համար: Ուստի հուզական բանականության զարգացումը դառնում է կառավարման ոլորտում առաջնային խնդիրներից մեկը:

Կառավարային գործունեության հոգեբանական օրինաչափությունները բազմիցս քննարկվել են կառավարման հոգեբանության շրջանակներում և՛ արտասահմանյան, և՛ հայրենական գրականության մեջ[13]: Այսպես. ռուս հոգեբան Ե. Ա. Մոգիլևկինը՝ ուսումնասիրելով ղեկավարի հոգեբանական հատկությունները, դրանց շարքում առանձնացնում է գործունեության մեջ ինքնաարդյունավետությունը[*], ինքնավերահսկողությունը և բարձր մակարդակի հուզական բանականությունը[14]:

Ուշագրավ են հուզական բանականության առաջին ուսումնասիրությունները, որոնք կատարել են Ջ. Մեյերը, Պ. Սալովեյը և Դ. Կառուզոն: Ըստ ստացված արդյունքների՝ նրանք կառուցել են մի մոդել, որում այդ երևույթը ներկայացվել է երեք փոխկապված բաղադրատարրերից: Դրանք են.

1. *հույզերի ըմբռնումը,* այն է՝ հույզերի միջև եղած կապերը, այսինքն՝ մեկ հույզից մյուսին անցումը և ընդհանրապես հույզերի ծագումը հասկանալու կարողությունը,

[13] Տես, օրինակ, *Ա. Լոբյան,* Կառավարչի անձի հոգեբանական ասպեկտները: «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2013, հմ. 2, *Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Ա. Խաչատրյան,* Կառավարչական գործունեության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիր: Ե., 2015, *Ռ. Աղուզումցյան, Ա. Լոբյան, Լ. Պետրոսյան,* Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում: Ե., 2012, *Ս. Պողոսյան,* Կառավարչական գործունեության համար անհրաժեշտ անձնային որակների դրսևորման առանձնահատկությունները: «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2015, հմ. 1, *В. Бодров.* Психология профессиональной пригодности. М., 2001; *А. Бандурка, С. Бочарова, Е. Землянская.* Психология управления. Харьков, 1998; *А. Занковский.* Психология деловых отношений. М., 2008:

[*] Ամերիկացի հոգեբան Ա. Բանդուրան ինքնաարդյունավետությունը սահմանում է՝ որպես մարդու այս կամ այն իրավիճակում, որոշակի պայմաններում արդյունավետորեն գործելու իր ունակության հարցում համոզմունքը, այդ գործողությունների հսկողության հարցում վստահությունը, ինչն ուղեկցվում է ավելի բարդ խնդիրների նախընտրությամբ, դժվար նպատակների առաջադրմամբ և դրանց հասնելու ճանապարհին համառության, հաստատակամության դրսևորմամբ:

[14] Տես *Е. А. Могилевкин.* Личностные факторы профессиональной карьеры государственных служащих. Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук. М., 1998 (https://www.dissercat.com/content/lichnostnye-faktory-professionalnoi-karery-gosudarstvennykh-sluzhashchikh):

2. *հույզերի կառավարումը*, այն է՝ հույզերը վերահսկելու, բացասական հույզերի ազդեցությունը նվազեցնելու, իր հույզերը գիտակցելու, հուզականությամբ պայմանավորված խնդիրները լուծելու կարողությունը,
3. *հույզերի տարբերակումը, դրանց բովանդակության որոշարկումը*, այն է՝ հույզերը ճիշտ արտահայտելու և դեմքի արտահայտությամբ տոգորող հույզերը որոշելու կարողությունը[15]:

Հարկ է նշել, որ իր հույզերը կառավարելը բարդ, սակայն հույժ կարևոր գործ է, քանի որ աշխատանքային օրվա ընթացքում յուրաքանչյուր աշխատող պետք է կարողանա կառավարել իր, հատկապես՝ բացասական հույզերը, որպեսզի դրանք չխոչընդոտեն աշխատանքի բնականոն ընթացքին:

Դ. Գոուլմենի մոդելի հիմնական տարբերությունը Մեյերի, Սալովեյի և Կառուզոյի մոդելից այն է, որ բաղկացած է հինգ բաղադրատարրերից. ինքնագիտակցում, ինքնավերահսկողություն, շարժառիթավորում, ապրումակցում և սոցիալական ունակություններ: Ընդսմին դրանցից յուրաքանչյուրը բարդ համալիր հատկություն է:

Այսպես. **ինքնագիտակցումը** ենթադրում է.

- *հույզերի ըմբռնում.* այսինքն՝ իր հույզերի վերլուծություն և դրանց հետևանքների կանխատեսում,
- *ինքնագնահատում.* այսինքն՝ իր թույլ և ուժեղ կողմերի, ինչպես նաև թերությունների և առավելությունների իմացություն,
- *ինքնավստահություն.* այսինքն՝ համոզվածություն իր կարողությունների հարցում,

ինքնավերահսկողությունը ենթադրում է.

- *լավատեսություն.* այսինքն՝ դժվար իրավիճակների բարեհաջող ավարտի ակնկալում,
- *հույզերի զսպում.* այսինքն՝ հույզերը և դրանց հետ կապված ապակառուցողական ազդակները կառավարելու ունակություն,
- *հարմարում.* այսինքն՝ իրավիճակների փոփոխությանը ներդաշնակորեն արձագանքելու ունակություն,

շարժառիթավորումը ենթադրում է. իր կարիքների բավարարմանը նպատակաուղղված գործունեություն վարելու մարդու ունակություն[*],

ապրումակցումը, այն է՝ կարեկցանք և ներքին աջակցություն,

սոցիալական ունակությունները ներառում են.

- *հաղորդակցություն,* այն է՝ հստակ և ազդու հաղորդագրություններ ուղարկելու կարողություն,

[15] Տես «Сущность понятия и основные теории эмоционального интеллекта», 05. 04.2011 (https://psixologiya.org/socialnaya/emocionalnyj-intellekt/1673-sushhnost-ponyatiya-i-osnovnye-teorii-%20%20%20%20%20%20emoczionalnogo-intellekta.html):

[*] 2018–2019 թթ. մենք կատարել էինք հետազոտություն, որը ցույց է տվել, որ քաղաքացիական ծառայողների շարժառիթավորման գործոնների շարքում առաջնային են անձնական նվաճումները, այն է՝ պաշտոնեական առաջխաղացումը, պարբերական պարգևավճարները:

- *առաջավարություն,* այն է՝ ծագող սուր տարաձայնությունների պատճառները պարզելու և վերացնելու կարողություն,
- *համագործակցություն,* այն է՝ ուրիշների հետ համագործակցությամբ միասնական նպատակներ իրականացնելու կարողություն[16]:

Ղեկավարի սոցիալական հմտությունների զարգացումը էապես նպաստում է բնականոն գործունեության ապահովման համար կառուցողական փոխհարաբերությունների կերտմանը, գժտությունների կանխմանը:

Ժամանակակից հոգեբանության մեջ զինվորական ղեկավարը հանդես է գալիս՝ որպես առաջավար, որը մեծ ազդեցություն է գործում իր ենթակաների վրա՝ ոգեշնչելով և շարժառիթավորելով նրանց: Դ. Մակքլելանդն իր ուսումնասիրություններում հանգել է հետևյալ եզրակացության. այն զինվորական ղեկավարը, որն ունի հաղորդակցվելու հմտություն և բարձր մակարդակի հուզական բանականություն, յուրաքանչյուր իրավիճակում մյուսներից ավելի արդյունավետորեն է գործում[17]:

Զինվորականի մասնագիտությունը այն մասնագիտություններից է, որոնք կապված են ռիսկերի, բարդ մասնագիտական առաջադրանքներ կատարելու, հուզական լարվածության, ստրեսի հետ: Նրա գործունեության բնույթը պահանջում է առանձնահատուկ ունակություններ: Այն է՝ իր հույզերն ըմբռնելու և կառավարելու, հեռուն տեսնելու, ենթականերին համոզելու, ոգևորելու, շարժառիթավորելու ունակությունների հետ մեկտեղ բարձր աստիճանի անորոշության պայմաններում արագորեն կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու, ամենաբարդ և վտանգավոր իրավիճակներում հուզականությունն ու բնազդային մղումները դատողականությամբ հաղթահարելու կարողություն, ինչն էլ, ըստ էության, հուզական բանականության դրսևորում է:

Հարկ է նշել, որ հուզական բանականությունը, ինչպես և ցանկացած այլ ունակություն, հնարավոր է զարգացնել հատուկ եղանակներով, մասնավորապես՝ նպատակային վարժանքներով՝ ըստ անհատի անձնային հատկությունների[18]: Դրա համար անհրաժեշտ է՝

1. գնահատել հուզական բանականության զարգացածության մակարդակը՝ Դ. Գոուլմենի, Փ. Սալովեյի, Դ. Կառուզոյի և Ն. Հոլլի թեստերի կիրառմամբ[19],

[16] Տես «Эмоциональный интеллект: Harvard Business Review: 10 лучших статей». Альпина Паблишер, 2016, сс. 8–16:

[17] Տես *D. McClelland.* Identifying Competencies with Behavioral-Event Interviews. “Psychological Science”, 1998, Vol. 9, N 5:

[18] Տես, օրինակ, *Д. Гоулман.* Эмоциональный интеллект. М., 2009:

[19] Տես, օրինակ, «Узнайте уровень эмоционального интеллекта тестом Д. Гоулмана» (https://testometrika.com/intellectual/test-golmana-on-emotional-intelligence/); «Тест на Эмоциональный Интеллект Дж. Саловея и Д. Карузо» (https://www.mindface.space/main/proyti-test-na-emocionalnyy-intellekt-dzh-saloveya-i-d-karuzo); *Н. П. Фетискин, В. В. Козлов, Г. М. Мануйлов.* Социально-психологическая диагностика развития личности и малых групп. М., 2002, с. 41:

2. օրագրում գրառել աշխատանքային գործունեության ընթացքում տարբեր իրադարձություններին մեր արձագանքը, ինչը կնպաստի հետագայում նման հույզերի վերահսկմանը,
3. մասնակցել հուզական բանականության նպատակային վարժանքներին, այդ թվում՝ հեռահար եղանակով (Դ. Կառուզո, Դ. Գոուլման): Պետք է նկատի ունենալ, որ այս վարժանքների նպատակն է հուզական բանականության դրսևորումները հասցնել մարդու ավտոմատ արձագանքման մակարդակի, քանի որ նրա սովորությունները, համոզմունքները փոխելը բավական դժվար գործ է, ուստի մասնակցությունը պետք է լինի պարբերական և երկարաժամկետ (ըստ Դ. Գոուլմենի՝ վեց ամսից ոչ պակաս):

Այսպիսով՝ կառավարման հոգեբանության շրջանակներում հուզական բանականությունն ունի կարևոր նշանակություն, քանի որ այն ղեկավարին հնարավորություն է տալիս արագ կերպով կայացնելու որոշումներ, կերտելու հավասարակշռված փոխհարաբերություններ, կանխելու աշխատանքային գործունեության ընթացքում ծագող գժտությունները և ապահովելու բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, դրանով իսկ նախադրյալներ ստեղծելու կոլեկտիվի արդյունավետ գործունեության համար: Ռազմական ոլորտում բարձր մակարդակի հուզական բանականությունը հրամանատարներին ու պետերին օգնում է անորոշությունների հանդեպ հանդուրժողականության ցուցաբերմանը, խճճված իրավիճակներում իր և իրեն ենթակաների հույզերի կառավարմանը, կոլեկտիվում բարեհաջող բարոյահոգեբանական մթնոլորտի հաստատմանը, միջանձնային հարաբերությունների հավասարակշռվածությանը, բարձր մակարդակի կարգապահության պահպանմանը, զինվորների՝ իրենց զինվորական պարտքի անթերի կատարմանն ու անբասիր ծառայությանը, մարտի դաշտում նրանց խելամիտ ինքնազոհողությանը:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ НАСЕЛЕНИЯ КАК ВАЖНЫЙ КОМПОНЕНТ ПОДГОТОВКИ ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ

В. Г. МАРГАРЯН, полковник, начальник Института национальных стратегических исследований-заместитель начальника НИУО МО РА по образованию и науке

РЕЗЮМЕ

В связи с малоразработанностью в отечественной военной психологии проблемы морально-психологического обеспечения (МПО) населения, большое значение имеют разработка и внедрение принципов, целей и задач МПО населения как одной из важных составляющих подготовки государства к обороне.

Практически во все времена решающим фактором войны являлась и сегодня является реализация народом, государством и Вооруженными силами своих политического, экономического, морально-психологического, социального, научного, военного и боевого потенциалов. Степень и механизм реализации морально-психологического потенциала зависит от уровня развития экономики страны, социальных отношений между гражданами и государством, качества жизни народа и других условий. В этих активных процессах помимо качества военно-политического руководства государством и уровня боеспособности Вооруженных сил решающую роль играет сознательная деятельность населения по подготовке государства к обороне как в мирное время, так и непосредственно в условиях войны. В соответствии с вышеизложенным определяются сущность, цели, задачи и основные направления работ по МПО населения.

ЭМОЦИОНАЛЬНЫЙ ИНТЕЛЛЕКТ РУКОВОДИТЕЛЯ, КОМАНДИРА КАК ВАЖНЫЙ ФАКТОР ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ

С. М. БАГДАСАРЯН, ученый-аналитик Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

РЕЗЮМЕ

Эмоциональный интеллект – это способность осознавать и эффективно управлять своими эмоциями и эмоциями окружающих. Данное качество исключительно важно для руководящих лидеров, и особенно – для военных руководителей, поскольку позволяет им даже в условиях больших неопределенностей быстро и правильно ориентироваться и принимать разумные решения, сдерживая свои эмоции. Благодаря этой способности создается возможность предупреждения возникновения в ходе работы или службы отрицательных эмоций и их перерастания в межличностный конфликт, а также установления в подчиненном коллективе благоприятной атмосферы сотрудничества.

Как и любая другая способность, эмоциональный интеллект подлежит развитию посредством специальных тренингов. При этом их структура и содержание определяются в индивидуальном порядке в соответствии с личностными качествами обучаемого.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

MORAL AND PSYCHOLOGICAL SUPPORT OF THE POPULATION AS AN IMPORTANT COMPONENT OF PREPARING THE STATE FOR DEFENSE

V. H. MARGARYAN, Doctor of Psychology, Colonel, Head, Institute for National Strategic Studies – Deputy Head in Education and Research, NDRU, MOD, RA

SUMMARY

In view of the underexploredness of the issue of moral and psychological support (MPS) of the population in the domestic military psychology, the development and implementation of the principles, goals and objectives of the MPS of the population as one of the key components of preparing the state for defense acquire great importance.

The achievement of their political, economic, moral and psychological, social, scientific, military and combat potentials by the people, the state and the Armed Forces has almost always been the decisive factor of war, as it is now. The degree and mechanism of realization of moral and psychological potential depends on the level of the state's economic development, social relationships between citizens and the state, life quality of the people and other conditions. In these active processes, besides the quality of the military and political leadership of the state and the level of combat capability of the Armed Forces, a decisive role is played by the conscious activity of the population in preparing the state for defense both in peacetime and immediately in wartime. Thus, the essence, goals, objectives and main strands of work of the MPS of the population are being defined in compliance with the abovesaid.

EMOTIONAL INTELLIGENCE OF A LEADER, COMMANDER AS AN IMPORTANT FACTOR FOR EFFECTIVE MANAGEMENT

S. M. BAGHDASARYAN, Research Fellow, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

SUMMARY

Emotional intelligence is the ability to realize and effectively manage one's own emotions and those of the people around. This trait is indispensible for executive leaders, and especially for military leaders, as it allows them to quickly and correctly orient themselves and make rational decisions even in the face of great uncertainty, while holding back their

emotions. Due to this ability, it is possible to prevent generation of negative emotions in the course of the work or service, and their development into an interpersonal conflict, as well as to cultivate a favorable collaborative environment in the subordinate staff.

Like any other ability, emotional intelligence is subject to development through special trainings. Whereby, their structure and content are determined individually in accordance with the personal qualities of the trainee.

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ*

Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պահեստազորի մայոր, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար

Ազգային-ազատագրական պայքարի ռազմական փուլի պատմագրությունը՝ թեմայի առանձնահատկություններով պայմանավորված, զարգանում է դանդաղ, բայց հաստատուն տեմպերով:

Թեև Արցախյան պատերազմի առանձին դրվագներ լուսաբանվել են բազմաբնույթ աշխատություններում, սակայն ռազմական արվեստի տեսանկյունից ներկայացված նրա ամբողջական պատմությունը հատուկ ուսումնասիրության նյութ դարձրել են սահմանափակ թվով հեղինակներ:

Արցախյան պատերազմի հիմնական օպերացիաները ռազմական արվեստի տեսանկյունից լուսաբանելու կարևորությունը պայմանավորված է մեր հանրապետության տեղեկութային անվտանգությամբ: Հատկապես Շուշիի ազատագրմանն առնչվող հիմնահարցերի ուսումնասիրությունը և հանրահռչակումը պահանջված են ինչպես այդ կարևոր իրադարձության ճշգրիտ ու համակողմանի ներկայացման, այնպես էլ պատմության կեղծարարների մտավարժանքներին հակադարձելու առումներով:

Նույն կերպ հրատապ են մշտապես ու նպատակամղված կերպով կատարված ճշգրտումների կամ վերագնահատումների արդյունքների ընդհանրացումը, ինչպես նաև նախկինում թույլ տրված վրիպումների և այլ թերությունների վերարտադրության ու նոր հրապարակումներում անցանկալի շրջանառության պատեհաժամ կանխումը:

Այս առումով կարևոր խնդիրներից է Շուշիի ազատագրման օպերացիայի մասնակիցների թվի ճշգրտումը: Շուշիի ազատագրման համար մեդալով պարգևատրվածների անչափակից թիվը, ինքնակոչների տարեցտարի ուռճացող թվաքանակը սպառնում են համազգային հաղթանակի արժեզրկմամբ:

Մինչև 1999 թ. որպես Շուշիի գրոհի մասնակիցների թիվ ընդունված էր 1200-ը[1]: Տարիների ընթացքում մեզ հաջողվել է հավաքել Շուշիի ազատա-

---

* Սույն հետազոտությունը կատարվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցությամբ «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում:

գրմանը մասնակցած ջոկատների ցուցակները, որոնց առադրմամբ ստացել ենք, որ հարձակման առաջին օրը մասնակիցների թիվը չի գերազանցել 1200-ը: Ներկայումս աշխատանքներ ենք տանում անհատապես յուրաքանչյուրի մասնակցությունն ու դերը հնարավորինս ճշգրտելու ուղղությամբ:

Մասնակիցների թվի կրկնապատկումը մայիսի 9-ին պահեստազորային ուժերի ներգրավման հետևանք է, ինչն անհրաժեշտ եղավ անել այն բանից հետո, երբ մայիսի 8-ի հետմիջօրեին խոցվեց գրոհին մասնակցող տանկը և նվազեց հարձակման թափը, իսկ ճակատային գծում հաստատվեցին չկանխատեսված դադար ու անորոշ վիճակ:

Ուստի կարևոր ենք համարում ոչ միայն առանձին մարտիկների, այլև ամբողջ ջոկատների մասնակցության վերագնահատումը: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, եղել են այնպիսի ջոկատներ ու խմբեր, որոնք փաստորեն իրենց մարտական խնդիրը չեն կատարել: Օրինակ՝ Լաչինի (հարավային) ուղղությունում ներգրավված որոշ ջոկատներ, նրանց ուղեկցող Վալերի Բալայանի վկայությամբ, անտառում մոլորվել են և նպատակակետին, փաստորեն, չեն հասել: Ինչպես արձանագրված է մի վավերագրում՝ իր խնդիրը չի կատարել նաև Տումիի ջոկատը[2]: Հաճախ խոսք է գնում նաև այնպիսի ջոկատների մասին, որոնց մասնակցությունը ևս կասկածելի է[3]:

Մասնակիցների թվի առումով որոշ հեղինակներ հակասում են իրենք իրենց՝ մի տեղ նշելով 1700[4], իսկ մի այլ տեղում՝ 775[5]: Կարծում ենք, որ վերջին թիվը ոչ թե օպերացիայի բոլոր մասնակիցների, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ[6], այլ ԼՂՀ ԳԽ-ին ցուցակով «Շուշիի ազատագրման մեդալով» պարգևատրման ներկայացվածների թվաքանակն է[7]: Եթե թյուրիմացության պատճառը տվյալ վավերագրի վերնագիրն է՝ «Շուշի քաղաքի ազատագրմանը մասնակցած մարտիկների ցուցակ», ապա անհասկանալի է, թե որտեղից է *775* թիվը, այն դեպքում, երբ հիշյալ վավերագրում ներկայացված է *764* մարդու անուն:

---

[1] Տես «Մարտիկ», 1999 թ., հմ. 18:

[2] Տես ԼՂՀ ՊՆ արխիվ (ՊՆԱ), «Аппаратный журнал радиостанции. н. 24 апреля - ок. 13 мая 1992 г.», ԻՊՈՒ-ի հրամանատար գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանի 13.05.1992 թ., ժ. 01:30-ի հաղորդագրությունը:

[3] Տես *Ա. Կարապետյան, Մ. Հարությունյան,* Երբ խեղաթյուրվում են փաստերը («Հայ զինվորի» մի հրապարակման առթիվ): «Հայրենյաց պաշտպան», 2002 թ., հմ. 16–17:

[4] Տես *Հ. Աբրահամյան,* Մարտնչող Արցախը 1917–2000 թթ., գիրք Գ: Ստեփանակերտ, 2007, էջ 357:

[5] Տես նույն տեղում, էջ 368:

[6] Տես *Հ. Աբրահամյան,* Նշ. աշխ., էջ 357, *Վ. Բալայան,* Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում: Ե., 2017, էջ 480:

[7] Տես ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 254, ց. 1, պ.մ. 15, թ. 8-27:

Մեր հավաքած տվյալներով՝ Շուշիի ազատագրման և Ստեփանակերտին հարակից կրակակետերի վնասազերծման օպերացիայում զոհվել է 47 և վիրավորվել շուրջ 8 տասնյակ ազատամարտիկ[8], մինչդեռ հակառակորդի մարդկային կորուստները եղել են քառակի շատ[*]: Նշենք, որ այս հարցերի ուսումնասիրությունը դեռ շարունակվում է:

Քաղաքական շահարկումների թիրախ է դարձել նաև հարձակման գլխավոր ուղղության հարցը[9]: Որոշ հրապարակումներում այս առումով նկատելի են անհարկի վերագրումներ՝ պատմական փաստերի անտեսմամբ: Մասնավորապես՝ Շուշիի ազատագրման գլխավոր ուղղություն է ներկայացվել Լաչինի (հարավային) ուղղությունը[10], ինչը չի համապատասխանում թե՛ Շուշիի ազատագրման հրամանի, թե՛ «Հրազդան», «Հարսանիք լեռներում» կոդային անվանումներով հայտնի քարտեզների տվյալներին: Այդ վարկածի օգտին չի խոսում նաև ռազմական օպերացիայի ընթացքի վերլուծությունը, թեև, ինչ խոսք, այդ ուղղությունում հարձակման անցած ստորաբաժանումներն իրենց ուրույն դերն են խաղացել ադրբեջանական կայազորի դուրսմղման գործում[11]:

Տեղին ենք համարում քննարկել որոշ հեղինակների այն պնդումը, թե Շուշիի ազատագրումից հետո, իբր, կարելի էր հընթացս բացել նաև Լաչինի միջանցքը[12]: Կարծում ենք, որ այդ տեսակետը համոզիչ չէ: Փաստորեն անտեսվում են ԼՂՀ սահմանների ամբողջ երկայնքով հակառակորդի մեծաթիվ ուժերի ու միջոցների կուտակումը և մի քանի ուղղություններով ԼՂՀ ներխուժելու վերահաս վտանգը: Անշուշտ, անմտություն կլիներ տարվել Լաչինի ուղղությամբ հակառակորդին հետապնդելով և միջոցներ չձեռնարկել ԼՂՀ սահմանների պաշտպանությունն ուժեղացնելու, հակառակորդի անխուսա-

[8] Տես *Մ. Հարությունյան,* Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991–1994 թթ.: «Կաճառ», գիրք 5: Շուշի, էջ 81:

[*] Վկայություն կա Շուշիի օպերացիայի ընթացքում ադրբեջանցիների 480 սպանվածի, 600 վիրավորի մասին, որոնցից 150-ը դարձել է հաշմանդամ, 68 մարդ գերի է հանձնվել կամ անհայտ կորել (տես «Голос Карабаха», май 2014 г., № 5, с. 5):

[9] Տես *Հ. Աբրահամյան,* Նշ. աշխ., էջ 358:

[10] Տես «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994»: Հանրագիտարան: Ե., 2004, էջ 103, *Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան,* Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազդականը 44: Ե., 2008, էջ 36:

[11] Տես *Ա. Մ. Դավթյան, Ա. Ա. Ավանեսյան,* Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը: «ՀԲ», 2012, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2012/06/hb-n1-2_2012.pdf), *Մ. Հարությունյան,* Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը: Ե., 2000, էջ 107–113: Ի դեպ, վերոհիշյալ հանրագիտարանում մեր հեղինակած «Շուշիի ազատագրումը» հոդվածում ևս Լաչինի (հարավային) ուղղությունը գլխավոր չի դիտարկվել (էջ 553):

[12] Տես, օրինակ, *Դ. Բաղդասարյան,* Դիմակայություն (հուշագրություններ): Ե., 2010, էջ 173–175:

փելի հարձակմանը դիմագրավելու համար: Սա ավելի հասկանալի է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ Շուշիի վրա գրոհել են հիմնականում ընտրյալ կամավորականները, ասել է թե՝ մարտունակ ու փորձառու ուժերը, առանց որոնց վերախմբավորման ու ներգրավման, թերևս, դժվար կլիներ հետ շպրտել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջաններ ներխուժած հակառակորդի խմբավորումները:

Արցախյան պատերազմի մյուս գլխավոր օպերացիայի՝ Աղդամի ազատագրման ռազմաքաղաքական տեսանկյունները վաղուց դարձել են պատմագրության քննության առարկա[13]:

Մենք բազմիցս առիթ ենք ունեցել նշելու, որ Աղդամի կրակակետերի ճնշումը թելադրված էր մեր ժողովրդի պատմական հիշողությամբ և, առաջին հերթին, Արցախի ԻՊՈՒ-ի ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական խնդիրներով: Աղդամն Արցախի դեմ հակառակորդի գլխավոր ռազմական զորակայանն էր ու ամենավտանգավոր ռազմահենադաշտը, որտեղից մշտական սպառնալիքի տակ էին պահվում ԼՂՀ արևելյան տարածքները, սահմանամերձ բնակավայրերը, այդ թվում՝ Ասկերանը, ինչպես նաև մայրաքաղաք Ստեփանակերտը: Ադրբեջանցի ռազմավարներն Աղդամը համարել են Ստեփանակերտ ներխուժելու ամենակարճ ճանապարհը: Պատահական չէ, որ Արցախի դեմ առաջին բացահայտորեն ագրեսիվ գործողությունը 1988 թ. փետրվարի 22-ին ձեռնարկվել է հենց Աղդամից՝ Ասկերանի վրա բազմահազարանոց ամբոխի կատաղի արտագրոհներով: 1991 թ. վերջերին և ամբողջ 1992 թ. ընթացքում ադրբեջանական զինված կազմավորումները բազմիցս փորձեր են կատարել Աղդամից գրավելու ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի արևելյան բնագծերը, բայց ամեն անգամ հետ են շպրտվել:

Ադրբեջանի տենդագին նախապատրաստությունները, սպառազինության ու կենդանի ուժի բազմապատկումը նպատակաուղղված էին ԼՂՀ-ի դեմ լայնածավալ մարտական գործողությունների վերսկսմանը, հետևաբար՝ անհրաժեշտ էր հակառակորդին նախապես զրկել այն կարևոր ռազմավարական հենադաշտից, ինչպիսին Աղդամն էր, ինչը հնարավորություն կընձեռեր գոնե Ասկերան–Ստեփանակերտ ուղղությունում սահմանափակելու նրա դիրքային առավելությունը, ի դերև հանելու ամենակարճ ճանապարհով հանրապետության մայրաքաղաք հասնելու ադրբեջանցիների հույսերը:

---

[13] Տես *Մ. Հարությունյան,* Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., էջ 141–149, *նույնի՝* Ասկերան. հերոսության հասցեներ: Ասկերան, 2005, էջ 23-26, *նույնի՝* Աղդամի ազատագրման պատմական նշանակությունը, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվ. ժղվծ.), գիրք Ա: Ստեփանակերտ, 2009, էջ 99–101, *Ս. Հասրաթյան,* ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմաճակատներում: Ստեփանակերտ, 2008, էջ 215–224, *նույնի՝* Արցախյան ճակատում (1991 թ. ապրիլ–2016 թ. ապրիլ): Ե., 2018, էջ 107–118, *Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան,* Նշ. աշխ., էջ 109–126, *Տ. Դևրիկյան,* Աղդամի ազատագրումը: «Հայ զինվոր», 2011 թ., հմ. 32:

1993 թ. հուլիսի 4-ին սկսված ռազմական օպերացիան պսակվեց հաջողությամբ, և հուլիսի 23-ին Աղդամն անցավ ԼՂՀ ԻՊՈՒ-ի վերահսկողության տակ: Վերացավ Ստեփանակերտի գլխին դամոկլյան սրի պես կախված մահացու վտանգը: Պատահական չէր, որ Ադրբեջանի ղեկավարությունը վերջապես տեղի տվեց և անմիջապես ԼՂՀ ղեկավարությանը դիմեց կրակի դադարեցման խնդրանքով, ինչը հնարավորություն կտար ուշքի գալու այդ հոգեցունց հարվածից ու ծանր պարտությունից և հապճեպորեն լուծելու Աղդամի հենադաշտի կորստին անխուսափելիորեն հաջորդող բազմաթիվ հիմնախնդիրներ:

1992–1994 թթ. Հայաստանում Ռուսաստանի առաջին դեսպան Վլադիմիր Ստուպիշինն այդ առիթով գրել է. «Եվ այդ ժամանակ, ահա, հանկարծ հնարավոր դարձան ոչ միայն Ադրբեջանի Հանրապետության և ԼՂՀ իշխանությունների անմիջական կապերը, այլև նույնիսկ ադրբեջանական պաշտոնատար անձանց կողմից ղարաբաղյան պաշտոնատար անձանց հայտնի չափով ճանաչումը»[14]:

Աղդամի ռազմական օպերացիայի ժամանակ ԻՊՈՒ-ի ստորաբաժանումների ու զորատեսակների հրամանատարների մասնագիտական աճի և զորքերի ղեկավարման ու մարտավարության կատարելագործման փաստը նշել է ԻՊԿ նախագահն իր «1993 թ. հուլիս-օգոստոս ամիսներին ԻՊՈՒ-ի մարտական գործողությունների արդյունքների մասին» հրամանում[15]:

Արցախի հարավային սահմաններին մշտապես սպառնացող հակառակորդի ռազմական հենակետերի վնասազերծման օպերացիաները ռազմարվեստի տեսանկյունից վերաիմաստավորելու անհրաժեշտությունն ավելի քան հրատապ է ինչպես ՊԲ առաջավոր փորձի ընդհանրացման, այնպես էլ մեր տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության սրման պայմաններում Հայաստանի և Արցախի անվտանգային-պաշտպանական համակարգում հնարավոր մարտական գործողությունների ռազմավարությունն ընտրելու համար գիտատեսական հիմքեր ստեղծելու առումներով:

Մարտակերտ քաղաքի շրջակայքում և Աղդամի ռազմական հենադաշտում հակառակորդի հարվածային ուժերի ջախջախումը, տիրապետող բարձունքների վրա ԼՂՀ ԻՊՈՒ-ի նպաստավոր բնագծերի զբաղեցումը կանխեցին Ստեփանակերտի ու Մարտակերտի օպերատիվ ուղղություններում հակառակորդի ակտիվ գործողությունները՝ միևնույն ժամանակ անվտանգ դարձնելով ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանագիծը: Թվում էր, թե հակառակորդի հարձակման միակ հնարավորությունը մնացել էր օդուժը, սակայն ԼՂՀ հակաօդային պաշտպանության արդյունավետության մեծացման, ՀՕՊ-ի

[14] *Վ. Ստուպիշին,* Իմ առաքելությունը Հայաստանում. 1992–1994 (Ռուսաստանի առաջին դեսպանի հուշերը): Ե., 2005, էջ 384:

[15] Տես ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4, Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 74–79:

միջոցների կատարելագործման և հակաօդային մասնագիտական վարպետության աճման շնորհիվ կաշկանդվում էին հակառակորդի գործողությունները նաև օդում: Ստեղծված պայմաններում հակառակորդի նոր ակտիվացումն սպասելի էր հարավարևելյան և հարավային ուղղություններում, քանի դեռ մարտունակ էին Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Զանգելանի ռազմական խմբավորումները, մանավանդ, որ Մարտունու, Աղդամի և Մարտակերտի, ինչպես նաև Օմարի և Լաչինի ուղղություններում հակառակորդի առաջխաղացման փորձերը կասեցվել էին:

ԼՂՀ ԻՊՈՒ-ի հրամանատարությունն իր հերթին պլանավորել էր Հադրութի ՊՇ-ում համառ պաշտպանական մարտերով հյուծել հակառակորդի հարվածային խմբավորումները, ապա անցնել վճռական հակահարձակման և լուծել հանրապետության հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգության խնդիրը, որը ծառացած էր դեռ 1992 թ. աշնանային ռազմարշավից ի վեր:

Հետ մղելով հրթիռահրետանային ու հետախուզական շարժունակ խմբերի հարձակումներով ուղեկցվող ուժեղ ճնշումը՝ ԻՊՈՒ-ի ստորաբաժանումները 1993 թ. օգոստոսի 15-ին[16] հակահարձակման անցան հարավային ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ նպատակ ունենալով ազատագրել Հադրութի շրջանի բռնազավթված բնակավայրերը և ճնշել հակառակորդի կրակակետերը:

Հետախուզական տվյալների վերլուծությունից հայտնի էր դարձել, որ հայկական զորամասերի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով հակառակորդը մարտական տագնապով ոտքի է հանել Ջաբրայիլի, Ֆիզուլու, Կուբաթլուի, Զանգելանի հենադաշտերում կենտրոնացված բոլոր զինված կազմավորումները[17]: Հաշվի առնելով այդ օպերատիվ տեղեկույթը և վերադասավորելով կենդանի ուժն ու միջոցները՝ 1993 թ. օգոստոսի 22-ին ԼՂՀ ԻՊՈՒ-ի ստորաբաժանումները հակահարձակման անցան Ֆիզուլի–Ջաբրայիլ–Կուբաթլու օպերացիոն ուղղություններով[18] և նույն օրը մտան Ֆիզուլի՝ անվտանգ դարձնելով ԼՂՀ արևելյան սահմանները[19]:

Նշենք, որ Կուբաթլուի շրջանում մարտերը մղվում էին մեծ դժվարությունների հաղթահարմամբ: Այս ճակատում, Բաշարաթ գյուղի ուղղությամբ Շուշիի ՊՇ ձեռնարկած զորաշարժը մեծապես նպաստեց հակառակորդի դիմադրության ընկճմանը, ուստի արժանի է հատուկ ուսումնասիրության:

Օպերացիայի անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգա-

[16] Տես նույն տեղում, թ. 75:

[17] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ № 150, л. 45:

[18] ԼՂՀ ՊՆԱ, Հադրութի ՊՇ. ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ. - 26.09.1993 թ., քարտեզ № 22, գույք № 210, Օպերատիվ բաժնի աշխատանքային քարտեզ. Հադրութի ՊՇ. հուլիս-օգոստոս, քարտեզ № 21, գույք № 206:

[19] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4, л. 75:

մանքով, որ Կուբաթլուի շրջանում ամրացած հակառակորդը մշտապես սպառնում էր Լաչինի միջանցքի անվտանգությանը: Այս փաստը չի ուրացել անգամ ադրբեջանցի փորձագետը. «Դրանով (օգոստոսի 31-ին Կուբաթլու շրջկենտրոնին տիրելով.– *Մ. Հ.*) վերացվեց լաչինյան միջանցքը շրջափակելու մեկ և կես տարվա ընթացքում ադրբեջանական բանակի պահպանած սպառնալիքը»[20]:

Ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել, որ Հադրութի շրջանի բռնազավթված մասի ազատագրման, նշված շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան օպերացիան ունեցել է ռազմավարական նշանակություն: Վերացվել է ԼՂՀ հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ–Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվել են վտանգավոր զորակայանները, ջախջախիչ պարտության մատնվել դրանցում կուտակված թշնամական խմբավորումները, ընդլայնվել է Արցախի շուրջ ստեղծված անվտանգության գոտին, և ԻՊՈՒ-ն հաստատվել է ծրագրված բնագծերում: Ռազմական ու բարոյահոգեբանական հարվածներ ստացած Ադրբեջանը ստիպված է եղել համաձայնել բանակցությունների սեղանի շուրջ նստելու ռուսական առաջարկություններին[21]:

ԼՂՀ ԻՊՈՒ-ի ստորաբաժանումները, հետապնդելով ճողոպրող թշնամուն, կանգ են առել Իրանի սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչը նշանակում էր, որ իրականություն էր դառնում ռազմաճակատի գիծը կարճելու մտահղացումը:

Քանի որ Քարվաճառի ազատագրման առաջին օպերացիան բավական ուսումնասիրված է՝ դիտարկենք միայն երկրորդ օպերացիայի պատմագրությունը:

Օպերացիայի մասին գրած հեղինակներն ընդգծել են Քարվաճառի օպերացիայի կարևորությունը հայկական պետականության անվտանգության և դրա երաշխավոր զինված ուժերի մարտունակության գնահատման համար[22]:

Մեր կարծիքով՝ ոչ բավարար ուշադրություն է հատկացվել Արկադի Շիրինյանի հրամանատարությամբ հակահարձակման անցած՝ Մարտակերտի ՊՇ զումարտակներից մեկի համարձակ տարաշարժին, որը հնարավորություն տվեց շրջանցելու Մռավի ձյունածածկ լեռնաշղթան և փակելու Օմարի լեռնանցքը՝ հակառակորդին կտրելով իր թիկունքից և նրան զրկելով ոչ

[20] Տես *Дж. Араслы.* Армяно-азербайджанский конфликт (военный аспект). Баку, 1995, с. 41:

[21] Տես *В. Казимиров.* Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. М., 2009, с. 99:

[22] Տես *Հ. Խաչատրյան, Գ. Ղազարյան, Ս. Մարգարյան,* Նշ. աշխ., էջ 152, *Վ. Հայրապետյան,* Տաղանդավոր զորավար գեներալ-լեյտենանտ Հրաչյա Հմայակի Անդրեասյանի հիշատակին: «ՀԲ», 2015, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2015/11/pdf-hb-n3-2015.pdf):

միայն համալրումներ ստանալու, այլև նույնիսկ մեծ ուժերով նահանջելու հնարավորությունից[23]:

Օպերացիայի պատմական նշանակությունը գրեթե միահամուռ կերպով արժանացել է բարձր գնահատականի, որովհետև այդ հաղթանակի շնորհիվ իսկապես լուծվել են օպերատիվ-մարտավարական, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ:

Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը կարևոր նպաստ է ունեցել Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ՊԲ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու և շրջապատման սպառնալիքը վերացնելու առումներով[24]: Վերահսկողություն է սահմանվել ռազմավարական դիրք ունեցող Օմարի լեռնանցքի՝ մեր հանրապետության հյուսիսարևմտյան բնական սահմանի վրա՝ հակառակորդի նկատմամբ ապահովելով դիրքային առավելություն: Գլխովին ջախջախվել է ամիսներ ի վեր կուտակված թշնամական զինուժը, շարքից հանվել կամ առգրավվել են մեծ քանակությամբ տեխնիկա, զենք ու զինամթերք: Ադրբեջանցիները խոսում են 4000-ից ավելի զինվոր կորցնելու մասին[25]:

Համեմատելով պատերազմող կողմերի ԶՈՒ-երի անձնակազմերի բարոյահոգեբանական ու քաղաքական գիտակցության վիճակները և դաժան ձմռան պայմաններում մարտնչելու պատրաստակամությունները՝ Ի. Ղուկասովը շեշտել է այդ առումներով հայկական բանակի գերազանցությունը[26]:

Այսպիսով՝ Արցախյան պատերազմի պատմագրության հիմնահարցերը հայտնվել են ուսումնասիրողների հետաքրքրությունների առանցքում՝ մեր պետության անվտանգության խնդիրների պաշտոնական ու փորձագիտական մակարդակներով կատարվող քննարկումներին զուգահեռաբար: Ակնհայտ է, որ գիտատեսական նշանակություն ստացած այդ հիմնահարցերի լուսաբանումը պահանջված է ոչ միայն ռազմական գիտության զարգացման, այլև ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ու Թուրքիայի սանձազերծած տեղեկութային պատերազմին հակազդեցություն գործելու տեսակետից:

---

[23] Տես *Մ. Հարությունյան,* Ազատ լեռների կանչը: «Մարտիկ», 1995 թ. մարտի 8-15, հմ. 10:

[24] Տես ՊԲ վարչության գրասենյակային ծառայություն, «ԼՂՀ ՊԲ հրամանատարի հրամաններ. 1994 թ.», հրաման հմ. 19 առ 12 մարտի 1994 թ.:

[25] Տես *Idrak Abbasov, Jasur Mamedov.* Azeri Veterans Recall Military Fiasco. “Institute for War & Peace Reporting”, 21 February 2004 (https://iwpr.net/global-voices/azeri-veterans-recall-military-fiasco); նաև՝ *И. Аббасов, Дж. Мамедов.* Азербайджанские ветераны вспоминают военное фиаско. «Кавказский Узел», 28 февраля 2004 (https://www.kavkaz-uzel.eu/articles/51573/):

[26] Տես *И. Гукасов.* Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян. Ростов-на-Дону, 2001, с. 37:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

О НЕКОТОРЫХ СПОРНЫХ ВОПРОСАХ В ИСТОРИОГРАФИЧЕСКОМ ОСВЕЩЕНИИ ВАЖНЫХ ОПЕРАЦИЙ В АРЦАХСКОЙ ВОЙНЕ

М. А. АРУТЮНЯН, майор запаса, кандидат исторических наук, доцент, руководитель научного центра «Качар» (Республика Арцах)

РЕЗЮМЕ

Несмотря на то, что отдельные эпизоды Арцахской войны получили освещение во многих трудах армянских исследователей, однако так и не была создана единая всеохватывающая картина военной фазы национально-освободительной борьбы в аспекте военного искусства. Даже в отношении наиболее важных операций, таких, как освобождение Шуши, подавление военной базы и огневых точек в районе Агдама, Физули, Джабраила и Кубатлы, разгром вторгшейся в северо-западные приделы Республики Арцах крупной группировки противника на перевале Омара, существуют различия в фактах, приводимых различными авторами в их оценках численности участников боев, направлений главного удара, потерях своих и противника. В то же время большинство авторов в принципе сходятся в стратегической оценке значения этих операций и их влияния на ход и благополучный исход войны.

В то же время уточнение данных и более глубинный стратегический анализ этих операций и всего хода войны необходимы в контексте дальнейшего обеспечения военной безопасности Республики Арцах и ее населения.

MILITARY HISTORY

ON SOME DISPUTABLE ISSUES IN THE HISTORIOGRAPHICAL COVERAGE OF IMPORTANT OPERATIONS IN THE ARTSAKH WAR

M. A. HARUTYUNYAN, Major (ret.), PhD in History, Associate Professor, Head, Katchar Research Center (Republic of Artsakh)

SUMMARY

Despite the fact that certain episodes of the Artsakh have been covered in numorous works by Armenian researchers, however, there was not created any comprehensive picture of the military phase of the national liberation struggle in the aspect of the art of war. Even facts cited

by various authors regarding the most important operations, such as the liberation of Shushi, the neutralization of the military base and weapon emplacements in Agdam District, Fizuli, Jabrail and Kubatly, the defeat of a large adversary group invading the north-western side of the Republic of Artsakh at the Omar pass, differ in the assessments of the number of combatants, directions of the main attack, causalities of their own and of the adversary's. At the same time, most authors on the whole agree on the strategic assessment of the significance of these operations and their influence on the course and favourable outcome of the war.

In addition to that, data refinement and a deeper strategic analysis of these operations and the entire course of the war are required in the context of further ensuring of the military security of the Republic of Artsakh and its population.

ՏԱՆԿԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

	S-90Ս	S-80 Ու	Մ1Ա2 «Աբրամս»	ԳՏՋ-99Ա2	«Չելենջեր-2»	«Լեոպարդ-2» 2Ա6Մ	«Լեկլերկ» ԱՄՐ քս-56	«Մերկավա» Մկ4
1	2	3	4	5	6	7	8	9
Արտադրող	Ռուսաստան	Ռուսաստան	ԱՄՆ	Չինաստան	Մեծ Բրիտանիա	Գերմանիա	Ֆրանսիա	Իսրայել
Սպառազինության մեջ ընդունելու տարին	2005	1985	1981	2001	1995	1979	1983 –1989	2004
Մարտական զանգվածը, տ	46,2	46,0	62,1	54,0	62,5	63,0	54,5	70,0
Իրանի երկարությունը, մմ	9530	7012	7920	7925	8300	7700	9870	7450
Իրանի լայնությունը, մմ	3780	3603	3480	3372	3520	3700	3600	3720
Բարձրությունը, մմ	2230	2215	2440	2200	2490	2790	2530	2660
Անձնակազմը, մարդ	3	3	4	3	4	4	3	4
Թնդանոթի տրամաչափը, մմ	125	125	120	125	120	120	120	120
Համայնապատ-կերային նշանոցը	–	–	+	+	SFIM VS-580	PERI -R-12	SFIM VS-580	+
Կառավարվող սպառազինություն-յունը	«Ռեֆ-լեքս-Մ»	«Ռեֆ-լեքս-Մ» – 9Կ119 (մինչև 1990թ.) ԻՆՎԱՐ-9Կ119Մ (1990-ից հետո)	–	«Ռեֆ-լեքս»	–	–	–	ԼԱՀԱՏ
Զինամթերքի մարտալրակազմը	43	45	42	41	52	42	40	48

1	2	3	4	5	6	7	8	9
Արագաձգությունը, կրակոց րոպեում	7	8	?	7	?	?	10-12	?
Դինամիկական պաշտպանություն	«Կոն-տակտ-5»	«Կոն-տակտ-5»	ՏՈՒՍԿ ԱՌԱՏ ԱՆ/ՎԼՔ-6	+	PSO/ WAR	+	–	+
Ակտիվ պաշտպանություն	«Շտոր-ա-1»	–	MCD/ Տրոֆի	ՋՂ-3	–	MUSS 2A7 2A5 2A6	–	Կիսա-ակ-տիվ NERA
Շարժիչի հզորությունը, ձիաուժ	1000	1250	1500	1500	1200	1500	1500	1500
Տեսակարար հզորությունը, ձիաուժ/տ	21,5	21, 7	23,8	27,8	19,2	24,2	27,52	21,4
Առավելագույն արագությունը, կմ/ժ	60 … 70	70	67	70	65	72	72	70
Ընթացապաշարը խաչուղով, կմ	550 … 700	350	425	450	550	500	550	500

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, լեյտենանտ,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազատականացում – либерализация – liberalization

ԱԹԱ – տես *անօդաչու թռչող ապարատ*

անցանելիություն – проходимость – passability

անցունակություն – проходимость – passing ability, flotation

անօդաչու թռչող ապարատ – беспилотный летательный аппарат, БПЛА – unmanned aerial vehicle, UAV

աշխատակարգ – режим – regime

առադրում – сопоставление – comparison, collation

արագաձգություն – скорострельность – rafe of fire

արտագրոհ – вылазка – sortie

արևային կոլեկտոր – солнечный коллектор – solar collector

բազմաբևեռ աշխարհակարգ – многополярный миропорядок – multipolar world order

բազմազանեցում – диверсификация – diversification

բանակային առաջավարություն – армейское лидерство – army leadership

բանելակարգ – режим – mode

բարոյական հասունություն – морально-нравственная зрелость – moral maturity

բարոյահոգեբանական պատրաստություն – морально-психологическая готовность – moral and psychological readiness

բեռնարգելանք – эмбарго – embargo

բնակչություն – население – population

– բնակչության գիտակցականություն – сознательность населения – consciousness of the population

– բնակչության տեղաբաշխում – размещение населения – distribution of population

գժտություն – конфликт – conflict

դիմակայություն – противостояние – opposition

դյուրադարձություն – поворотливость – agility

դրվածքային հզորություն – установочная мощность – generating capacity

եվրասիականություն – евразийство – Eurasianism

զինվորական – 1. военный, 2. воинский – 1. servicemen, 2. military

զորակայան – 1. военная база 2. стоянка – 1. military base, 2. station

զորաշարժ – маневр войск – maneuver of forces, maneuver of troops, forces maneuver

ընթացակարգ – процедура – procedure

ընթացապաշար – запас хода – endurance, cruising range

ընթացքի պաշար – տես *ընթացապաշար*

թվակազմ – контингент – contingent

ինստիտուտ – 1. институт, 2. տես *հաստատություն 2*, 3. տես *սահմանակարգ* – 1. institute, 2. տես *հաստատություն 2,* 3. տես *սահմանակարգ*

ինքնագնաց – самоходный – self-

propelled
– ինքնագնաց հրանոթ – самоходное орудие – self-propelled gun, SPG
– ինքնագնաց հրետանային կայանք – самоходная артиллерийская установка, САУ – self-propelled artillery installation
ինքնավերահսկման կարողություն – способность к самоконтролю – ability to self-control
խաղաղապահական առաքելություն – миссия по поддержанию мира – peacekeeping mission
խաղաղարարական օպերացիա – миротворческая операция – peacemaking operation
խորհրդարանական մշակույթ – парламентская культура – parliamentary culture
խորհրդարանականության քաղաքական մշակույթ – политическая культура парламентаризма – political culture of parliamentarism
խտարար – конденсор – condenser
ծակատունակություն – пробивающая способность – penetrating capacity, penetration capability, penetrability
հակամարտություն – конфликт – conflict
համատարած ընտրանք – сплошная выборка – continuous sampling
համընդհանրացում – глобализация – globalization
հանրութային ընկերակցություն – социетальное сообщество – non-profit organization
հասարակայնություն – общественность – the public, community
հաստատություն – 1. заведение, 2. институт – 1. institute, 2. institution
հեռահարություն – дальность стрельбы, дальнобойность – range
հոգեբանական – психологический
– հոգեբանական կարծրատիպ – психологический стереотип – psychological stereotype
– հոգեբանական ցնցակաթված – психологический шок – psychic shock
հողմաէլեկտրակայան – ветряная электростанция – wind farm
հողմակայան – տես *հողմաէլեկտրակայան*
հողմանիվի առանցքակալ – подшипник ветроколеса – wind wheel bearing
ձեռներեցություն – предпринимательство – business activity, entrepreneurship
մշտագնում – мониторинг – monitoring
նշանացուցում – целеуказание – target designation, target indication, targeting
նշանոց – прицел – sight, gunsight, rear sight
շարժառիթավորում – мотивация – motivation
շարժիչ – двигатель – engine
– շարժիչի անխափանություն – безотказность двигателя – engine reliability
– շարժիչի եզրաչափքային հզորություն – габаритная мощность двигателя – power-to-weight ratio
շարժունակ խումբ – мобильная группа – mobile group
պաշտպանությանը պետության պատրաստում – подготовка государства к обороне – preparation of the state for defense
պաշտպանունակություն – обороноспособность – defensive capacity
պատգամավորական վարքականոն – депутатская этика – code of conduct for members of parliament
պատերազմ – война – war
պատերազմական – տես *ռազմական 2*
պատմության կեղծարար – фальсификатор истории – falsifier of history

պատրաստակամություն – готовность – readiness, willingness
պատրաստություն – готовность – readiness
պետական կազմակերպվածք – организационная структура государства – state organization, public organization
պոչաթևավոր ենթատրամաչափային զրահահար արկ – бронебойный оперённый подкалиберный снаряд – armour-piercing fin-stabilized discarding sabot
ջերմավորման հանգույց – теплофикационный узел – heating unit
ռազմակայան – ставка – general headquarters
ռազմական – военный – 1. military, 2. martial, 3. war
ռազմահենադաշտ – плацдарм – bridgehead
ռազմարշավ – 1. военная кампания, 2. военная экспедиция – 1. military campaign, 2. expedition
սահմանակարգ – институт – institution
սահմանային սխալի գործակից – ошибка выборки – sampling error
սարքավորանք – оборудование – equipment, hardware, installation
սարքավորում – оборудование – equipping, equipment
վերգետնյա ռազմական տեխնիկա – надземная военная техника – overground weapon
վեցագլդոն ընթացամաս – шестикатковая ходовая часть – six road wheel drive, 6WD chassis
վրագետնյա ռազմական տեխնիկա – наземная военная техника – ground weapons
տարաշարժունություն – маневренность – maneuverability
տարատեսակում – диверсификация – diversification
տեղեկատվական – информационный – information
– տեղեկատվական անվտանգություն – информационная безопасность – information security
– տեղեկատվական ընդդիմամարտություն – տես *տեղեկատվական պատերազմ*
– տեղեկատվական հոսք – поток информации – information flow
– տեղեկատվական պատերազմ – информационная война – information warfare, battle of narratives
տեղեկատվություն – информация, информирование – information, informing
տեղեկութահոգեբանական ներգործություն – информационно-психологическое воздействие – informational and psychological influence
տեղեկութային – информационный – information
– տեղեկութային անվտանգություն – информационная безопасность – information security
– տեղեկութային պատերազմ – информационная война, информационное противоборство – information warfare
տեղեկույթ – информация – information
տեսակ – вид – mode
տնտեսության ինքնաբավություն – самодостаточность экономики – self-sufficiency of economy
ուժային կայանք – силовая установка – powerplant
փոխլրացման քաղաքականություն – политика комплементарности – complementary policy
քաղաքական առաջավար – политический лидер – political leader
ֆոտովոլտային կայան – фотовольтаическая электростанция – photovoltaic power station

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

армейское лидерство – բանակային առաջավարություն
беспилотный летательный аппарат – անօդաչու թռչող ապարատ, ԱԹԱ
БПЛА – см. *беспилотный летательный аппарат*
бронебойный оперённый подкалиберный снаряд – պոչաթևավոր ենթատրամաչափային զրահահար արկ
ветряная электростанция – հողմաէլեկտրակայան, հողմակայան
вид – տեսակ
военный – 1. զինվորական, 2. ռազմական, պատերազմական
– военная база – զորակայան
– военная кампания – ռազմարշավ
– военная экспедиция – ռազմարշավ
воинский – զինվորական
война – պատերազմ
вылазка – արտագրոհ
глобализация – համընդհանրացում
готовность – 1. պատրաստություն, 2. պատրաստակամություն
дальнобойность – см. *дальность стрельбы*
дальность стрельбы – հեռահարություն – range
двигатель – շարժիչ
– безотказность двигателя – շարժիչի անխափանություն
– габаритная мощность двигателя – շարժիչի եզրաչափքային հզորություն
депутатская этика – պատգամավորական վարքականոն
диверсификация – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
евразийство – եվրասիականություն
заведение – հաստատություն, ինստիտուտ
запас хода – ընթացապաշար, ընթացքի պաշար
институт – 1. ինստիտուտ, 2. հաստատություն, 3. սահմանակարգ
информационный – 1. տեղեկութային, 2. տեղեկատվական
– информационная безопасность – 1. տեղեկութային անվտանգություն, 2. տեղեկատվական անվտանգություն
– информационная война – 1. տեղեկութային պատերազմ, 2. տեղեկատվական պատերազմ, տեղեկատվական ընդդիմամարտություն
– информационное противоборство – տես *информационная война 2*
информационно-психологическое воздействие – տեղեկութահոգեբանական ներգործություն
информация – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն
– поток информации – տեղեկատվական հոսք
информирование – см. *информация 2*
конденсор – խտարար
контингент – թվակազմ
конфликт – 1. հակամարտություն, 2. գժտություն
либерализация – ազատականացում
маневр войск – զորաշարժ
маневренность – տարաշարժունություն
миротворческая операция – խաղաղարարական օպերացիա
миссия по поддержанию мира – խաղաղապահական առաքելություն
многополярный миропорядок – բազմաբևեռ աշխարհակարգ
мобильная группа – շարժունակ խումբ
мониторинг – մշտազննում
морально-нравственная зрелость – բարոյական հասունություն
морально-психологическая готовность – բարոյահոգեբանական պատրաստություն
мотивация – շարժառիթավորում

надземная военная техника – վերգետնյա ռազմական տեխնիկա
наземная военная техника – վրագետնյա ռազմական տեխնիկա
население – բնակչություն
– размещение населения – բնակչության տեղաբաշխում
– сознательность населения – բնակչության գիտակցականություն
обороноспособность – պաշտպանունակություն
оборудование – 1. սարքավորանք, 2. սարքավորում
общественность – հասարակայնություն
организационная структура государства – պետական կազմակերպվածք
ошибка выборки – սահմանային սխալի գործակից
парламентская культура – խորհրդարանական մշակույթ
плацдарм – ռազմահենադաշտ
поворотливость – դյուրադարձություն
подготовка государства к обороне – պաշտպանությանը պետության պատրաստում
подшипник ветроколеса – հողմանիվի առանցքակալ
политика комплементарности – փոխլրացման քաղաքականություն
политический – քաղաքական
– политическая культура парламентаризма – խորհրդարանականության քաղաքական մշակույթ
– политический лидер – քաղաքական առաջավար
предпринимательство – ձեռներեցություն
прицел – նշանոց
пробивающая способность – ծակատունակություն
противостояние – դիմակայություն
проходимость – 1. անցանելիություն, 2. անցունակություն
процедура – ընթացակարգ
психологический – հոգեբանական
– психологический стереотип – հոգեբանական կարծրատիպ
– психологический шок – հոգեբանական ցնցակաթված
режим – 1. աշխատակարգ, 2. բանելակարգ
самодостаточность экономики – տնտեսության ինքնաբավություն
самоходный – ինքնագնաց
– самоходная артиллерийская установка – ինքնագնաց հրետանային կայանք
– самоходное орудие – ինքնագնաց հրանոթ
САУ – см. *самоходная артиллерийская установка*
силовая установка – ուժային կայանք
скорострельность – արագաձգություն
солнечный коллектор – արևային կոլեկտոր
сопоставление – առադրում
социетальное сообщество – հանրութային ընկերակցություն
сплошная выборка – համատարած ընտրանք
способность к самоконтролю – ինքնավերահսկման կարողություն
ставка – ռազմակայան
стоянка – զորակայան
теплофикационный узел – ջերմավորման հանգույց
установочная мощность – դրվածքային հզորություն
фальсификатор истории – պատմության կեղծարար
фотовольтаическая электростанция – ֆոտովոլտային կայան
целеуказание – նշանացուցում
шестикатковая ходовая часть – վեցգլդոն ընթացամաս
эмбарго – բեռնարգելանք

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ability to self-control – ինքնավերահսկման կարողություն
agility – դյուրադարձություն
armour-piercing fin-stabilized discarding sabot – պոչաթևավոր ենթատրամաչափային զրահահար արկ
army leadership – բանակային առաջավարություն
battle of narratives – see *information warfare 2*
bridgehead – ռազմահենադաշտ
business activity – ձեռներեցություն
code of conduct for members of parliament – պատգամավորական վարքականոն
collation – see *comparison*
community – see *the public*
comparison – առադրում
complementary policy – փոխլրացման քաղաքականություն
condenser – խտարար
conflict – 1. հակամարտություն, 2. գժտություն
contingent – թվակազմ
continuous sampling – համատարած ընտրանք
cruising range – see *endurance*
defensive capacity – պաշտպանունակություն
diversification – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
embargo – բեռնարգելանք
endurance – ընթացապաշար, ընթացքի պաշար
engine reliability – շարժիչի անխափանություն
entrepreneurship – see *business activity*
equipment – 1. սարքավորանք, 2. see *equipping*
equipping – սարքավորում
Eurasianism – եվրասիականություն
expedition – ռազմարշավ
falsifier of history – պատմության կեղծարար
flotation – see *passing ability*
forces maneuver – see *maneuver of forces*
general headquarters – ռազմակայան
generating capacity – դրվածքային հզորություն
globalization – համընդհանրացում
ground weapons – վրագետնյա ռազմական տեխնիկա
gunsight – see *sight*
hardware – see *equipment 1*
heating unit – ջերմավորման հանգույց
information – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն, 3. տեղեկութային, 4. տեղեկատվական
– information flow – տեղեկատվական հոսք
– information security – 1. տեղեկութային անվտանգություն, 2. տեղեկատվական անվտանգություն
– information warfare – 1. տեղեկութային պատերազմ, 2. տեղեկատվական պատերազմ, տեղեկատվական ընդդիմամարտություն
informational and psychological influence – տեղեկութահոգեբանական ներգործություն
informing – see *information 2*
installation – see *equipment 1*
institute – ինստիտուտ
institution – 1. հաստատություն, 2. սահմանակարգ
liberalization – ազատականացում
maneuverability – տարաշարժունություն
maneuver of forces – զորաշարժ
maneuver of troops – see *maneuver of forces*
martial – ռազմական
military – 1. զինվորական, 2. ռազմական

military base – զորակայան
military campaign – ռազմարշավ
mobile group – շարժունակ խումբ
mode – 1. բանելակարգ, 2. տեսակ
monitoring – մշտազննում
moral and psychological readiness – բարոյահոգեբանական պատրաստություն
moral maturity – բարոյական հասունություն
motivation – շարժառիթավորում
multipolar world order – բազմաբևեռ աշխարհակարգ
opposition – դիմակայություն
overground weapon – վերգետնյա ռազմական տեխնիկա
parliamentary culture – խորհրդարանական մշակույթ
passability – անցանելիություն
passing ability – անցունակություն
peacekeeping mission – խաղաղապահական առաքելություն
peacemaking operation – խաղաղարարական օպերացիա
penetrability – see *penetrating capability*
penetrating capacity – ծակատունակություն
penetration capability – see *penetrating capacity*
photovoltaic power station – ֆոտովոլտայիկ կայան
political – քաղաքական
– political culture of parliamentarism – խորհրդարանականության քաղաքական մշակույթ
– political leader – քաղաքական առաջավար
population – բնակչություն
– consciousness of the population – բնակչության գիտակցականություն
– distribution of population – բնակչության տեղաբաշխում
powerplant – ուժային կայանք
UAV – see *unmanned aerial vehicle*
power-to-weight ratio – շարժիչի եզրաչափքային հզորություն
preparation of the state for defense – պաշտպանությանը պետության պատրաստում
procedure – ընթացակարգ
psychic shock – հոգեբանական ցնցակաթված
psychological stereotype – հոգեբանական կարծրատիպ
public organization – see *state organization*
range – հեռահարություն
rate of fire – արագաձգություն
readiness – 1. պատրաստություն, 2. պատրաստակամություն
rear sight – see *sight*
regime – աշխատակարգ
sampling error – սահմանային սխալի գործակից
self-propelled – ինքնագնաց
– self-propelled artillery installation – ինքնագնաց հրետանային կայանք
– self-propelled gun – ինքնագնաց հրանոթ
self-sufficiency of economy – տնտեսության ինքնաբավություն
serviceman – զինվորական
sight – նշանոց
six road wheel drive – վեցագլդոն ընթացամաս
societal community – հանրութային ընկերակցություն
solar collector – արևային կոլեկտոր
sortie – արտագրոհ
SPG – see *self-propelled gun*
state organization – պետական կազմակերպվածք
station – զորակայան
target designation – նշանացուցում
target indication – see *target designation*
targeting – see *target designation*
the public – հասարակայնություն
unmanned aerial vehicle – անօդաչու

թռչող ապարատ
war – 1. պատերազմ, 2. ռազմական, պատերազմական
willingness – see *readiness 2*
wind farm – հողմաէլեկտրակայան, հողմակայան
wind wheel bearing – հողմանիվի առանցքակալ
6WD chassis – see *six road wheel drive*

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները՝ ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,* ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2019 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica» և «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության
և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության միջև
2020 թ. համագործակցության պլանի ստորագրումը.

աջից՝ ՀՀ Պաշտպանության նախարար *Դավիթ Տոնոյան,*
ձախից՝ ՌԴ Պաշտպանության նախարար, բանակի գեներալ
Սերգեյ Շոյգու

Երևան, 2019 թ. հոկտեմբերի 29

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 4 (102). 2019